



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

OL 41856.13

Hadjian

Hin auandakan hēqeathner Kho-  
ordshrots

OL 41856.13



HARVARD  
COLLEGE  
LIBRARY







Հ Ի Ն

# ԱՒԱՆԴԱԿԱՆ ՀԵՔԵԱԹՆԵՐ

## ԽՈՏՈՐՋՐՈՅ

ՀԱՌԱԳԵՑ

Գ. Խ. Գ Ա Մ Կ Ա Մ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԻՑԵՆ



Վ Ի Ե Ն Ն Ա

Ի ՎԱՆՍ ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1907.



Հ Ի Ն

# ԱՒԱՆԻԱԿԱՆ ՀԷՔԵԱԹՆԵՐ ԽՈՏՈՐՋՐՈՅ

ՀԱՒԱԳԵՑ

Է. Մ. Է Ա Մ Ի Ա Մ

ՄԻԹԱՐԵԱՆ ՈՒԻՏԵՆ




Վ Ի Ե Ն Ն Ա

Ի ՎԱՆՍ ԳԱՀՏԳԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1907.

O.L. 41856.13

✓



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Գեղիս մէջ քսանուհինգ-երեսուն տարի առաջ հին պարզ տներու մէջ, ճմեռուան երկար զիշերներն թոնրին շուրջ կը բոլորէին քսան-քսանուհինգ հոգի, ձեռուրնին մէմէկ մատման կամ մէմէկ գուլպայ՝ մաշալային\* լուսովն արագ արագ բանէին: Աս միջոցիս իրենց մէջէն ծերունի մը կամ մորոյ մը սոյն հէքեաթներէս առաջ կը բերէր ու կը պատմէր, այնպէս որ ներկայից սրտերն կը գրաւուէին ու ժամանակն կ'անցնէր: Իսկ հիմայ երեք-չորս դստիկոն տներու մէջ, քաղաքի նման կահաւորուած սենեակներն՝ Վիեննայի, Փարիզի ու Լոնտոնի փառաւոր կանթեղներու դիւթիչ լուսովն կը կարդացուին առհասարակ Կ. Պոլսոյ Լրագիրներն, Վիեննայի, Վենետիկոյ եւ այլ տեղեաց կրօնա-կան եւ ուսումնական գրքերն ամէն ուրեք:

Մենք այն հին յիշատակներն անմոռաց պահելու համար, ուզեցինք տպագրութեամբ հանրութեան ընծայել սոյն աւանդական հէքեաթներս իրենց ծանօթութիւններով մէկտեղ ու իրենց յատուկ գիւղական լեզուաւ:

Գրեցաւ ի ԽոտորՋուր

Վերի Խնդածոր ի Թաղն Կողոսուն

1904—1906, Ե. 20:

\* Մաշալայ, երեք ոտքի վրայ յեցած բարձր փայտ մը, որուն զլուին հաստատուած է խեցատ մը (կոտրած քաղթայ, սկաւառակ), որուն մէջ կը քաղեն քիչ քիչ մանր ջարդուած մահիւրներ (չըրայ, կուի կամ փծփ գէտ փայտ) ու կը վառեն, որ լոյս տայ բոլոր տունն: Մաշալան հիմայ աւ գործ կ'ածեն տեղ տեղ, մանաւանդ հարսանեաց պարի մէջ՝ զիշեր ժամանակ:

5. 14.



# ՀԻՆ ԱՒԱՆԳԱԿԱՆ ՀԷՔԵԱԹՆԵՐ

Ա.

## ՔՈՒՆ ԸԼՆՈՂՆԵՐՈՒՆ ՀԷՔԵԱԹԸ<sup>1</sup>



եր պապինյն կասին թէ՛ մէկ օյմ իրեք հոգի կեննն գեղէն ու կերթան հեռու հեռու: Շատ կերթան քիչ կերթան, կու գան մէկ դուր<sup>2</sup> մը վայ նստին, պաշար կուտին, հանգչին ու մէկալ օյն ալ սայն պիտի անցնին:

Ըն տեղ<sup>3</sup> որ նստին, ինչ կընի ինչ չընի մէ մալ վերեւի սայն կինջնու իրենց վրայ, էման<sup>4</sup> որ իրենք մէջն կը մնան քոփի<sup>5</sup> պէս. մէ պիծի ծակմ կը մնայ դուս ելնելու:

<sup>1</sup> Սոյն հէքեաթս շատ յար եւ նման է գերմանական հէքեաթի մը, զոր հերու «Արեւելք» օրագրի մէջ կարգացինք. երեք գործաւորներն, որոնց բովի մէջ բանելու ժամանակն սարը կը փլչի, տակը կը մնան եւ յետոյ կ'ազատին:

<sup>2</sup> Դուր, շիտակ, հարթ, տափաստան: Բ. նշանակ. Գործի՛ փայտ փորքելու կամ ծակելու: — <sup>3</sup> ... Որ նստին, նստելու ժամանակ: — <sup>4</sup> Էման որ, այնպէս որ: — <sup>5</sup> Քոփ, որջ, արջու կամ դայլու բնակարան:


Մէկ ընկերն պառկի վարն ու կասայ. Ես քուն կըլնիմ տէրոր<sup>1</sup> էգուան<sup>2</sup>: Մէկն ալ ետ լըրխի<sup>3</sup> ու կասայ. Ես քուն կըլնիմ տէրոր եկող տարի աս վախթս: Մէկան ալ պառկի ու կասայ. Ես քուն կըլնիմ մինչուկ աշխարհքիս վերջ:

Էն որ ասաց թէ ես քուն կըլնիմ մինչուկ էգուց, առաւօտ եղաւ չեղաւ զարթեցաւ, վեր թռաւ տեղէն, ինջաւ գեղն խապար տուաւ. Գիտէք, ինչ եղած ասաց, մենք իրեք ընկերք էանք, ճամբայ կերթայանք, տեղմ եկանք հանգչեցանք. մէմալ սայն մեր վըայ փլաւ, մենք սաղ<sup>4</sup> մնայինք մէջն ու մէ ծակմ մնաց Կուս ելնելու. մէկս ասուցանք, Ես պառկիմ տէրոր էգուց. մէկս ալ ասեցանք, Ես պառկիմ տէրոր եկող տարի աս վախթս. մէկս ալ ասեցինք, Թախ աշխարհքիս կատարածն: Ես մէկ օր քուն եղայ ու եկայ ձեզի պատմեմ. թէ որ ինծի չէք աւտալ<sup>5</sup>, եկէք երթանք, ձեր աչքով տեսէք:

Գեղէն մէ քանիմ սրտոտ մարդիկ կեննն կերթան հետն: Հասնին որայ<sup>6</sup> էն տեղ՝ նե մտնուն մաղարէն<sup>7</sup>. կաշին<sup>8</sup> որ երկու հոգի պառկած ին. հուն կակնին զօր գիշեր<sup>9</sup>, տեսնուն թէ՛ շետակ աս թէ սուտ: Տարիմ որ թամամի<sup>10</sup>, էն երկրորդ ընկերն ալ կու զայթի, վեր կենայ: Բովի պահապանք կասեն. Ժօ, ատ ինչ պառկիլ աս, էհէն<sup>11</sup> տարիմ աս քեզի մնանք: — Հըմ, տարիմ պօլ աս թէ. ըմպայ<sup>12</sup> իտա<sup>13</sup> իմ ընկեյս թախ աշխարհքիս վերջ քուն ըլնի պիտի, չէք աւտալ թէ<sup>14</sup>. տէ

<sup>1</sup> Տէրոր, մինչև: — <sup>2</sup> Էգուան կամ էգուց, վաղ: — <sup>3</sup> Լըրիել, ետ ընկնիլ, պառկիլ: — <sup>4</sup> Սաղ, ողջ: — <sup>5</sup> Աւտալ, հաւատալ, վստահիլ: — <sup>6</sup> Որայ, երբ որ: — <sup>7</sup> Մաղարայ, պր, խոռոչ: — <sup>8</sup> Աշին, նայիլ: — <sup>9</sup> Չօր գիշեր, գիշեր ցորեկ: — <sup>10</sup> Թամամի, լրանայ: — <sup>11</sup> Էհէն, ասաւասիկ: — <sup>12</sup> Ըմպայ, հաղպայ: — <sup>13</sup> Իտա, իտա, ինա. իտոնք, իտոնք, ինոնք, ասիկա: — <sup>14</sup> Այս գաւառաբարբառիս մէջ հարցական ամէն նախադասութեանց

հոտա՝ կահնեցեք, մինչուկ որ զայթի: Ըն պահապանք կահնած ին հուն դեռ, տեսնուն թէ ե՛րբ զարթի, որ աշխարհքիս վերջ զայ:



Բ.

ՂԱԶՃԻ ՏՂԻՆ ՀԷՔԵԱԹԸ

Օրբեւարի՝ կնիկմ կընի, մէհատիկ մանչ զաւակմ կուեննայ, համայ շատ խեռալ՝. մայն՝ ինչ փեշակի՝ որ կու տայ, չի կենալ, կեղնէ փախչի: Տանի թարգուն՝ մօտ՝ վայ դնայ, ուսթէն իրեն բան կու տայ ձեւելու՝, ինքն տուն կերթայ. մէկմալ կու գայ որ, դուքեանն՝ ինչոր կայ չկայ շորեյն՝ ձեւած ձեւրտած՝ ունի: Ծօ՛, իտա ի՛նչ էրած՝ ունիս, կասայ ուսթէն: — Ըմպայ դու ինծի իտման՝ շասիր թէ: — Գնա կորի, շան լակոտ, կասայ ու իրեն դուս կէնայ մօտէն:

Տղէն կու գայ տունն: Մայն կասայ. Օ՛րդի ուր՝ ե՛կ սք ինչի մէկ տեղմ դինջ՝ կենալ չիս, ինչո՞վ մենք պիտի ապրինք: — Բոյ՝ տունն ինչ որ կայ բեր տանիմ՝ ծախիմ, ասօր ուսիրնք, աշինք էգուան ինչ կընի: — Տիհայ՝ զաղն՝, ա՛ռ տար ծախսա, ասաց մայն:

վերջ Բե շաղկապն կաւելցուի, ինչպէս. կերթան թէ. հաց կ'ուտես թէ. գալ չի՛ն թէ:

1 Հագա, հոտա հունա, հոտ: — 2 Որբ եւ այրի, այրի. — 3 խեռալ, խնթ, չարածճիկ: — 4 Հատանգամ բներն յի են փոխուած, ինչպէս՝ մայն, հոյն, հոյս: — 5 Արուեստ: — 6 Գերձակ: — 7 Չափ կարել: — 8 խանութ: — 9 Հագուտա: — 10 Գեշ գեշ կարել: — 11 Ընել: — 12 Այգպէս: — 13 Ինչո՛ւ: — 14 խելք: — 15 Բոյ, մայրիկ, միայն կոչ. հու: — 16 Ահաւանիկ: — 17 Սագ:

Տղէն զազն տանի պազայն<sup>1</sup> ծախելու. էն տեղ թա-  
գաւորին սատրազանն ըստ<sup>2</sup> եկաւ, ջհուտ էր, ասաց .  
էտ ճնճղուզին<sup>3</sup> ինչ տամ: — Իսա ճնճղուզ ա թէ: —  
Ճնճղուզ չա, ըմպայ ինչ ի կայ: Շատ որ զօրեց<sup>4</sup> տղէն, ու-  
րիշ մարդիկ ասեցին. Ժժ, ինչ կէնես, իտա թագաւորին  
սատրազանն ա, մի վրայ ճվայ<sup>5</sup>, թէ չէ գլուխդ կը տանի  
քեզի: Էն ալ տեսաւ որ չիլի, տաս փարի ուն<sup>6</sup> տուաւ  
զազն ճնճղուզի տեղ, համայ մտքէն ասաց. կեցիր, ես  
քու հախէդ կու գամ:

Կերթայ տունն շուարած<sup>7</sup>, հէչ խօսիլ չի. բռչէ<sup>8</sup> շոր  
կու հագուի ու կերթայ սատրազանին տուն օղորմու թիւն  
ուզելու: Հուն կիմանայ որ սատրազանն կնոջն կասայ. Իսա  
զազս լաւ էփես, օսկեցայ թեփսուն մէջ դրած, քրման<sup>9</sup>  
շալն վրէն, սահաթն օխտին ղրկես, թագաւորին հետ ի  
միասին վայլենք: Տաս փարայ կու տան տղին, կառնու,  
խնտումով<sup>10</sup> դուս թռչի:

Վախտն որ կըլի, էն սահաթին տղէն կու գայ  
սատրազանին դուռն կակնի, հագած կապած, կնոջը կա-  
սայ. Աղէն կասէր թէ՛ էփած զազն տուէք որ տանիմ  
թագաւորին: Կնիկն գիտայ թէ շիտակ ա, ուն կու տայ,  
սինուն<sup>11</sup> մէջ դնայ, քրման շալն ալ վրէն ձգայ: Տղէն  
զազն կառնու կերթայ իրեն տուն ու մօյն հետ վայ նստին,  
անուշ անուշ կուտին: Մէկալ օյն գիշերանց կերթայ  
սարայն<sup>12</sup>, եաֆթան<sup>13</sup> պատ կու զայնու, վրէն գրած ունիլ

<sup>1</sup> Պազար, շուկայ: — <sup>2</sup> Բառս գալ, հանգիպել: — <sup>3</sup> Ճնճղուզ,  
ճնճղուկ: — <sup>4</sup> Զօրել, ստիպել: — <sup>5</sup> Վրայ ճվալ, պնդել խօսքը: — <sup>6</sup> Ուն  
տալ, (գէմինին) տալ, յանձնել: — <sup>7</sup> Շուարիլ, տրտում կենալ: — <sup>8</sup> Բռ-  
չայ, չինկեանայ: — <sup>9</sup> Քրման շալ, պատուական լաթ: — <sup>10</sup> խնտում, ուրա-  
խում թիւն: — <sup>11</sup> Սինի, թէփսի, սկուտղ: <sup>12</sup> — Պալատ: — <sup>13</sup> Եաֆթայ,  
Թուղթ գրուած:

խաման<sup>1</sup>. “Ղազճի իմ, ղազճի<sup>2</sup>, թուրլի թուրլի<sup>3</sup> օյին<sup>4</sup> ունիմ, պիծիկն<sup>5</sup> աս ա, մենծն ետեւունց ա. զուք ղազն ճնճղուզի տեղ կառնուք, հա<sup>6</sup>”:

Կու գայ ալի<sup>6</sup> տունն, մօյն կասայ. Բոյ, մեր հայն հէջ հին ու մին զուքեան չունիր թէ: — Ժօ, գիտիմ թէ՛ չարչուն<sup>7</sup> մէ բանմ ունէանք. գնա աշա թէ՛ կըլնի թէ չէ: Կերթայ նե մտնու զուքեանն, ինչորայ<sup>8</sup> այինօյին<sup>9</sup> բաներ մօտ<sup>10</sup> կէնայ, բաց կէնայ, վայ նստի: Մէմալ թագաւորին զաֆթէնին<sup>11</sup> կու գան, երկու հատ, գտնելու թէ՛ վո՛վ<sup>12</sup> զարկած ունի էն եաֆթան: Կու գան աս տղին զուքեանն ալ, կասեն. իսման իսման բան եղած ա: Տղէն խնտալով կասայ. Ատման<sup>13</sup> բան գտնուի թէ. ձեր ղըլիճնին ու հալաւնին<sup>14</sup> հոգայ<sup>15</sup> վար դրէք, ուզուորի<sup>16</sup> ղըլավաթ<sup>17</sup> մտէք, որ գտնուք, թէ չէ՛ չէք կայնայ: Տղին խապայն անկած<sup>18</sup> կէնին, ինչորայ պատուտուն շորեյ հագնին, իրենց հալաւնին հուն զուքեանն վայ դնին, կերթան ման<sup>19</sup> գալու: Իրեք օր ման կու գան, ոչինչ գտնուլ չին, գառնան կու գան ալի էն տղին մօտ. կաշին որ տղէն չեկայ, ամօթով ետ կու գան սարայն: Թագաւոյն կիմանայ, խեղի պէս կըլնի: Մէկալ օյն տղէն ալի կերթայ գիշերանց, եաֆթան զայնու պատն. “Ղազճի իմ, ղազճի, կը գրէ, թուրլի թուրլի օյին ունիմ, պիծիկն աս ա, մենծն ետեւունց ա: Զաֆթէնուն քեաչայ հագցնողն ես իմ. զուք ղազն ինծի ճնճղուզի տեղ կառնուք, հա<sup>6</sup>”:

<sup>1</sup> Խաման, իման, իման. այսպէս: — <sup>2</sup> Խազճի, սագաւաճառ: — <sup>3</sup> Տեռակ տեսակ: — <sup>4</sup> Խաղ: — <sup>5</sup> Պիծիկ, պզտիկ: — <sup>6</sup> Ալի, նորէն: — <sup>7</sup> Շուկայ, վաճառանոց: — <sup>8</sup> Ասգիէն անդիէն: — <sup>9</sup> Գէշ գէշ: — <sup>10</sup> Մօտ էնել, ժողով: — <sup>11</sup> Զաֆթեայ, ստիկան: — <sup>12</sup> Վո՛վ, ո՛վ: — <sup>13</sup> Ատման, այգ կերպով: — <sup>14</sup> Հալաւ, հագուտ: — <sup>15</sup> Հոգայ, հոտայ, հունայ, հոտ: — <sup>16</sup> Ուզուոր, մուրացիկ: — <sup>17</sup> Կերպարանք: — <sup>18</sup> Մտիկ ընել: — <sup>19</sup> Փնտուել, պատիլ:

կիմանայ թագաւոյն շատ նեղուորի կու, չիգտայ<sup>1</sup> ինչ էնայ:

Լալան<sup>2</sup> մէկ ուղտմ բերայ, լաւմ կու ճութկեն<sup>3</sup>, բեռն արծաթ կը բառնան ու քաղքին մէջ լուր կենան<sup>4</sup> թէ՛ նոր<sup>5</sup> կերթայ. ետեւունց ալ մարդ կակնի հեռուանց, աշին թէ՛ օյ տեղ մտնու: Կածուն<sup>6</sup> ուղտն կու գայ էն տղին տանն առջեւէն անցնելու: Տղէն տեսնու թէ չէ<sup>7</sup>, գրխ կէնայ, ուղտն չոքի, բեռն նե քաշայ, ուղտին ալ սաղ սաղ մէ համլէմ<sup>8</sup> քաշայ տանի ձգայ մառանն: Մարդիկն որ աչք կէնէին<sup>9</sup> ուղտին, կաշին որ կորաւ. ասղին կինկնին, անդին կինկնին, գտնուլ չին: Գիշերն տղէն ալի եաֆթան կառնու տանի թագաւորին դուռն զայնու. «Ղազճի իմ, Ղազճի, թուրլի թուրլի օյին ունիմ, պիծիկն աս ա, մենծն ետեւունց ա. ուղտին փախցնողն ես իմ. դուք ղազն ինծի ճնճղուզի տեղ կառնուք, հա՞»:

Թագաւոյն շատ կու նեղուորի, սատրազանին կանչայ, կասայ. Հիլայ<sup>10</sup> ուղտին գտնուք ու բերէք: Լալան մէկ ջազի<sup>11</sup> պառաւմ գտնու բերայ. աղուոր շոր հագցնայ էնոր, որ երթայ տնէ տուն ուղտի միս ուզայ, գտնուն ու բերին: Զազի պառաւն կրնկնի տնեյն, լալով ողջով, մէմ հող, մէմ հոն, կասայ. Մէ տղէմ ունիմ, գէշ հիւանդ ա, տոխտուրնին ասած ունին. Ուղտի միս ուտայ, լալ կրնի. ու իրեն ալ բարուցն<sup>12</sup> հանած ունի<sup>13</sup>: Մտնու մէ

1 Չիգտայ, չգիտէ: — 2 Լալայ, սատրազան, նախարարագետ: — 3 Ճութկել, զարդարել: — 4 Լուր կենալ, ազատ թողուլ: — 5 Նոր, ուր: — 6 Կածուն, զարդարուն: — 7 Տեսնելուն պէս: — 8 Մէկէն: — 9 Աչք էնել, աչքբել, դիտել: — 10 Անպատճառ: — 11 Զազի, վճռիկ: — 12 Բարուցն հանել, բարին ուզել:

13 Հիւանդն երբ քիչ լաւանայ, սիրտը բան մը կ'ուզէ ուտելու, պէտք է որ տան. թէ տունը չգտնուի՝ պէտք է որ երթան ուրիշ տեղ ման գան գտնեն, բերեն հիւանդին տան, որ ուտէ ու շուտ լաւ ըլլայ:

պառուում տուն, կասայ. Աման նէնէ, դու գիտես<sup>1</sup>, ինծի ուղտի միս գտնաս, որ տանիմ, տղէս ուտայ ու լաւ ըլնի: Էնոր<sup>2</sup> ճարն կտրի, կերթայ ուղտին պաճախէն<sup>3</sup> կտորմ կտրայ, բերայ ուն կու տայ: Ապրիս ու խնտաս, ծլիս ու ծաղկիս, կասայ ու միսն փէշին<sup>4</sup> տակ դնայ ու դուս կեշէ մեծ խնտումով: Մէմալ ճամբէն մէ տղէմ րասս կու գայ իրեն: Մամ, կասայ, փէշիդ տակն ինչ կայ: — Օրդի, կասայ, ուղտի միս ա, տղէս հիւանդ ա, տանիմ ուտայ, լաւնայ: — Հա, իտա ինչ ի կայ, խնտայ, էկէ երթանք տունն, քեզի լաւ տեղէն տամ: Կերթան տունն, նե որ մտնուն՝ կոպրով<sup>5</sup> մէմ չափայ<sup>6</sup> գլխուն. պառաւն կինկնի գետինն ու կը մեռնի ձեռաց<sup>7</sup>: Գրէ թղթի վրայ ու կառնու կերթայ սարայն, պատն կու զայնու գիշերանց. «Ղազճի իմ, Ղազճի, թուրի թուրի օյին ունիմ, պիծիկն աս ա, մենծն ետեւունց ա. պառւին կոյսնցնողն ես իմ. դուք Ղազն ճնձողուզի տեղ կառնուք ինծի, հա»: Աս որ կիմանայ թագաւոյն՝ շուարի<sup>8</sup>, իման մնայ, հերսէն<sup>9</sup> պատուի, չեգտայ ինչ էնայ:

Էկաւ վախտն թագաւորին աղջկան կարգելու սատրազանին մանչուն նշանած էր: Էմէն<sup>10</sup> դին թագաւորական հրաման գնաց. համայ աղջիկն կակնի, կասայ հօյն. Էս ջհուտի մանչու առնուլ չիմ, գլուխս կտրա՛ ու ինծի էնոր մի՛ տայ: Աս բան մեր տղէն կիմանայ, կու գայ տունն, կասայ մօյն. Բո՛յ, դու հէչ կնիկի խամ հալաւ չունիս թէ: — Հա, ծօ, հայսնութ<sup>11</sup> շորեյս կեցած ին, ինչ էնէի, խամ ին: — Տէ բեյ ինծի: Շորեյն հագնու

<sup>1</sup> Դու գիտես, շատ կ'աղաչեմ: — <sup>2</sup> Իտոր, իտոր, ինոր կամ էնոր. առոր: — <sup>3</sup> Պաճախ, սրունգ: — <sup>4</sup> Փէշ, քղանցք: — <sup>5</sup> Կոպալ, տակենակ, մեծ հաստ բիր: — <sup>6</sup> Չափեւ կամ հագցնել, զարնել: — <sup>7</sup> Չեռաց, իսկոյն: — <sup>8</sup> Շուարիլ, ապշիլ: — <sup>9</sup> Բարկութենէն: — <sup>10</sup> Էմէն, ամէն: — <sup>11</sup> Հարսնութ, հարսնութիւն:

կսկուծ<sup>1</sup> կսկուծ, սողոտիկ<sup>2</sup> կը կածուի<sup>3</sup>, կըլնի շիտակ մէ  
 ունետ աղջիկմ. տասնու վեց տարեկան դեռ կար չկար:  
 Մոյն կասայ. Հայտէ էրթանք սարայն. ես որ էն տեղ նե  
 մտնում, դու դուս կակնա, ինծի մնա. դուս որ էլնիմ,  
 դու առջեւէս տոտա<sup>4</sup> գնա, ակ մի՛ ետ աշել: Կածուն  
 աղջիկն կու գայ նե մտնու. Թագաւորին ղունաղն, կասայ.  
 Էս Թագաւորին աղջկան բանմ ունիմ ասելու: Էնոնք ալ  
 տանին էնոր նե կէնին<sup>5</sup> աղջկան օտէն ու իրենք դուս  
 կելնին մօտէն, կասեն. Պէլաքիմ անկաճ էնայ<sup>6</sup> իրեն ու  
 բանմ ըլնի: Էմէնք որ կերթան, իրենք մինակ կըլնին, մանչն  
 կասայ. Է՛, Թագուհի, ինչի՞ սատրազանին մանչուն չիս  
 առնու. իժով<sup>7</sup> ունետ ա: — Ձէ՛, չէ՛, քուրիկ, Աստուած  
 չէնայ, ես ջհուտի մանչու առնում: — Թէ որ ատման  
 ա, ես ինչ որ կասիմ՝ անկաճ կէնես: — Կէնիմ: — Համայ  
 օջում<sup>8</sup> չասես, խալպատ<sup>9</sup> պէհես, ես կու խալիմ<sup>10</sup> քեզի  
 իսա տեղէս: Էհէն իմ հալընիս դու հագի, քու հալընիդ  
 ալ ես հագնիմ. դուս որ կելնես՝ մայս քեզի մնայ, գիտայ  
 թէ ես իմ. ես իրեն ասած ունիմ, ինքն առջեւէդ կերթայ,  
 դու ետեւէն գնա: — Շատ լաւ կըլնի, քուրիկ, կասայ, ու  
 դուս Թռչի կերթայ խալի:

Պահմ վերջ Թագաւորն կու գայ աղջկան զխուռն ալի  
 քարող ասելու. Հիմի ի՞նչ դատիս<sup>11</sup>, կասայ, աղջիկա, ի՞նչ  
 խելքի վրայ ես. իմ կամքս աս ա, պէտք ա ղապուլ<sup>12</sup> էնես:  
 — Իմ կամքս կամք ա, կասայ աղջիկն, համայ թէ որ  
 դու ատման կամենաս, ես ալ մէ մուրատմ<sup>13</sup> կուզիմ քեզմէ,

<sup>1</sup> Կսկուծ, վայելապէս: — <sup>2</sup> Սողոտիկ, կոկիկ: — <sup>3</sup> Կածուիլ, զար-  
 դարուիլ: — <sup>4</sup> Տոտել, քալել: — <sup>5</sup> Նե էնել, մոցնել: — <sup>6</sup> Անկաճ ընել,  
 մտիկ ընել: — <sup>7</sup> Իժով, շատ, սաստիկ: — <sup>8</sup> Օջում, ոչ մէկու մը: —  
<sup>9</sup> Խալպատ, գաղտնի: — <sup>10</sup> Խառլիլ, ազատել: — <sup>11</sup> Դատիս, կ'ընես: —  
<sup>12</sup> Ղապուլ էնել, ընդունիլ: — <sup>13</sup> Մուրատ, խնդիրք, կամք, երջանկու թիւն:

Թէ որ զապուլ կէնես՝ ես ալ զապուլ կէնիմ: — Ասա՛, աղջիկս, զապուլ կէնիմ, ի՞նչ իկայ<sup>1</sup>: — Էս կուզիմ որ հարսնիքն որ ըլնի խասիլ<sup>2</sup>, էտին<sup>3</sup> օյն գիշէյն քաղքին մէջ մարդ ման գայ ոչ, զաֆթեայ ըլնի ոչ, կրակ վառի ոչ, որ մենք շետակ<sup>4</sup> ման գալ կայնանք: Հօյն երեսն խնտում կու գայ շատ, կասայ աղջկան. Էման ըլնի: Ու հրաման կէնայ որ օխտ օր օխտ գիշեր հարսնիք ըլնի:

Մէկալ օյն մեծ ուրախութիւն, մեծ քէֆ կէնին ժողովուրդն, բոլոր քաղաքն թոււո՞ղ<sup>5</sup> կելնայ, աս օխտ օր օխտ գիշեր հայսնիկ ա քեամաչով, տկով, տավուրդուռնով, ուտել լամել պո՛ղ: Վերջին գիշէյն որ կու գայ, քաղաքն գիտես թէ կը մեռնի, օչով<sup>6</sup> դուս չի ելնայ, տերեպ<sup>7</sup> խթխրթալ<sup>8</sup> չի: Մոր պսակուողին կելնին դուս, մէնիկ<sup>9</sup> Ֆայթոնով<sup>10</sup> ման կու դան բոլոր քաղաքն: Մէ տեղմ կու գան կակնին, փեսէն հայսին կասայ. Իսա թագաւորին պարու թխանէն<sup>11</sup> ա, ուրիշ տեղմ կու գան. իսա սիւհսխանէն<sup>12</sup> ա, իսա թօթխանէն<sup>13</sup> ա, ու ալ ուրիշ պուրաներ: Պինդ<sup>14</sup> վերջ կու գան կելնին կախարանին մօտ: Թագուհին կասայ. Հա՛, աս գէշ տեղ ա՛, աս գիշաննուն<sup>15</sup> համար. դու թագաւոր կը լնիս, աշա՛, չըլնի, չիմանամ թէ՛ առանց իրաւունք մարդու կախ էնես: Հալայ մէկմ ես չուանն ճիտս<sup>16</sup> անցնում թէ՛ ինցո՞ւ<sup>17</sup> կէնայ: Կանցնու ճիտն որայ<sup>18</sup> Ո՛ւյ, ույ կասայ, աս ի՞նչ գէշ ցաւցնայ: Հալայ մէմալ դու անցու, կասայ փեսին: Ծիտն կանցնայ թէ չէ<sup>19</sup>, հէմէն աթոռն տակէն կու քաշայ, փեսէն կախուրի:

<sup>1</sup> Ի՞նչ ի կայ, ի՞նչ է: — <sup>2</sup> խասիլ, պրծիլ: — <sup>3</sup> Էտին, վերջին: — <sup>4</sup> Շիտակ, ազատ: — <sup>5</sup> Թոււո՞ղ ելնել, թնդալ: — <sup>6</sup> Օչով, ոչ ոք: — <sup>7</sup> Տերեպ, տերեւ: — <sup>8</sup> խթխրթալ, շարժիլ (տեղէն): — <sup>9</sup> Մինակ: — <sup>10</sup> Ֆայթոն, կառք: — <sup>11</sup> Վաւօթարան: — <sup>12</sup> Չխանոց: — <sup>13</sup> Թնդանօթարան: — <sup>14</sup> Ամէնէն: — <sup>15</sup> Գէշերը: — <sup>16</sup> Ա իզ, պարանոց: — <sup>17</sup> Ինչպէս: — <sup>18</sup> Երբ որ: — <sup>19</sup> Անցնելուն պէս:

ալ խապելու ճար չի կայ. հոտայ խեղդի: Հայսն իրեն ղըլավաթն փոխայ, թղթի վրայ գրէ, զայնու պատն Ֆայթոնին վրայ. «Ղազձի իմ, ղազձի, կասայ, թուրի թուրի օյին ունիմ, պիծիկն աս ա, մենծն ետեւունց ա. թագաւորին փեսին ես կախ էրած ունիմ, աղջիկն ալ իմ մօտս ա. դուք ղազն ճնճղուզի տեղ կառնուք ինծի, հա՞: Ու ինքն կերթայ տունն վայ նստի ասլանի պէս:

Մէկալ էգուան՝ թագաւոյն կիմանայ, որ փեսէն կախուած ա, աղջիկն ալ կորած. շուարի մնայ թէ ինչ էնայ: Հրաման հանայ թէ՛ վո՛վ ատ բանեյն էրած ունի, գայ մօտս, իրեն դիպչել չիմ. ինչ մուրատ որ ուզայ, կուտամ իրեն: Տղէն աս որ կիմանայ, կերթայ թագաւորին դիմացն կակնի, կասայ. թագաւոյն ապրած կենայ, աս էմէն բանեյն էնողն ես իմ, քու աղջիկդ ալ իմ մօտս ս, լաւ անկաճ էրայ ինչ կասիմ. ես մէ փուխարայ<sup>2</sup> օքսուզ<sup>3</sup> տղէմ էի, զայս ինծի ղազմ տուաւ, թէ տայ ծախա. էկայ չարշուն, վէզերն րաստ էկաւ, ասաց. իտա ճնճղուզդ ինծի տու առնում: Ասեցի. իսա ճնճղուզ չա, վրայ ճուաց թէ՛ ճնճղուզ ա: Էս ալ վախեցայ, տաս փարի ուն տուի: Բանն իման ա, հիմի դու ինծի ինչ կուզես էրա:

Թագաւոյն աս որ լսէ, կարմնայ՝ ու զարմնայ, կասայ. Բերէք հողայ<sup>5</sup> վէզերին: Վէզերն որ կու գայ, դողդողայով թագաւորին առջեւ կակնի. էնոր տանին ձիուն ազիքն<sup>6</sup> կապին ու փարչայ<sup>7</sup> փարչայ կրնի: Էս տղեն ալ իրեն աղջկան հետ կարգայ<sup>8</sup>, որ իրենց մուրատին հասնին:

<sup>1</sup> Աւաւաւը: — <sup>2</sup> Աղբատ: — <sup>3</sup> Օքսուզ, որբ: — <sup>4</sup> Արմնալ զարմնալ, շատ զարմնալ: — <sup>5</sup> Հողայ, հոս: — <sup>6</sup> Ազիք, պոչ. կամ կանանց հանգերէի պոչ: — <sup>7</sup> Փարչայ, կտոր: — <sup>8</sup> Կարգել, պատկել, ամուսնացնել:

Երկնուցէն իրեք խնճոր ինկաւ, մէկն աս հէքեաթ  
ասողին, մէկն գրողին ու մէկն ալ կարդացողին. անոյշներ  
ըլնի:

Գ.

ԹԱԳԱԽՈՐԻՆ ԻՐԵՔ ՄԱՆՉԵՐՈՒՆ ՀԷՔԵԱԹ

Կըլնի չինի, մէ թագաւոյմ կըլնի. իրեք մանչ  
զաւակ կուսնայ: Եկաւ վախտն ասոնց նշան դնելու<sup>1</sup>.  
գեղին ատաթն<sup>2</sup> էն էր, որ մանչեյն երթային ժողովըղին  
մէջ ու խնճոր նետէին. ում<sup>3</sup> խնճոյն որ երթար մէ  
սողջկանմ զայնուր, աս կըլնիր էն մանչուն նշանած:  
Սըրոյ<sup>4</sup> նետին. մեծ մանչն նետայ խնճոյմ, կերթայ մէ  
սողջկանմ զայնու. էնոր կառնու: Միջնեկ մանչն ալ նե-  
տայ, կերթայ զայնու մէ սողջկանմ. էնոր կառնու: Պիծի  
մանչն ալ որ նետայ հանայ<sup>5</sup>, օչում<sup>6</sup> չի դպչի, կերթայ  
նե կընինի մէ սողջուրմ ի վար: Մքրի<sup>7</sup> շատ, լալով կա-  
սայ. Պայլոր<sup>8</sup> իմ էղպարս<sup>9</sup> ալ ինա սողբին մէջն ա ու  
կերթայ մօտն վայ նտի, կուլայ կուլայ, հէչ սզել<sup>10</sup> չի:  
Մէմալ տեսնու որ սողբուրին մէջէն մէ գորտմ դուս կել-  
նայ. բռնայ տանի տունն, դոլպան<sup>11</sup> վայ դնայ, ու ինքն  
կելնայ կերթայ դուսնինի<sup>12</sup>:

Պահմ վերջ ետ դառնայ, կու գայ նե մօտնու տունն.  
ինչ կաշես որ, սուֆրէն<sup>18</sup> կածնած, վայ դրուած ա:

<sup>1</sup> նշան դնել, նշանախօսել: — <sup>2</sup> Ատաթ, սովորութիւն: — <sup>3</sup> ում,  
որուն: — <sup>4</sup> Սըրոյ, կարգ: — <sup>5</sup> Հանայ, երբոր: — <sup>6</sup> Օչում, ոչ մեկու  
մը: — <sup>7</sup> Մքրի, տրամիլ: — <sup>8</sup> Պայլոր, կ'երեւնայ թէ: — <sup>9</sup> Էղպար, բախտ:  
— <sup>10</sup> Սզել, լացը կտրել: — <sup>11</sup> Տոլպ, պահարան: — <sup>12</sup> Դուրս կ'ելլէ:  
<sup>2</sup> Սուֆրոյ, սեղան:

Կուտայ, խմայ ու արմնալով կենայ կերթայ դուանինի ման գալու: Իրկուանն ետ դառնայ, կու գայ տունն, կաշայ որ սուֆրէն ալի<sup>1</sup> սարքած ա ու թունարին<sup>2</sup> վրէն վայ դրած: Կուտայ խմայ, վեր կենէ, կասայ ինքնիրեն. Մէմ թաք- չիմ, աշիմ թէ՛ իտա բանդ էնողն վով ա: Մէ սխիրլիմ<sup>3</sup> մէջ փաթութուի<sup>4</sup> ու պուճախն<sup>5</sup> ի վեր ցից կընի, մնայ: Մէմալ կաշայ որ, տղապին մէջէն մէ ռունտ աղջիկմ դուս կենէ, գոյտի ղըլավաթն վայ դնայ ու, դուռն կաւի- լայ, սուֆրէն սարքայ ու կերթայ որայ գոյտի ղըլավաթ հագնելու. հէմէն սխիրին մէջէն դուս թոչի, բունայ ու չի թողու, որ գոյտի ղըլավաթ մտնու: Մանչն կասայ աղջ- կան. մի՛ հագնիլ: Աղջիկն կասայ. Լո՛ւր<sup>6</sup> է, թէ չէ էտեւ կսկծաս: Մանչն չի անկած էնել էնոր, հազուսան պա- տուայ, որ չի կայնայ գոյտ ընիլ ու իրեն կնիկ կէնայ:

Մէկալ օյն թագաւոյն իր մանչերուն տես<sup>7</sup> կենայ. մեծին տեսնու, միջնեկին տեսնու. շատ լաւ, շատ ռունտ էին: Կասայ երթամ պիծի մանչուս ալ տեսնում թէ՛ էնոր խնծոյն որ աղբուրն ի վար նե ինկաւ, ի՛նչ եղաւ, նոր գնաց: Կու գայ տունն, մանչուն տեսնու, հայսին ալ տեսնու, կաշայ<sup>8</sup> որ աս էն ռունտն է, հետը սէր կընկնի. մանչուն ղարազ<sup>9</sup> կապայ թէ՛ ի՛նչ էնիմ որ կնիկն ետ առնում: Կենայ կերթայ տունն, ղավազնին ղըկայ, կա- սայ. Գնացէք պիծի մանչուս ասեցէք թէ՛ Եկէ: Ժառէնին զնացին ասեցին: Մանչն ելաւ եկաւ թագաւորին մօտ թագաւոյն ասաց. Կուզիմ որ հիմի հիմի էման մէ խա- լիչէմ բերես, ալար<sup>10</sup> ապքեարն վրէն նստին ու ալի աւենայ:

<sup>1</sup> Ալի, նորէն: — <sup>2</sup> Թունարի, թանիր: — <sup>3</sup> Սխիր, խսիր, խստ գոր- ծուած, տակը փռելու համար: — <sup>4</sup> Փաթութուիլ, պլուսիլ: — <sup>5</sup> Պուճախ, անկիւն: — <sup>6</sup> Լուր է, լուր կեցի, թող: — <sup>7</sup> Տես ելնել, տես երթալ. այցելութիւն ընել: — <sup>8</sup> Աշիլ, նայիլ: — <sup>9</sup> Ղարազ կապել, սե պահել: — <sup>10</sup> Ալար, բուր:

Մանչն մքրած ելաւ եկաւ տունն, կնոջն ասաց. Բա՛ ինչ կէնես, գլուխս գնաց, հայս էման մէ բանմ ասեց որ: — Օ՛րս ընի, ասաց կնիկն, տէ քաշա՛ որ աչուիդ էլնին. քեզի ասեցի ո՛չ թէ՛ իմ գոյտի զըլավաթս մի պատուել, ետեւ կսկածաս: Համայ մի՛ նեղանալ, ինչոր կասիմ՝ անկաճ էրա. Գնա՛, ինծի որ բերիր, էն աղբուրին մէջն ի վար ճուա՛, ասա՛. Ձեր աղջիկն կասէր թէ՛ հօյս պինդ՝ պիծի զայիչէն զրկեցէք: Ղայիչէն դուս տուին, առաւ եկաւ, թագաւորին մօտ փռեց. ալար ասքեարն վրէն նստան ու ալի աւելցաւ: Դարձաւ եկաւ տունն վայ նստաւ:

Թագաւոյն ալի մարդ զրկեց ու տղին բերել տուաւ մօտն, ասաց. Գնա՛, էման մէկ թանձարէմ՝ փլաֆ էրա, որ բոլոր ասքեայն ուտին ու ալի աւելնայ: Եկաւ կնոջն պատմեց, ասաց. Թագաւոյն իսման իսման կասէր. ի՛նչ էնիմ, բանս բուրդ ա: — Ադ քիչ ա քեզի, քաշա՛ որ աչուիդ դուս գան: Համայ, մեղքս ես, ի՛նչ էնիմ. գնա՛ ալի էն աղբուրին մէջն ի վար ճուա՛, ասա՛. Ձեր աղջիկն կասէր թէ՛ հօրս պինդ պիծի թանձարէն զրկեցէք: Ընոնք ալ տուին. առաւ եկաւ, փլաֆ էփեց, ալար ասքեարն կերան ու ալի աւելցաւ:

Օյմ՝ վրէն անցաւ չանցաւ, թագաւոյն ալի տղին մարդ զրկեց, բերել տուաւ, ասաց. Հի՛մի հիմի կուզիմ որ ինծի էման մէ ճութմ՝ հազող բերես, որ բոլոյ ասքեայն ուտին ու ալի աւելնայ: Եկաւ տունն կնոջն ասաց

<sup>1</sup> Ճուալ, պուալ: — <sup>2</sup> Պինդ պիծի, պինդ մեծ, ամենէն փոքր, եւն: — <sup>3</sup> Թանձարայ, պղնձէ աման: Խալիկն, անոր մեծը, կաթսայ, զազան: Կիւն, ջուր կրելու պղնձէ աման: Ճու՛ կամ փու՛, անոր փոքրը: Եղճու, եղ հալելու համար փոքրը: Իդրի, կուպուս, նոյնպէս պղնձէ, ջուր խմելու համար: Ուրի, ջուր խմելու պղնձէ թաս: Փուր, սափոր: Մուր, ջուր խմելու խորունկ թաս: — <sup>4</sup> Ճութ, ողկոյղ: Ճեռ, ողկուզին մէկ փոքր մասը:

լարով. Հայս իսման իսման կասէր: — Բաշա՛, որ աշուխդ եղին, քեզն ասեցի ո՞չ թէ՛ իմ ղըլավաթս մի՛ պատուել: Գնա՛, ալի էն աղբուրին մէջն ի վար ճուա՛, ասա՛. Ձեր աղջիկն կասէր թէ՛ հօյս պինդ պիծի տղէն ես իմ, ճուլթմ հաղող ղըկեցէք: Էնոնք ալ տուին. առաւ բերաւ կնոջ մօտեցաւ որայ՝ հաղողէն մէ պտուկմ<sup>1</sup> վար ինկաւ. թէզմ վեր կալաւ<sup>2</sup> կուզէր նե կպցնել<sup>3</sup>: Կնիկն ասաց. մի՛, ատ ալ ղու կե: — Իսա մէկս իմ փոյս կրթացնուլ<sup>4</sup> չի, բոլոր ապքեարին օրման<sup>5</sup> կրթացնայ: — Ատ հերիք ա, տար ապքեարին: Տարաւ, ալար ապքեարն կերան էն հաղողէն ու ալի աւելցաւ:

Մէկ աւուր վերջ թագաւոյն ալի մարդ ղըկեց, տղին բերել տուաւ, ասաց. Գնա՛ էման մէ մարդմ բե՛, որ ինքն մէ թիզ ընի, միրուքն<sup>6</sup> երկու թիզ: Եկաւ կնոջն ասաց. Աս կէտի<sup>7</sup> զլուխս գնաց, թագաւոյն իսման իսման ասեց: — Բաշա՛ որ, ճանդ<sup>8</sup> հոմնայ<sup>9</sup>, ես ի՞նչ էնիմ: Գնա՛ ալի էն աղբուրին մէջն ի վար ճուա՛, ասա՛. Ձեր աղջիկն կասէր թէ՛ հօյս պինդ պիծի մարդուն ղըկեցէք: Էնոնք տուին, առաւ եկաւ. աս կէտի երեսն խնդում<sup>10</sup> կար: Ելաւ թագաւորին մօտ, թախտ<sup>11</sup> նստած էր, բոլոր ապքեարն մօտ եղած էին. թագաւորն վախեցաւ, աշեց որ էմէն բան կատարեց մանչն ինչ որ ասեց: Թղուկ մարդուն բերին մէջտեղ վայ դրին. խալայ, խաղայ ու կուգայ թագաւորին մէ շարալախմ<sup>12</sup> զայնու երեսնինի ու կասայ. Դու չէի՞ր որ կասէիր մանչուդ, ինծի էման մէ ղալիչէմ բերես, որ ալար ապքեարն վրէն նստին ու ալի աւելնայ:

<sup>1</sup> Պտուկ կամ պտուղ, ողկուզէն մէկ հատ մը դուրսքալած: —

<sup>2</sup> Վեր կաշնուլ, վերցնել: — <sup>3</sup> Նե կպցնել, փակցնել: — <sup>4</sup> Կրթանալ, յադիլ: — <sup>5</sup> Օրման, բնչպէս: — <sup>6</sup> Միրուք, մօրուք: — <sup>7</sup> Աս կէտի, այս անգամ: — <sup>8</sup> Ճան, կեանք: — <sup>9</sup> Հոմնայ, հովանալ, հանգստանալ: —

<sup>10</sup> Ուրախ էր: — <sup>11</sup> Թախտ, գահ: — <sup>12</sup> Շարալախ, ապտակ:

Այդ ընկերու բան էր. համայն եղաւ Աստուծով: Այլ խաղայ խաղայ ու կու գայ մէջ շամալ՝ չափայ<sup>1</sup> թագաւորին դունջ-նինի<sup>2</sup>, կասայ. Դու չէի՞ր որ մանչուդ կասէիր. Էման մէջ թանձարէմ փլաֆ էնես, որ այլար ապքեարն ուտին ու ալի աւերնայ. ատ ընալու բան էր, կասայ ու մէմալ չափայ: Այլ խաղայ խաղայ ու կու գայ թագաւորին մի սիրէմ չափայ, կասայ. Դու չէի՞ր որ մանչուդ կասէիր. Էման մէջ ճութմ խաղող բերես, որ այլար ապքեարն ուտին ու ալի աւերնայ. ատ ընկերոց բան էր թէ: Այլ խաղայ խաղայ ու կու գայ մէջ շամալ՝ շորկեցնայ<sup>3</sup>, կասայ. Դու չէի՞ր, որ մանչուդ կասէիր. Էման մէջ մարդմ ինծի բերես, որ ինքն մէջ թիզ ընի, միրուքն երկուս. ատ ընկերու բան էր, համայն եղաւ. Աստծով էր, պիտի ընիր. կասայ ու մէմալ չափայ որայ թագաւորին գլխուն՝ գլուխն անդին կրնկնի ու հողին փչայ<sup>4</sup>: Թզուկ մարդն կերթայ իրեն տեղն էն ժում<sup>5</sup> ու մանչն ալ իրեն կնիկով հանգիստ կընի ու այս աշխարհք վայլէ:

## Գ.

### Օ Չ Ի Ն Ա Ռ Ա Կ Ն

Մեր ծերեցն պատմին թէ՛ վախտին ժամանակին թագաւորն էրազմ կը տեսնու, թալալ<sup>6</sup> կանչել կու տայ էմէն

<sup>1</sup> Չափել, զարնել: — <sup>2</sup> Դունջ, բերան (երես), աւելի անսանոց համար կը զուրջուի: Գողոշ. (գլուխ). Գար, (բերան). Ճանկ, (էնք). մարդու կը զուրջուին անարգաբար: — <sup>3</sup> Շորկեցնել, զարնել: Կոշիւ, զարնել. Գբիւ (տիւ) Գբգբ—ն հանել, չիւ, չիւ—ն հանել, Բիւիւ, Էմիւ, սաստիկ ծլծել: — <sup>4</sup> Հողին փչեց, մարդն չըջաւ, պաղեցաւ, մեռաւ, անարգաբար: — <sup>5</sup> Էն ժում, ան ժամանակ: — <sup>6</sup> Թալալ կանչել, հրապարակագործել:

դին. Վով որ գայ երազս հանայ, իրեն կշոքով օսքի կու տամ: Խեղճ մարդուն մէկն ալ մտքին մէջն ի վար կասայ. Երթամ թագաւորին բանմ ասիմ, ես էն ա, որ փարայ կու տայ, ես էն ա, որ գլուխս կտրայ ու ես խասլիմ աշխարհքէս:

Կենայ ճամբայ, կերթայ, կերթայ, կերթայ, տեղմ կու գայ, մէմալ կաշայ որ, որմին մէջէն ձէն՝ կենայ, կասայ. Այ մարդ, նոր<sup>2</sup> կերթաս: Էս դին կաշայ, էն դին կաշայ, օշով չիկայ. մէմալ տեանու որ, օձն պատին մէջէն տուտն դուս բռնած ա, խօսի: Մարդն պատասխանայ. Երթամ պիտի թագաւորին երազն պատմիմ: — Է՛, գիտեն էնչազ<sup>3</sup>, ի՞նչ ասես պիտի: — Օչինչ ալ չիգտիմ, համայ, ես փարէն կու տայ, ես գլուխս կտրայ, խալսիմ աս աշխարհքէս: — Ես գիտիմ, քեզի կասիմ, համայ ինչոր փարայ տայ, բե՛ որ իրար հետ կիսենք: — Գլխուս վրայ:

Օձն պատմեց իսման. թագաւորին տեսածն գեալ՝ ա. աշխարհքս գեալ ա դարձած, պատռող պատռողի ա, ուտող ուտողի ա. օրէնք չի կայ, իրաւունք չի կայ, նէ մեծ կայ, նէ պիծիկ: Գնա՛ ու ինծի ալ մտեղ մի՛ հանեյ: Մարդն ելաւ գնաց թագաւորին երազն ասեց ու իրեն կշոքով օսկի առաւ ետ դարձաւ: Օձին մօտէն անցնելու էր. աշեց որ, օձն ալի որմին մէջէն տուտն դուս բռնած ունի. քայմ վեր կալաւ, չափեց օձին. օձն գլուխն նեքաշեց որմինին ու փախաւ: Ինքն բոլոր փարէն առաւ գնաց, մէննակ ուտելու:

Մէկալ օյն թագաւոյն ալի երազ տեսաւ. թալալ կանչեց, ոչով չքնացին: Եկան էն մարդուն եախայէն՝<sup>5</sup>

<sup>1</sup> Ձէն, ձայն: — <sup>2</sup> Նոր, սուր: — <sup>3</sup> Էնչազ, այն ժամանակ: — <sup>4</sup> Գեալ, գալ: — <sup>5</sup> Եախայ, օձիք:

բռնեցին թէ՛ Էկէ թագաւորին երազն պատմա՛: Մարդն  
 ինչ էնէր, չիգտէր. գնաց ալի օձին դուռն կակնեցաւ:  
 Օձն պատէն դուս եկաւ. ի՞նչ կայ ալի, ասաց, ինսանօղլի՛,  
 ի՞նչ կուզիս: — Ըմպայ՝ չիգտես, թագաւորն ալի երազ  
 տեսած ունի, կասին, եկէ պատմա՛. նեղութիւն ալ չու-  
 նիմ, համայ զօրով տանին: — Բեզի կասիմ, համայ ինչ  
 որ տայ բե՛ իրար հետ փայ՝ էնենք, առջի հեղին՝ պէս  
 քա չչափես ինծի: — Լաւ կըլնի, օձ աղբար, էման  
 էնինք: — Նրազն աս ա. թագաւոյն մէ աղուէսմ տեսած  
 ունի. ասա, աշխարհքս աղուէս դարձած ա, խարոզ խա-  
 բողի ա, քաշող քաշողի, օչ մեծ կայ, օչ դատաւոր:  
 Մարդն շորհակալ կըլնի օձին, կերթայ թագաւորին  
 երազն պատմայ ու իրեն կշեռքով օսկի շալկայ՝ կու գայ:  
 Ծամբէն գալնինի՞ օձին մօտն որ հասնի, կաշայ որ ալի  
 օձն տուտն որմին մէջէն դուս հանած ունի. հէչ խօսե-  
 ցնուլ չի տայ, քայմ չափայ ու փախցնայ, ու ինքն կեր-  
 թայ օսկեստանն՝ մէնակ ուտելու:

Կանցնի վրէն մէկ օր, թագաւոյն ալի երազ տես-  
 նու. օչով չի կայնայ հանել, ալի էն մարդուն կանչին:  
 Համայ ինչ էնայ, չիգտայ, երես չունի ալ օձին մօտ եր-  
 թալու, միտք կէնայ՝, կասայ. Ոսղտիկ՝ օսկի ես ի՞նչ  
 էնիմ, տանիմ մէ շալկն օձին տամ, երազն ինծի ասայ,  
 թագաւոյն էնղտիկ ալի կու տայ ինծի. ասման լաւ  
 կըլնի, կասայ: Կերթայ, շալկմ՝ օսկի շալկած կերթայ

<sup>1</sup> Ինսան, մարդ: — <sup>2</sup> Ըմպայ, հապայ: — <sup>3</sup> Փայ, բաժին: —

<sup>4</sup> Հեզ, անգամ: — <sup>5</sup> Շալկել, բեռ կռնակն առնուլ տանիլ: —

<sup>6</sup> Եկած ժամանակ:

<sup>7</sup> Այս կերպ յօգնակին շատ սովորական է, ինչպէս՝ ջրեստանն  
 եկան, գինեստանն լին, մարեստանն պարպեցին, էնոնց հոգեստան կորած  
 են, եւն:

<sup>8</sup> Միտք էնել, մտածել: — <sup>9</sup> Իսղտիկ, այրան: — <sup>10</sup> Շալկ,  
 կռնակով տարուած բեռ:

օձին մօտ. Հէ, օձ աղբար, դո՛ւս էկէ, դո՛ւս: Երկու երեք  
 հեղ որ ճուայ, օձն դուս կերնայ, կասայ. Ի՞նչ խապար  
 ա, ինսանօղլի: — Դո՛ւ դիտես<sup>1</sup>, օձ աղբար, ես էրի, դու  
 մի՛ էնել. էհէն իսա օսկեստանս քեզի. Թագաւոյն այլ  
 էրազ տեսած ունի, գլուխս գնաց աս կէտի<sup>2</sup>, չեգտիմ որ  
 ասիմ: — Թագաւորին էրազն աս ա. Տեսածն գառ ա,  
 ասա. Աշխարհս գառ ա դարձած, խաբող չիկայ, քաշող  
 չիկայ, դուրութիւն, րահաթութիւն ա, էմէնք սիրով  
 կապրին: Էս փարէն քեզի էրա, ինչ ալ որ Թագաւոյն  
 կու տայ՝ էն ալ քեզի էրա. ես փարէն ի՞նչ էնիմ, ես  
 օձ իմ. Աստուած ինձի հրամեց, որ քեզի գանձի տէր  
 էնիմ. գնա՛ կեր ու Աստու. պատուիրանն պէհա:



Ե.

## Վ Ի Շ Ա Պ Ի Ն Հ Է Ք Ե Ա Թ Ն

Վախտին մէ Թագաւոյմ կրնի, իրեք մանչ կունե-  
 նայ. մէ ունտ խնձորիմ ալ կունենան տան դուռն  
 պաղջին մէջ: Դեւն իժիր<sup>3</sup> կու գայ կուտայ աս խնձորին  
 գիշէյն ու կերնայ կերթայ: Հայն մանչերուն կասայ. Գնա-  
 ցէք ինա դեւին զարկէք, ալ հերիք եղաւ:

Օյմ մեծ աղբայն գիշերով կերթայ ծառին տակ  
 վայ նստի. պահմ կենայ, քունն տանի<sup>4</sup>. դեւն այլ իրեն  
 վախտին կու գայ, խնձոյն կառնու կերթայ: Մէկալ օյն  
 միջնեկ աղբայն կու գայ վայ նստի. էտոր քունն ալ տա-

<sup>1</sup> Դո՛ւ գիտես, ստք ինկած եմ: — <sup>2</sup> Աս կէտի, այս անգամ: —  
<sup>3</sup> Իժիր, միշտ, ամէն օր: — <sup>4</sup> Բունն տանիլ, քունը գալ, քուն ըլլալ:

րաւ էն տեղ: Ետեւ պղտիկ աղբայն ելաւ, մատն կտրեց<sup>1</sup>, մէջն աղ լծեց, որ քուն չտանի ու գնաց ծառին մօտ վայ նստաւ: Խեղճ կակնեցաւ. մէմալ աշեց որ, դեւն եկաւ, խնձորուն վրէն ի վեր ծառցաւ<sup>2</sup>. ղըլիճն քաշեց զսրկաւ դեւին, արունեց, համայ չսատկեցաւ: Դարձաւ եկաւ աղբրտնանց ասեց. Դեւին ղարկի, սատկեցաւ ոչ. էկէք ետեւէն երթանք թէ օյ տեղ գնաց: Դեւին արունին հետ գնացին, որ մէ հորիմ մէջն ի վար նե էր մտած. իրեքն ալ հորին բերանն կակնեցան:

Մեծ աղբայն ասաց. ինձի նե կախեցէք: Ընոր որ նե կախեցին, ասաց. Էրեցայ վառեցայ: Ընոր վեր քաշեցին: Միջնեկն ասաց. ինձի նե կախեցէք: Նե կախեցին որայ ասաց. Էրեցայ վառեցայ, էրեցայ վառեցայ: Ընոր ալ վեր առին: Պիծիկն ասաց. ինձի նե կախեցէք, քանի՛ ասիմ, էրեցայ վառեցայ, դուք նե կախեցէք: Ընոնք նե կախեցին պիծիկին, ինչաւ տակն, տեսաւ որ ներսն իրեք հատ օտայ<sup>3</sup> կային: Մէկին դուռն բացաւ, մէջն մէ աղջիկմ կար, օսկեցայ մուկն թռչիր, կատուն ալ ետեւէն. ասաց. Աս մեծ աղբոյս նշալուն ա: Գնաց մէկալ օտին դուռն բացաւ, մէ աղջիկմ տեսաւ, ձար մուկն<sup>4</sup> առաջ թռչիր, օսկեցայ շունն ալ ետեւէն. ասաց. իս ալ միջնեկ աղբոյս նշալուն ա: Գնաց մէկալ օտին դուռն բացաւ որ, ի՛նչ կէնես, քիչ մնաց որ լիղին պատռէր<sup>5</sup>, տեսնու որ օխտ գլխանի դեւն աղջկան գոգն պառկած էր. մէ խճպիմ<sup>6</sup> մէջ ալ էման հարաւ կար որ, օչ ասեղ էր բանած; օչ ալ թեւ<sup>7</sup>: Դեւին մէ ղըլիճմ որ հագուց<sup>8</sup> մէջտեղի

<sup>1</sup> Սրիւնեց: — <sup>2</sup> Ծառնալ, յարձակիլ, վրան նետուիլ: — <sup>3</sup> Օտայ, տենեակ, խուց: — <sup>4</sup> Չար մուկ, խլուրդ: — <sup>5</sup> Լեղին պատռիլ, լեզապատառ՝ չարգարկ ըլնիլ, սառտիկ վախէն մեռնիլ: — <sup>6</sup> Խճեպ, ընկուղին շոր պատենին մէկ մասը: — <sup>7</sup> Թեւ, բարակ դերձան: — <sup>8</sup> Չարկաւ:

գլուխն վար ձգեց: Դեւն ասաց. Ինսանօղի, մէմալ զարկ: Մանչն կասայ. Ես մօրէս մէկմ իմ եղած: Աղջիկն կասայ. Խօսայ<sup>1</sup>, զայնուս ո՛չ, թէ չէ կենայ ինձ ալ քեզ ալ կուտայ:

Էն վախժան մանչն աղջիկնին առաւ եկաւ հորին մօտ, որ լուս աշխարհք ելնէին: Մէկ աղջկան վեր կու տայ, կասայ. Աս մեծ աղբօյս նշալուն ա: Մէկին ալ վեր կու տայ, կասայ. Աս միջնեկ աղբօյս նշալուն ա: Եկաւ որ իրեն նշալոջ վեր տար պիտի, աղջիկն կասայ. ինձի մի՛ վեր տայ, չէնէ քու աղբրտանքդ փախցնուն ինձի: — Է՛, ես որ երթամ, դու չես գալ: — Դիտիմ որ ինձի առաջ վեր կառնուն, համայ քեզի չին. է՛հէն իսա չախմախ<sup>2</sup> քայս քեզի, ճակտանդ որ պիճիկմ քսես<sup>3</sup> օ՛չ՝ ինչ որ կուզես, կընի քեզի: Մանչն չախմախ քայն առաւ, ծոց դրաւ, պէհեց. աղջկան վեր տուաւ, վեր առին ու իրեն վեր չառին: Աղջիկն առաջ մանչուն սուսած ունիր թէ՛ Իդդուտ<sup>4</sup> իրեք հատ զոչ կու գան, դու սեւին հեծի, սեւն ալ մոռին<sup>5</sup> ձգայ, մոռն ալ ճերմկին ու քեզի բերին լուս աշխարհք հանին: Տղէն չկայցաւ էման էնել, սխալեցաւ, ճերմակին նստաւ, ճերմակն ալ մոռին ձգեց, մոռն ալ սեւին ու գնաց ու գնաց կուրկուր<sup>6</sup> աշխարհքն ի վար:

Պօլ ման եկաւ էնանի<sup>7</sup>. գնաց մէ պառւիմ տունն մտաւ, ասաց. Ձի՛նիր, ինձի սուսաՅիր առնես: — Կառնում, համայ, սուսց պառաւն, տեզ չունիմ, օրման էնիմ: — Իտա բուլթնիդ<sup>8</sup> իրար զարկ կտարին, քեզի երկու օսկի կու տամ: Պառաւն էման էրաւ ու մանչուն

<sup>1</sup> Չըլայ թէ: — <sup>2</sup> Կայծքար: — <sup>3</sup> Բսերուզ պէս: — <sup>4</sup> Իդդուտ, իդդուտ, Էնդուտ, այս կողմ: — <sup>5</sup> Մոռ, գորշ: — <sup>6</sup> Կուրկուր, մեթ: — <sup>7</sup> Իսանի, իսանի ինանի, կամ էնանի, այն կողմեր: — <sup>8</sup> Բուլթութ, կարաս, հողէ տակառ:

տեղաւորեց<sup>1</sup>: Տղէն ասաց. Մորոյ, մէ ջույմ տու, խաշած իմ<sup>2</sup>: Պառաւն կերթայ, մէ փնթի<sup>3</sup> ջույմ կառնու կու գայ մոշոպով<sup>4</sup>: Տղէն կու մմ<sup>5</sup> բերանն կառնու, կուլ տալ չի կայնայ, կասայ. Աս ի՛նչ աղի ջուր ա: — Ըմպայ, չի գտես մեր գեղին բանն. իսման իքեան իսման օխտ գլխով մէ ուշապմ<sup>6</sup> գետին ակն նստած ա, ջույ վայ թողուլ չի. օյն պէտք ա մէ աղջիկմ ուտայ, որ ջույ վայ թողու, էն ալ արունոտ, պղտոր մղտոր: — Օյ տեղ<sup>7</sup> ա, ես էնոր սպանիմ պիտի: — Աման օրդի, մի ասե, քեզի կուտայ: — Ձէ, ինծի տեղն խրատ<sup>8</sup> տուր ուրիշ բան չի ուզի: Պառաւն խրատ կու տայ. էն օյն ալ թագաւորին աղջկան սրէն էր:

Մանչն կեղնայ կերթայ, թագաւորին աղջիկն ալ հետ. կու գան մօտիկնան դելին, աղջիկն կու լար, մանչն կասայ. Մի՛ լա, ես քեզի խասլիմ: Մօտն որ հասնի, ղըլիծն քաշայ, էման մէմ չափայ դելին, որ իրեք փարչայ կընի ու գետն արուն կերթայ: Ժողովուրդն ղայրաթ կենայ, էման ջույ կրէին, էման ջույ կրէին որ, կասէին. Էս որ դելն երկու հոգի կերած ունի, էնթի<sup>9</sup> իժով<sup>10</sup> պոլ ջույ վայ թողու: Մանչն աղջկան հետ կեղնայ կու գայ, կասայ. Իտա պղտոր ջրեյդ ուր կրէք, պիծիկմ կեցէք, հիմի փաքնայ: Էնոնք որ տեսնուն, զարմնան, կերթան թագաւորին մուշտայ<sup>11</sup>, թէ էն զարիպ մանչն դելին զարկած ու քու աղջկանդ խասլած ունի: Թագաւորն կասայ. էն մանչուն բերէք հոգ:

<sup>1</sup> Տեղ ըրաւ: — <sup>2</sup> Պապակած եմ: խըրտ —, սիրտը թթու բան կ'ուզէ: — <sup>3</sup> Աղտոտ: — <sup>4</sup> Մոշոպայ, խորունկ թաս: — <sup>5</sup> կուլմ, կմկ, մէյ մը (կաթիլ մը) բերանն առնուլը: — <sup>6</sup> Ուշապ, վիշապ: — <sup>7</sup> Օյ տեղ, ուր տեղ: — <sup>8</sup> խրատ տալ, ցուցնել: — <sup>9</sup> էնթի, անոր համար: — <sup>10</sup> իժով, սաստիկ: — <sup>11</sup> Մուշտայ, աւետիք:

Մանչն կենայ կու զայ թագաւորին առաջ կակնի: Ի՞նչ մուրատ կուզիս, տղէս, կասայ թագաւոյն, ասա՛, ինչ որ կուզիս՝ կու տամ: — Ես օչինչ մուրատ չիմ ուզեմ, կասայ տղէն, էն կուզեմ մինակ որ ինծի մէմ լոյս աշխարհքն հանես: — Ատ դիժար<sup>1</sup> բան ասեցիր, համայ ի՞նչո՞ք<sup>2</sup> էնինք: Գնա՛ Ֆիլան տեղ մէ հաւքմ<sup>3</sup> կայ, մէկ ուրիշ դեւմ կայ, իժիր կերթայ, էնոր ձագերուն կուտայ. գնա՛ էն դեւին սպանա՛, էն հաւքն քեզ լուս աշխարհք հանայ կու:

Տղէն կենայ կերթայ. հաւքին բունին որ մօտենայ, կաշայ որ դեւն էլած ա, ձագերուն պիտի ուտայ. ինչո՞ր որ մէմ ղլլիճն քաշայ, դեւին զայնու, կտոր կտոր կէնայ: Զագեյն ճիճվացին<sup>4</sup>, հէմէն հաւքն վրէն Ֆիղաց<sup>5</sup>, հասաւ: Տեսաւ որ էն մարդն իրեն ձագերուն խասլած ունիլ, ասաց. Ինասնօղլի, ի՞նչ մուրատ կուզիս: — Ես օչինչ մուրատ չիմ ուզեմ, կուզեմ որ ինծի մէմ լուս աշխարհք հանես: — Լաւ կրնի, համայ գնա՛ օխտ տիկ գինի, օխտ տիկ ալ դմակ<sup>6</sup> եղ բե: Տղէն դնաց առաւ եկաւ: Հաւքն ասաց. Տէ թեւերուս վրայ ել նիստ, ղըլտք որ ասիմ, դմակ բերանս դի, կըլտք որ ասիմ, գինի բերանս լից: Տղէն էման էրաւ ու քիչքիչ քիչքիչ վեր ելան. մազմ ալ մնացած էր որ լուս աշխարհք ելնէին, դմակն պակսեցաւ. տղէն իրեն կրունկէն<sup>7</sup> կտրեց հաւքին բերանն դրաւ, հաւքն ալ իմացաւ ու բեյնին մէջ պեհեց: Ելան լուս աշխարհքն, հաւքն ասաց. Ել տոտա՛: Տոտել որ չի կայցաւ, էնչաղ<sup>8</sup> միսն հանեց ու իրեն տեղ դրաւ:

1 Գիժար, դժուար: — 2 Ի՞նչպէս: — 3 Անդզ կամ մեծ թաշուն: — 4 Կանչել: — 5 Սլանալ: — 6 Դմակ, ոչխրին ետեւի կախուած մասը, որ մինչեւ 5—9 հոխայ կը կշռէ: — 7 Կրունկ, դարշապար. նոյնպէս դռան վարի նստած տեղն՝ կրունկ կ'ըսուի: — 8 Ինչաղ, ան ստեն:

Տղէն շնորհակալ եղաւ հաւքին, քալեց գնաց, պոլ բաներ էրաւ լուս աշխարհքի մէջ ալ ու իրեն մուրատին հասաւ:

Ձ.

ՕՔՍՈՌՆՁ ԱՂԲՅՅՆ ՈՒ ԱՂԶԿԱՆ ՀԷՔԵԱԹՆՆ

Մէ մօրու մայմ կրնի. կճուճմ<sup>1</sup> փափայ<sup>2</sup> կէնայ, կասայ տղոց. Տարէք, այտին մէջ կերէք: Տղաքն առին գնացին. փափէն որ կուտէին, մէ ճնճղուզմ եկաւ ասաց. Ինձ ալ տուէք, ձեզի ասելու բան ունիմ: Աղբայն ասաց. Տանք ոչ, քոյն ասաց. Տանք: Տուին որայ, ճնճղուզն էնոնց ասաց. Ձեր հայն ու մայն կու գան հիմի, ձեզի մէկիդ վերի այտն մորթին<sup>3</sup>, մէկիդ ալ ներքի այտն. Թէզ ելէք, խտանեսու<sup>4</sup> փախէք:

Աղբայն ու քոյն ելան փախան. գնացին, գնացին, երկու ճամբու վրայ մէ կնիկ մարդմ բաստ եկաւ, ասեց էնոնց. Ներքի ճամբով երթաք ինա՝ իրեք ամսով հասնիլ չէք, իսա վերի ճամբովս երթաք ինա՝ իրեք աւուր մէջ բովիք<sup>5</sup> քաղաքն. համայ ճամբէնին ջուր խմել միք՝ օյ տեղ որ մալի ոտք կոխած ա, չէնէ<sup>6</sup> դուք ալ էնոնց պէս կրնիք:

<sup>1</sup> կճուճ, կաւէ շինուած երկու ունկով կերակուր եփելու աման: Բոզ, ատոր մեծը: Ծափ, տափակ շինուած, խաւիծ կամ փիլաւ եփելու համար: Խոտուժ, կճուճին փոքրը: Եղհալ, աւելի փոքր: Խուփ, կաւէ կափարիչ: Դոււմզ, փայտէ կափարիչ: — <sup>2</sup> Լազուտի խուտէ եփուած կերակուր, զոր եղով կամ կաթով կամ մածնով կը ճաշակեն: Թանխաշ, անոր նման թանով եփուած: Փոխինդխաշ, խաւիծ, ձուածեղ, պանրնտապակ: Կեաշգունդ, կամ ճեաշգունդ, եփուած խմոր, մանր գնդած, զոր եղով ու մեղրով կ'ուտեն: Ճմուռ, եղ ու հացի փշուրք մէկանդ եփուած: Հասուլթայ, քիչ մը խուս եղով ու մեղրով եփուած: Կաթնառանց, կաթմուսած: Թերթայ, թանապուր. մալէզ, պահոց ապուր: — <sup>3</sup> Մորթել, դանակով սպաննել: — <sup>4</sup> Աւր կողմերէդ: — <sup>5</sup> Բովիլ, հասնիլ: — <sup>6</sup> Չէնէ, ապայ թէ ոչ:

Ճամբուն հետ, ճամբուն հետ գնացին, քոյն համբերեց, ջույ չխմեց. աղբայն չկայցաւ, խմեց ու մէ պիծի գառմ եղաւ: Բոյն էնոր կառնու, տանի քաղաքն, մէ ուռի ծառիմ տակն շուքն վար նստի խելմ ժամանակ:

Մէկալ օյն թագաւորին մանչն կու գայ անկէց կանցնի, աղջկան տեսնու, կը հաւնի. օրովայ<sup>1</sup> ղուկայ, էնոր բերել կու տայ, կասայ. Ես քեզի կառնում: Աղջիկն կասայ. Ես չիմ կարգուիլ, իսա գառս իմ աղբայս ա, օյ տեղ որ երթամ՝ հետս կառնում ու կը պտտիմ. թէ որ ղապուլ կէնես որ աս գառս մեզի հետ պառկի, մեզի հետ ուտայ, մեզի հետ խմայ, ես ալ քեզի կառնում: Մանչն ղապուլ էրաւ ու իրար առին. ասման պոլ վախտ խաղաղ կապրէին միասին, գառն ալ իրենց հետ:

Արէն<sup>2</sup> երկու տարի անցաւ չանցաւ, մօրու մայն իմացաւ որ իրեն աղջիկն թագաւորին հայս եղած ա, եկաւ մօտն տես<sup>3</sup>: Մէկալ օյն երկուսն մենակ կելնին ման գալու: Կու գան մէ ջուրիմ մօտ, մայն կասայ. Օ՞րդիս, մէմ իտա ուռնտ հայլանիդ ծա<sup>4</sup> տուր, հագնիմ, աշիմ թէ ինծի ալ ուրմիշ<sup>5</sup> ին թէ: Աղջիկն որ հարկնին հանայ թէ չէ, մայն հէմէն էնոր ուռանց<sup>6</sup> կու տայ, ձգայ ջուլն. էնոր հարկնին հագնի ու կերթայ թագաւորին մանչուն մօտ կակնի: Էն ալ խաբուի, գիտայ թէ՛ շիտակ<sup>7</sup> իրեն կնիկն ա: Էրկու աւուր վերջ աս կնիկն սուտ<sup>8</sup> հիւանդ գրնի, կասայ մարդուն. իտա գառդ մորթա, եփա, ուտիմ օր լաւնամ:

<sup>1</sup> Օրովայ, մարդ: — <sup>2</sup> Արէն, մէջտեղը: — <sup>3</sup> Տես, տեսութեան: — <sup>4</sup> Օ՞ տուր, ծա տուէք, գէպ ի ինձ. նաև տուր, նաև եկէք, նաև չքուէ, գէպ ի ինձ: Նէն տուր, նէն գնա, նէն չքուեցէք, գէպ ի անոր: — <sup>5</sup> Յարմար: — <sup>6</sup> Հրել: — <sup>7</sup> Սաղդ: — <sup>8</sup> Շինծու, կեղծ:

Էն էգուանն ալ, ինչ կէնես որ, ժամկոչն որ մուժ ի մուժ՝ ժամ կերթայ շաւաղի՝ հետ՝ մէ ձէնմ՝ կառնէ ձորէն, իսման կասէր.

“Ժամկոչ, ժամկոչ, ժամն էկէ,  
Մեռնիմ քու սուրբ սատաղիդ՝.  
Չաւտաք առ սուտ հիւրնդիդ,  
Չմորթէք իմ գառնուկ աղբօյս:”

Ժամկոչն ժամէն եկաւ թագաւորին մանչուն մօտ, ասաց. Գիտես, քեզի մէ խալպաթ բանմ ունիմ ասելու: — Ասա, ժամկոչ աղբար: — Աս էգուան մուժ ի մուժ ելած էի, ժամ կերթայի, ճամբէն ձորի մէջէն մէ ձէնմ եկաւ անկճիս, իսման կասէր. “Ժամկոչ, ժամկոչ, ժամն էկէ, մեռնիմ քու սուրբ սատաղիդ. շաւտաք առ սուտ հիւրնդիդ, չմորթէք իմ գառնուկ աղբօյս:” — Այ որման խապար ա, ել երթանք աշինք, շտա՛կ ա թէ չէ:

Կելնին կերթան. էն ջրին որ մօտ կընին, մէկն իս- դուս կերթայ, մէկն ալ ինդուս, երկուքն կակնին անկաճ կէնին. կաշին որ ձէն եկաւ, ալի էման կասէր. Ժամկոչ, ժամկոչ ժամն էկէ...: Թագաւորին մանչն ալ իրեն ան- կաճով իմնցաւ: Էկան ջրին ափն, մէջն ի վար ճվացին, ասեցին. Դուս ել, վո՛վ ես օրայ, հոտայ ինչ դատիս: Զէն եկաւ, ասաց. Մերկ իմ, չիմ կարել: — Մենք քեզի հալաւ բերած ունինք, ասեցին էնոնք, դու դուս ել արի: Էն ալ ելաւ, հալփին հազաւ ու եկաւ էնոնց մօտ: Էնոնք որ տեսան իրեն ու ճանչեցին, արմնցան ու դարմնցան: Թա- գաւորին մանչն ասաց, տէ հէքեաթ էրա ինչոր գլխուդ ան- ցած ա: Էն ալ ասեց. Մօրու մայս, իսման իսման, ինճ ի

<sup>1</sup> Ըստ կանուխ: — <sup>2</sup> Ըաւաղ, արշալոյս: — <sup>3</sup> Աղբօյս — Թիւն:

խաբեց տարաւ, պիտի սպանել էր ինձի, համայ Աստուած պէհեց, քու աղօթքիդ լսեց:

Աս բանն թագաւոյն ալ կիմանայ ու պող նեղւորի կու: Իզին կէնայ, մէ այղըր ձիմ բերել կու տայ, էման գէշ որ, աչուրներէն կրակ ու բոց թռչիր. մօրու մայն բերին ատ ձիուն ագիքն կապեցին ու թռուցին, էման որ փարչայ դիքեայ եղաւ ու կորաւ: Ասման կընի գէշ մարդուն հայն: Ու իրենք պոլ վախտ խաղաղ ու ուրախ անցուցին միասին զառնուկ աղջոյն հետ:

Վով որ ուրիշի փորձանք լարայ, առաջ ինքն կոյսուի:



## Է.

### Ծ Ե Ր Ո Ւ Ն Ի Կ Ի Ն Ն Է Կ Ե Ա Թ Ն

Իրեք օրթախ<sup>1</sup> կընին, միատեղ կերթան ման գալու. կու զան մէ տեղմ, մէ պառակն<sup>2</sup> մարի<sup>3</sup> ա, մէ պառակն ալ սոր<sup>4</sup>: Մէկն կասայ. Ախ. իսա մարիս հաղող ընիր: Մէկն ալ կասայ. Ախ, ուր ա թէ իսա սորեյս տաւար<sup>5</sup> դառնային: Աստուած լսեց էսոնց խորհուրդն. մարին շետակ պաղ դարձաւ, էն մարդն եղաւ պաղպանձի: Սորեյն ալ տաւար դարձան, մէկալ մարդն եղաւ տարւհովիւ: Երրորդն ալ ասաց. Ես օջինչ չեմ ուզի, մէ հալալ<sup>6</sup> կաթկեր ընկեյմ կուզիմ, ինձի ուրիշ բան պէտք չա:

Աս որ խօսէին, մէմալ աշեցին օր հայսնառն<sup>7</sup> եկաւ, հայսին կաճնած, ձիու վրայ դրած տանէին պսակելու:

<sup>1</sup> Օրթախ, ընկեր: — <sup>2</sup> Պառակ, կողմ, երես: — <sup>3</sup> Մարի, անտառ: — <sup>4</sup> Սոր, մանր մուշք քարերու կոյտ: — <sup>5</sup> Տաւար, խաչիք: — <sup>6</sup> Հալալ, արդար: — <sup>7</sup> Հարսնաւ, հարրը տանողները:

Հալալ կաթկեր ուզողն գնաց ձիուն լուլարէն բռնեց կակնեցաւ, ասաց. Աս իմ հախլուխս<sup>1</sup> ա, նոր տանիք: Մարդիկ բոլոր վրայ եկան, էնոր պիտի լաւմ դբէին<sup>2</sup>, մէմնալ մէ ծերունիմ եկաւ ասեց. Ձեր տավի տառապէն ի՞նչ ի կայ, մէ խօսքմ ասիմ, անկաճ էրէք. իտա ձիուդ տուպրակն քինթն անցուցէք, հայսն ալ վրէն, հետն ոչով չերթայ, ետ<sup>3</sup> թողէք երթայ թէ՛ նոր<sup>4</sup> կերթայ: Էման էրին. ձին գնաց, գնաց, գնաց, էն հալալ կաթկեր ասողին դուռն կակնեցաւ: Էնչաղ ատ հայսիդ էն մանչուն տուին ու տուն տեղ եղան: Աս իրեք օրթալսն ալ խելմ վախտ ասանկ լաւ կառավարուէին իրենք իրենց:

Օրին մէկն մէ ծերունիկմ եկաւ (մեր Տէյն Յիսուս Բրիստոսն էր) հովուին տեսնելու, մօտեցաւ ու ասեց. Ինձի պիծիմ կաթ տու խմեմ: — Կաթէն պոլ ի՞նչ կայ, էն ալ ասեց, խմա՛ ինչքան ուզիս: — Իտա սեւ օջիւրիդ կաթէն կուզիմ: — Ատ իրեք տարի ա ստեյջ մնացած էր, հիմի ալ իրեք գառ բերած ունի. ասորմէ չիլնիր ու, ուրիշ կուզե՛ս, տամ: Յիսուս պիծիկմ նէն կերթայ<sup>5</sup> ու կասայ. Բար էիք ու ալի պիրատի<sup>6</sup> քայ դառնաք: Մէմ ալ տաւայն որ պայիրն<sup>7</sup> ունտ մաղուած<sup>8</sup> էին, այծեյն իրենց տեղն, օջիւայն ալ իրենց տեղն, հովիւն իրեն տեղն բոլոր քար կտրեցան մնացին, մինչուկ հիմակ ալ կան:

Ետեւ<sup>9</sup> ծերունիկն ելաւ գնաց, մտաւ պաղն, պաղպանձին<sup>10</sup> ալ հոն էր, էնոր ասեց. Ճուլթմ<sup>11</sup> հաղող տու,

<sup>1</sup> վարձք: — <sup>2</sup> կամ՝ շոճել. դբդբուն հանել, ստոտիկ ծծծել կամ թակել, շփել, շքբունն հանել: — <sup>3</sup> էտ թողուլ, արձակել: — <sup>4</sup> նոր, ուր: — <sup>5</sup> նէն երթալ, հեռանալ: — <sup>6</sup> Պիրատի, բոլոր: — <sup>7</sup> Պայիր, ձորափ: — <sup>8</sup> Մաղուիլ, ցիրցան արծիլ: — <sup>9</sup> Ետքէն: — <sup>10</sup> Այգեպան: — <sup>11</sup> Ճուլթ, խաղողի ողկոյղ: վաղ, օրթատունկ: Ժոււ, թթու՝ ստորին խաղող. պաղ-ժոււ, խոշոր տեսակն: Այծպտուկ, շատ մեծ տեսակ: Կոծիծ հաղող, երբ

իժով խշրած<sup>1</sup> իմ: — Հաղողէն պող ի՞նչ կայ, ասեց պաղպանձին, ձեռքովդ առ կե, վոյն որ կուզես: — Ոտաքու առջեւի հաղողէդ տու, ուտիմ: — Ձէ, ասորմայ չինիր, ուրիշ կուզեն, տամ: Ծերունին ետ դարձաւ, անիծեց, էն պաղն ալի մարի եղաւ ու պաղպանձին ալ իրեն տեղ ծառի պէս չոյցաւ մնաց:

Յիսուս անկէ ելաւ գնաց իժիր Ծերունիի խեղճ կերպարանք մտած: Օճանքէն մարդմ ըստ եկաւ, ան էր, որ իրեն հախլուխն առած ունիր. Ծերունիին առաւ տարաւ իրեն տունն, ընկերոջն<sup>2</sup> ասաց. Բա, իսոր մոռաթ կեցի, ես հիմի կու դամ: Կնիկն նե առաւ Յիսուսին, օտուին լուաց ու տեղ էրաւ: Ծերունին ասաց թէ՛ շատ ցաւագեար իմ: — Է՛, քեզի ի՞նչ դեղ կընի ասաց կնիկն: — Ինծի օխտ ամսկան տղին արունն դեղ ա, լուացուիմ որայ լաւ կընիմ: Էն չաղն կնիկն տղին առաւ տարթին<sup>3</sup> մէջն ի վար մորթեց ու Յիսուսին երեսն լուաց ու էնոր ցաւերէն խասից իրեն: Մտքէն տղին ալի նե դրաւ օրրոցքն ու բալուլեց<sup>4</sup>:

Իրկունն անցած էր, մարդն եկաւ նե մտաւ տունն, ասաց. Տղէն ո՞ւրան<sup>5</sup> ա: — Ձի՞գտես, ըմպայ տղին մորթած ունիմ: — Է՞<sup>6</sup> չէիր ասել, որ ես ալ մտն ընայի, որ վարձք առնէի: Նստան որայ՝ Ծերունին ասաց. Մէմ տղին աշեցէք թէ՛ ինչ դատի: Էնոնք ալ աշեցին որ տղէն քուն եղած ա, շմայ՛ որ: Էգուընայ լուսու դէմ ելած էին, Յի-

Հատերն կամ պտուղներն շատ խիտ ըլլան. հաւիլիկ, շատ մանր հատերով: Գէշիք, սղիւզիկ, չկերուածն, մնացածն: — <sup>1</sup> Խշրիլ, սիրտը թթու բան ուզել ուտելու համար: — <sup>2</sup> Ընկեր, ընտանի, տնեցի, կին, կողակից: — <sup>3</sup> Տարթ, լուացուելու տաշտ: Գտտխան, հացի տաշտ: Խան, ատոր փոքրը: — <sup>4</sup> Բալուլել, պատել: — <sup>5</sup> Ո՞ւրան ա, ո՞ւր տեղ է: — <sup>6</sup> Է՞ (էր), ինչո՞ւ: — <sup>7</sup> Շմայ, (ծանր) շունչ առնուլ քնոյ մէջ: Կըքպաւկիլ, նստած տեղն քուն ըլլալ ու զարթիլ մերթ ընդ մերթ:

սուս էնոնց հետ խօսեցաւ, ասեց. Աճեցէք եւ բազմեցէք, ինչ որ դուք ինձի էրիք, ես ալ ձեզի կէնիմ: Վրէնին խաչակնքեց ու աներեւոյթ եղաւ: Ընոնք իմացան որ աս ծերունին մեր Տէրն Յիսուսն էր: Իրենք բարի ու երջանիկ ապրեցան միասին:

## Ը.

## Օ Ձ Ի Ն Մ Է Կ Ա Լ Ա Ռ Ա Կ Ն

Վախտին ժամանակին մարդմ կընի, նեղութեան մէջ ա. կերթայ կթայ կոմն ու քաղրով՝ կաթն զնայ կու պատուհանին մէջ ու ետ դառնայ բանին: Մէմալ կու գայ ինչ տեսնու, կաշայ որ քաղրին մէջ կաթ չկայ ու մէ օսկիմ վայ դրած ա: Օսկին կառնէ ու կասայ. Բաղրէմ կաթ մէ օսկի, աս լաւ բան ա: Արի կոմն կթայ ու քաղրով զնայ պատուհանին մէջ. կաթն կու տար, օսկին կառնէր, կաթն կու տար, օսկին կառնէր Ասծուն օյն<sup>2</sup> ու ասման եօլայ կերթար:

Ասման խելմ վախտ կանցնի, օյն օսկիմ առնելով զէնկիննայ, ինքն իրեն կասայ. Ես ինչ էնիմ իբքան փարայ, երթամ ման գամ, աշխարհք տեսնում: Կանչայ տղին ու կասայ. Օղուլ, ես իսման զէնկիննայ, դու ալ ինձի պէս խելք էրա, որ զէնկիննաս: Ու ինքն կիշնայ կերթայ հեռաստան<sup>3</sup>:

Տղէն հօյն ասածին պէս կէնայ, օյն մէ օսկիմ կառնէր: Կանցնի մէ-երկու օր, քաղրով կաթն վայ զնայ

1 Բաղրայ, կաւէ պնակ, սկաւառակ: — 2 Ասծուն օյն, ամէն օր: — 3 Հեռաստան, հեռու երկիրներ:

ու թագչի, կասայ. Մէմ աշիմ թէ՛ իսա օսկիս վայ դնողն վով ա: Մէմալ կաշայ, որ պատէն մեծ օձմ դուս կենայ, կու գայ կաթն կուտայ, օսկին վայ դնայ, այլ նե մտնու ծակն ինի: Հրմ, կասայ, իշտայ օսկեստանն իսա ծակիս մէջ ին, օձին սպանեմ ու պիթուն ինծի կէնիմ, ալ ինչ էմէն օր նեղութիւն քաշիմ: Մէկալ օյն մէ սուրուդիկ<sup>2</sup> քայմ կառնէ կերթայ այլ իրեն տեղն թագչի: Օձն որ կու գայ կաթն ուտելու, հէմէն քայն հասցնայ օձին, համայ տուտին չի դայ, պոչին կու գայ. պոչն կտրի ու օձն փաթուի տղին ճիտն: Տղէն որ ճիճվայ<sup>3</sup>, մարդիկն հասնին. օձն փախչի, նե մտնու իրեն ծակն. տղէն՝ լեղին պատուած կրնկնի գետինն: Մարդիկն վերցնուն, տանին տունն. երկու օրէն մեռնի, զարկուած<sup>4</sup> էր:

Աս բօթն թաղ հօյն ականձն հասնի հեռաստան երկիրներ, ետ դառնայ կու գայ հայրենիքն: Պոլ ախ ու վախ կենայ, շատ կակիծ քաշայ տղին վրայ. կերթայ մտնու դումն ու իրեն տեղն կակնելով կանչայ օձին. Հէյ, օձ աղբար, դուս եկէ, դուս եկէ մէմալ, մենք այլ իրար աղբար ենք: Չէն, հոտ չի կար հէչ: Այլ կանչեց. Օձ աղբար, օձ աղբար, մէմ դուս եկէ թէ՛ ինչի՛ եղաւ ադ բան: Մէմալ կաշայ, որ օձն քարին տակէն պիծիմ տուտն դուս բռնայ ու խօսի. Չէ, ինսանօղլի, չէ, դնա՛ ն'ր որ կուղես գնա, քանի որ քու տղեդ ցաւն քու փորուդ մէջն ա ու իմ պոչիս ցաւն իմ փորուս մէջ, մենք ալ իրար աղբար չինք կայնայ ընիլ. դնա՛ դու քու բանիդ:

Մարդն շուարած ետ դառնայ: Կու լար կողբար. ալ եղածն եղած էր:

<sup>1</sup> Ինի, ծակն ինի, տունն ինի, Ժամն ինի, դումն ինի, գեպ ի ծակը...  
 — <sup>2</sup> Սուրուդիկ, սրածայր: — <sup>3</sup> Ծվճվալ, կանչվաւտել: — <sup>4</sup> Զարկուել, սաստիկ վախէ մեռնիլ:

Թ.

## Ք Ո Ւ Ր Տ Ա Ղ Ջ Կ Ա Յ Հ Է Ք Ե Ա Թ Ն

Ժերեյն պատմին, ասկէ պոլ տարի առաջ, հազար, երկու հազար տարի կըլնի, Սթանպոլ քաղաքն, կասին, Սուլթանն մէ հեղ տնով կերթայ Բուրտխատանն ի վար ման գալու: Պոլ քաղաքներ տեսնուն, գեղանուն սարեյն քալին. կու գան մէ գեղմ, դուր՝ տեղմ՝ մի արօտի՝ վրայ վայ նստին: Անցնող անցնողի ա, գնացող՝ գնացողի, աղջիկ ու մանչ լեք լեք էին. թագաւորին մանչն մէ քուրտ աղջկանմ կու հաւնի ու էնոր հետ սէր կընկնի: Թագաւորն ալ կիմանայ, կասայ տղին. Օղնւլ, մի էնեւլ, մի՛ ըլնիւլ, քուրտի աղջիկն ինչիկայ. ես քեզի փաշե աղջիկ պատրաստած ունիմ: Տղէն կասայ. Ձէ, հիւլայ ես էն քուրտ աղջկան կառնում, ինձի դուր՝ ա էն:

Թագաւորն հրաման կէնայ, որ աղջկան կանչին: Աղջկան կերթան բերին, կասին. Թագաւորն քեզի պիտի իրեն հայս էնայ, կուզնս, թէ չա: — Լաւ համայ, կասայ աղջիկն, էնոր մանչն ի՞նչ փեշակ՝ գիտայ որ առնում: — Աղջի, ի՞նչ կասես, խելքդ թուցամ՝ ունիս թէ, չէ, էն թագաւորի մանչ ա: — Ես թագաւորի մանչ մունչ չիգտիմ, թէ մէ փեշակմ գիտայ՝ էնոր կառնում, թէ չէ, չիմ: Կու գան թագաւորին կասին. Բանն իսման իսման ա: Մանչուն ճայն կտրի, կերթայ բանել տեղ կու մտնու. մէ տարի զրուխն կախայ բանի ու լաւ զալիչայ՝ գործել կու սորվի: Ետեւ քուրտ աղջկան կառնեն կերթան Սթանպոլ, էնոր թագաւորին մանչուն հետ պսակին. օխտ օր,

1 Շիտակ, հարթ: — 2 Մարգարետին: — 3 կամ՝ գուրեղի, սիրելի, հաճոյական: — 4 Փեշակ, արուեստ: — 5 խելքը թուցընել, խելագարիւլ: — 6 Ղալիչայ, գորգ:

օխտ գիշեր հայսնիք կրնի, պոլ քէՖ, պոլ ուրախու-  
թիւն կէնին:

Կանցնի օր, կու գայ ժամանակ, մէ ձէնմ՝ կեղնայ թէ՛  
Ֆիլան տեղն մէ կասթինցէմ՝ կայ, էնոր պէս լաւ, համով  
կերակուր եփող չիկայ: Թագաւորին մանչն ղըլավաթն  
փոխայ, կասայ. Մէմ երթամ աշեմ, շետակ ան, թէ չէ:  
Կերթայ վայ նստի, կասայ. Էմէն սորթ՝ կիրակուր բերէք  
ինծի: Տեփուրն՝ կածնած՝ բերին առաջն վայ դրին. կու-  
տէր օրայ, մէմուլ աշեց որ, վար կերթար. ինջաւ ինջաւ  
ու խորունկ մէ զընտանմ՝ կակնեցաւ. չորս հինգ հոգի վրան  
թռան, ղամով՝ պիտի մորթէին էնոր, համայ մարդն  
էնոնց ասաց. Ինծի որ սպանէք, ձեզի ի՞նչ օգուտ, լուր  
կեցէք ինծի հողայ, ես լաւ ղալիչայ գործել գիտիմ,  
ձեզի տարին 400—500 մանէթ շահ կրնի: Էնոնք ալ  
անկաճ էրին: Անցաւ երկու երեք օր, թագաւորին մանչն  
կորած էր, թալալ կանչեցին, ապեար ման՝ բերին, ու-  
րեք չքտան. թագաւորն, իրեն հայսն ու բոլոր ժողովուրդն  
իժով մուքր՝ էին:

Թագաւորին մանչն էն տեղ խարսին մէջ գլուխն  
կախեց ու բանեցաւ, կախեց ու բանեցաւ. տարիմ կընիր  
ու չէր, մէ մեծ ղալիմ գործեց, վրէն ալ իրեն անունն  
բանած էր ու գրած ունիր թէ՛ ինքն Ֆիլան տեղն խա-  
բըսն ա: Ղալին կու տայ մարդկանց, կասայ. Աս լաւ գին  
ունի, տարէք քաղաքն ծախեցէք, մինչուկ հարուր օսկի  
տուող կրնի:

<sup>1</sup> Կասթինցայ, ռ.ս. հիւրանոց: — <sup>2</sup> Սորթ, տեսակ տեսակ: — <sup>3</sup> Տե-  
փուր, միակտուր, կլոր, գոգածեւ թեթեւ կերակրոյ սեղան: Գուսան,  
միակտուր նոյնպէս փայտէ հայ շաղուելու տաշա: Խան, ատոր փոքր:  
Վիտի, ատոր ալ փոքր: — <sup>4</sup> Կածնել, սարքել, զարգարել: — <sup>5</sup> Ղա-  
մայ, դաշոյն: — <sup>6</sup> Ման բերել, պտոցնել: — <sup>7</sup> Մուքր, վերել, արտում,  
տարիլ:

Մարդիկն՝ զային կռնկնուն ձգած, ճոււարով<sup>1</sup> կերթային քուչաներէն<sup>2</sup>. սարային դռնէն սնց<sup>3</sup> կենային, մէմալ թագաւոյն տեսաւ որ, լաւ զայիմ ա, վրէն ալ լմանիր<sup>4</sup> թէ՛ գիր կար: Ժառէն<sup>5</sup> ղրկեց բերել տուաւ. հարուր օսկի ու պեցին, թագաւոյն համրեց տուաւ ու էնոնց ճամբեց: Ղային տարին մեծ օտէն փռեցին ու վրէն նստան. գլյն օր կարդացին, բոլոյն շվարած մնացին. գրէն իմացան որ իրենց որդին Ֆիլան կասթինցէն խաբս ա եղած:

Թագաւոյն թախտէն վար ինջաւ, ձեռաց իզին երաւ. հազար ապքեար պատրաստ կեցան իրենց մեծուորներով, գնացին խալպաթ էն կասթինցէն չոյս կողմէն փաթտեցին: Դռնեյն կոտորեցին, միջի մարդկանց բռնեցին, ոտուին ու ձեռուին կապած վայ ձգեցին: Պոլ ման եկան թագաւորին տղին. էն վերջ մէ խալպաթ դուռմ ալ գտան կոտորեցին նե մտան, տեսան որ նստած զալիչայ բանիր: Իրեն առին դուս եկան: Ժողովուրդն դէլ դէլ լցուած էր, թագաւոյն ալ թախտն նստած. էմէնքն ուրախութենէն կու լային, հալայ թագաւոյն ու իրեն հայսն ու բողոր տնեցիքն: Թագաւոյն հրաման երաւ, որ էն կասթինցէին ոռն կրակ տան ու էն գէշ մարդիկն ալ մէջն սաղ սաղ երին կոյսուին: Էման ալ երին. կասթինցէն էրեցաւ, էն մարդիկն հետն սաղ սաղ էրեցան ու խանձեցան:

Թագաւոյն մեծ ուրախութիւնով մտաւ զունաղն. հրամեց որ բողոր քաղաքն օխտ օր, օխտ գիշեր քէֆ էնայ իրեն թագաւորական ծախսով:

1 Ճոււար, պուալ, կանչել: — 2 Գուչայ, փողոց: — 3 Անց կենալ, անցնել: — 4 Լմանիր, նմանիր: — 5 Ծառան:

ժ.

## ԱՂՈՒԷՍԻՆ ՀԷՔԵԱԹՆ

Մէ ջաղացանմ կրնի, տուն չունիր, տեղ չունիր, օչինչ չունիր, մէ ջաղացքմ ունիր, այլուր կաղար ու ծախէր, էնով եօլայ կերթար: Մէ աղուէամ ալ կու գայ ջաղացանին կասայ. Ձիլնիր, ինծի ալ աղբար էնես: — Ես քեզի օրման<sup>1</sup> աղբար էնիմ, տուն չունիմ, օչինչ չունիմ. քեզի որ աղբար էնիմ, նոր<sup>2</sup> տանիմ: — Ես իսա թալբրուս<sup>3</sup> մէջ կենամ, ինծի հերիք ա: — Երբոր ատման ա հանայ, ընինք աղբար: — Լաւ, ընինք:

Աղուէան կերթայ ման դալու. պոլ կուշանայ ու ալի ես դառնայ, կու գայ ջաղացանին մօտ: Կասայ. Աղբար, չիլնիր, թագաւորին աղջիկն առնուս, խիստ լաւ կրնի: — Ձէ, չիլնի. ես տուն չունիմ, տեղ չունիմ, օրէ օր մէ ապրուստմ ունիմ. թագաւորին աղջիկն առնում, նոր տաննք իսա թալբրուս մէջ: — Ձէ, պէտք ա առնես: — Է, առնում, առնում. գնա՛ ասա տունն:

Աղուէան կելնայ կերթայ թագաւորին մօտ, կասայ. Աղջիկդ Քիլան մանչուն տուր: — Ձէ, մինչուկ որ ես իրեն տեսնում ոչ, աղջիկ չիմ տալ: Ետ դառնայ կու գայ աղբօյն մօտ, կասայ. Հայտէ ելթանք թագաւորին, որ քեզի տեսնու ու աղջիկն տայ:

Ելան ճանապարհ. գնացին, գնացին, մէ ջույմ րաստ եկաւ. հուն աղուէան ջաղացանին գէշ հայուրնին նե լրեց ջույն ու ալի գնացին: Կէս ճամբէն աղուէան թագաւորին իսպար էրաւ թէ՛ փեսացուն ջույն ինկաւ, հալաւ չունի. հալաւ ղովեցէք որ հագնի գայ: Թագաւորին իմաց տուին,

<sup>1</sup> Օրման, ինչպէս: — <sup>2</sup> Նոր, սուր: — <sup>3</sup> Թալ, ծախ, շուին:

ասաց. Գնացէք ինա խճպին<sup>1</sup> հալուընին բերէք ու զըկեցէք, որ հագնի գայ: Հալուընին եկան. աղուէան իրեն աղբոյն հագցուց էտ հալուընին ու թամպէ<sup>2</sup> երաւ թէ՛ թագաւորին օտէն որ մտնուկը, չինի՛ թէ հալուընուդ վրէն ի վար իժով աշես, ետեւ կասին թէ՛ Չտես<sup>3</sup> ա:

Եկան իջան թագաւորին ղունաղն, նե մտան օտէն ու էմէնք իրենց տեղն վայ նստան: Փեսացուն վերայ<sup>4</sup> իրեն հալուընուն վրէն ի վար կաշէր, կաշէր: Ըն ժում մաննչեյն կասին. Գի<sup>5</sup>, գիտես թէ մեր փեսացուն հէչ հալաւ չունի տեսած, իժիր աշուին վրէն ին: Աղուէս աղբայն որ կիմանայ, թռչի առաջ, կասայ. Ի՞նչ կասէք դուք, մէմ ատոր հալուընին տեսնէիք թէ՛ ի՞նչ լմանէին. ատոնց չի հաւնիլ, էնթի<sup>6</sup> իտման կաշայ: Ըն չաղն թագաւոյն հրաման կէնայ, կասայ. Գնացէք ինա մէկալ խճպին միջի հալուընին բերէք: Ընոնք ալ բերին ոռունտ ոռունտ հալուընիմ հագաւ ու կածուեցաւ. աղջիկն ուն տուին: Հայսնիք էր, մեծ ուրախութիւն ու քէՖ կէնէին:

Հինգ սահաթ անցած էր, հայսնառն<sup>7</sup> ելաւ. հայսին ու հայսնբրոջ կածնած ջորու վրայ դրած ունէին, թագաւոյն ու թագաւորաղբայն ալ օտքով էին. տկին ու քեամաչին ձէնն հէչ կտրիլ չունիր, երկու տկար էին, երկուս ալ քեամաչաճի: ԴՅելմ եկած էին, կէս ճամբէն աղուէս աղբայն առաջ անցաւ, թռաւ գնաց: Ըն տեղանք մէ դեւմ կար, տունմ ունիր, իման օսկի էր: Աղուէս աղբայն կու գայ ատ դեւիդ կասայ թէ՛ թէզ գնա ինա խոտին դէզնն մէջ թաքի, թէ չէ հազար հոգով եկած

1 Խճպ, ընկուզին չոր փեճեկը: — 2 Թամպէ էնել, ապարել: — 3 Չտես, ծակ աչք: — 4 Վերայ, շարունակ: — 5 Գի կամ գիւշէ, ինչ զարմանալի է, աւելի աղոց լեղաւ: — 6 Անոր համար: — 7 Հարսը ասնողները:

ին, քեզ ալ ու քու տունդ ալ պիտի էրին. զնա փախի, դու հալայ խալիս: Դեւն սեպեց<sup>1</sup>, զնաց խոտին մէջ թաքաւ: Աղուէսն ետեւունց<sup>2</sup> խալպաթ զնայ ու դէզին ոռն կրակ տուաւ. ձեռաց<sup>3</sup> բոցն վեր թռաւ ու դեւն կճըճ կճրո էրեցաւ: Ըն օսկեցայ տունն բոլոր աղուէսին մնաց: Ետեւ շուշով գինի ու մազայ առած՝ զնաց ալի հասնառին դէմ<sup>4</sup>: Ջաղացպանն իժով մքրած էր. համայ աղուէսին որ տեսաւ գինիով դէմ եկած՝ երեսն խնտում եկաւ պիծիկմ: Չուկքի մտքին մէջն ի վար կասէր. Ես խաղտիկ ժողովուրդ նոր տանիմ, ի՞նչով կառավարիմ: Աղուէսն հարսնառին առաւ տարաւ էն լաւ տունն ու կառավարեց էնոնց: Կիրակուրի նստան. դզնին<sup>5</sup> ու դանակնին ու վերկրիչնին<sup>6</sup> ու թապաղնին պիրատի օսկեցայ էին: Ջաղացպանն ալ շաշմիշ եղաւ թէ՛ Օ՛յ տեղ եկած ինք: Իրեք օր հարսնիք էր. պոլ քէֆ, պոլ ուրախութիւն էրին:

Մարդիկն որ ետ դարձան, թագաւորին ասին. Ախ, մէմ տեսնէիր փեսիդ տունն թէ՛ ի՞նչ կու լմանիր աճապ, նեսի շէանն ու դուսի շէանն պիթուն օսկի են: Թագաւոյն ելաւ զնաց. տեսաւ ու հաւնեցաւ. շարթմ կեցաւ ու ալի ետ դարձաւ զնաց տունն:

Մէկալ օյն աղուէս աղբայն ջաղցպանին կասայ. Ես օր մեռնիմ, ինձի ի՞նչ կէնես: — Ի՞նչ կէնիմ. ի՞նչ կէնիմ, վրէտ մեծ տունմ կը շինիմ: Երկու օր կանցնի վրէն, աղուէս աղբայն սուտ մեռել կըլնի, իման փատի պէս վար կընկնի գետինն: Ջաղացպանն ալ գիտայ թէ՛ շտակ ա, կերթայ դրկիցնին կանչայ, կասայ. Եկէք, աղուէս աղբայս մեռած ա, եկէք թաղինք: Դրկիցնին մօտ

<sup>1</sup> Սեպել, հնազանդիլ: — <sup>2</sup> Ետեւունց, ետեւէն: — <sup>3</sup> Ձեռաց, իսկոյն: — <sup>4</sup> Դէմ երթալ, դիմաւորել: — <sup>5</sup> Դգալ: — <sup>6</sup> Պատառաքաղ:

եղան, ասին ջաղացպանին. Ի՞նչո թաղէք: — Ի՞նչ թէ ի՞նչո թաղէք. օտքէն բռնեցէք, քաշեցէք, քաշեցէք, նե ձգեցէք հողի մէջ. ըմպայ ի՞նչ պիտի էնէք: Աս որ ջաղացպանն կասայ, աղուէսն հէմէն վեր թռչի, դարվեր կակնի: Ես, կասայ ջաղացպանին, դու ինձի իսման իսման կասես. թէզ տնէս տեղէս դուս: — Աման, աղուէս աղբար, մի՛ էնեւ, մի՛ ընիւ. ես էրի, դու մի՛ էնեւ, խաբուեցայ. մեռնիս օրայ վրէդ ժամ շինիմ: Աղուէս աղբայն լուր կենայ, չի դպչի:

Ջաղացպանն ու իրեն կնիկն պոլ վախտ մէկտեղ սալրեցան ու աշխարհք վայեցին միասին:



ԺԱ.

## Մ Է Ա Յ Պ Լ Ո Ր<sup>1</sup> Հ Է Ք Ե Ա Թ Մ

Մեր պառուընին հեքտին. վախտին ժամանակին Այլազգնին կերթան մէ երկիրմ կռուին, քարուքանդ<sup>2</sup> կէնին. մարդկանց ու ծերերուն սպանին ու ջեհնուէն եսիր<sup>3</sup> տարին: Մէկ մարդմ կերթայ եսիրներուն մէջ. մէ ջեհեւ<sup>4</sup> աղջկանմ կու հաւնի, կառնու տանի իրեն կնիկ կէնայ:

Վախտ կանցնի, ժամանակ կանցնի, կաշին որ էնոնց դռնէն մէ միրուքուոր<sup>5</sup> մարդմ կանցնի. աս էն աղջկան հայն էր, Տէյտէյ: Իրեն մարդուն կասայ. Չի՞նիւր, իսա մարդուս բռնիք հովեւ, օչխայն այծայ, մեզի խրզմաթ էնայ: Էն ալ՝ Լաւ կընի, կասայ. ու մօտուին նե կառնուն պէհին:

<sup>1</sup> Այլու. զարմանալի: — <sup>2</sup> քարուքանդ, տակն ու վրայ: — <sup>3</sup> Եսիր, գերի: — <sup>4</sup> Ջեհեւ, երիտասարդ: — <sup>5</sup> Մօրուքուոր:

Մէկ օյմ որ մինակ կընին, Տէյտէյն աղջկան կասայ. Բերզի տեսնեմ, աղջիկս, հաւատքիդ մէջ քաջ ընիս, պինդ կենաս. աշա, չընի, չիմանամ թէ՛ Եիսուսին մտեր հանես, իժիր աղօթք էրա, զի Աստուած ընդ մեզ ա: Ետեւ ալի կասայ. Ինձի մէ հանդերձմ կարա, որ երթամ օրայ սարեյն ու տավայն որ պառկին՝ ես պատարագ էնիմ, աղօթք էնիմ: Տեղերէս կորանք, օրդի, Եիսուսի Բրիտոսու սուրբ հաւատքէն ալ չկոյսուինք, ու ուրիշ պուրաներ սասայ:

Տավայն սայն էման կըռնտնան, էման կըռնտնան, որ ասելով չինիր: Ըն տեղ սարան վերայ ինքն քարայ սեղանմ շինայ, մէջտեղ փատայ խաչմ կակնեցունայ ու հոն սլատարագ կէնայ էմէն օր. անպակաս աղօթք կէնայ իրեն սուրբ հաւատքին համար ու իրեն գործին իժիր մուղաթ:

Մէկ օյմ աղէն, Տէյտէրին փեսէն, էնոր ետեւէն կելնայ կերթայ, կասայ. Մէմ աշիմ թէ մեր հովիւն ինչ դատի: Կու գայ, կու գայ, մտտենայ օրայ ինայ, կաշայ որ մայն պարկտոցն են, ինքն ալ աղօթքի կակնած ա. քարի մէջ թագչի ու խալպաթ կաշայ թէ՛ ինչ կէնայ: Կաշայ որ, ջոկ: հալաւ հագած ունի, աղօթք կէնայ ու մտի կացած տաւայն ալ չոգած հետն աղօթք կէնին: Առէք կերէքն որ կասայ, կաշայ որ մէ կնիկմ տղէն անթն՝ կու գայ խորանին վրէն կակնի: Տէյտէյն պատարագն պրծնու ու ուղարի՞ քաղայ. Հարմեյն ասելու հատաղէն ձերմակ վարդ, Ողջումն ասելու հատաղէն կարմիր վարդ՝ կը շարուի՞ էն կնկան գլխուցէն մինջուկ ոտք ու մէկալ թարաֆն ալ էման բոլորէպաս: Աղօթքն որ խասլի՞ էն կնիկ մարդն համբաւնայ երկինքն:

<sup>1</sup> Զոկ, ուրիշ, տարբեր: — <sup>2</sup> Անթ, անթեւ, դերկ, դրկեւ: — <sup>3</sup> Վարդարան: — <sup>4</sup> Շարեւ, շարոցք, իօար կապեւ:

Աղէն շուարած դառնայ կու գայ տունն, կնկան կասայ. Բա՛, ինա մեր հովիւն ի՛նչ մարդ ա, վո՛վ ա, ճանչնա: — Աէ, չիմ ճանչել: — Ըմպայ թէ չէիր ճանչել, էւո՛ւր<sup>1</sup> հովիւ բռնէիր. շտակն ասա, թէ չէ գլուխդ կը կարիմ: Կինն վախենայ ու շտակն կասայ. Ատ իմ հարս ա, կասայ, ինքն ալ քահանայ. մեր գեղն որ քանդուվերան եղաւ, եսիր գնացինք, ա՛լ օչոււմ<sup>2</sup> չունիմ տեսած, մէկ ատոր: — Ըմպայ է՞ չէիր առաջ ինձի ասել:

Իրկուն որ եղաւ, հովիւն եկաւ տունն վայ նստաւ: Աղէն մարդուն նե կանչեց իրեն օտէն, ասաց. Թէ՛ղ, ասա՛ ինձի, դու ի՛նչ մարդ ես, այտնա՛, թէ չէ գլուխդ կերթայ: Քահանէն ալ կասայ շտակն. Ես քրիստոնեայ իմ, կասայ, քու կինդ ալ իմ աղջիկս ա. համայ ինչոր կուզիս էման էրա: Աղէն էնոր չի դիպաւ ու էմէն պատիւն էրաւ: Էնոր հայցուց թէ՛ Դու ի՛նչ կէնէիր որ սարին վրայ մէկ կիւմ տղէն անթն երկնքէն եկաւ ու ալի գնաց: Տէյտէյն արմնցաւ<sup>3</sup>, ասաց. Ես օչինչ չիմ տեսել:

Մէկալ օյն հետարար<sup>5</sup> կերթան սայն, իրեք օր կենան. իրեք օրն ալ ալի առջի հեղու պէս տեսնու աղէն: Տէյտէրին կառնու կու գայ տունն, կասայ. Աեր կարգն ու կանոն ինչ է որայ ինայ, ինձ ալ էման էրա. ես ալ քրիստոնայ կուզիմ ընիլ: Տէյտէրին պոլ փարայ էրետ<sup>6</sup>, ասաց. Գնա մեծ քաղքներ, քեզի ինչ որ պէտք ա, առ եկէ:

Տէյտէյն գնաց հեռու հեռու երկիյնի, լաւ լաւ հանդերձնիմ ու ուրիշ ժամի սարքեյ ու սուրբ մեռոնն առաւ եկաւ էն իրենց գեղն: Աղին մկրտեց ու բարի քրիստոնայ էրաւ. էնով գեղին բոլոր ժողովուրդն ալ դարձաւ

<sup>1</sup> Էւո՛ւր, ինչո՛ւ: — <sup>2</sup> Ոչոււմ, ոչ Բկի մը: — <sup>3</sup> Է՞, (էր) ինչո՛ւ: —

<sup>4</sup> Չարմնցաւ: — <sup>5</sup> Հետարար, իտարու հետ: — <sup>6</sup> Տուաւ:

Բրիստոսու ճշմարիտ սուրբ հաւատքին: Հոգ մեծ վանքմ շինեցին, որ կասին Խախուայու վանք, ժամ ալ ունիր: Ատոնք քառսուն տարի ալ հետրսր ւարեցան, ետեւ մեռան բարի վարքով ու գնացին Արքայութիւն:

ԺԲ.

Մ Ե Ն Ս Ո Ւ Չ Ի Ն Հ Է Ք Ե Ա Թ Ն

Մեծ մարդմ ունիր քսան մանչ: Էմէնքէն մեծն քառսուն տարեկան էր ու էմէնքէն պիծիկն՝ քսան: Ատոնց կարգուելու վախտն անցած էր: Մէ օյմ իրար հետ մուշավարայ՝ էրին թէ՛ Մեր հայն մեզի ուր չի կարգել. էմէնքն վախտին կարգուին, մենք իման մնացած ինք: Գնացին մէ ջազի՝ պառւիմ հայցին աս բանս: Ջազի պառաւն ալ ասաց էնոնց. Ձեր հայն ձեզի էնոր համար չի կարգի, որ կուզէ էման մէ տեղմ գտնալ, որ քսան աղջիկ ընին ու իրար քուր:

Մեծ աղբայն աս բանս որ իմացաւ, ասաց. Ասման տունն նստելով օչինչ չիլնի, ես պէտք ա երթամ ման գայու էգուան՝: Իրկուրնայ թատարուք՝ տեսնու ու մէկալ օյն կենայ կերթայ: Շատ կերթայ, քիչ կերթայ, հասնի մէ գեղմ. կաշայ որ, մէ պառաւմ դուռն նստած ա, բուրդ մանայ. ծծեյն ալ, էման էրկէն էին որ, նէն ձգած ունիր ումուզին՝ վրէնինի: Ատոր կասայ. Մորոյ, չիլնիր, աս իր-

<sup>1</sup> Մուշավարայ էնել, կտակցութիւն ընել: — <sup>2</sup> Ջազի, վհուկ, հմայ: — <sup>3</sup> Էգուան, էգուց, վաղը: — <sup>4</sup> Թատարուք, պատրաստութիւն: — <sup>5</sup> Ումուզ, ուս:

կու՛ն ինձի հոգա զոնաղ էնես: — Կէնիմ, տղէս, ո՛ւր չիմ էնի. չարէմ<sup>1</sup> ալ կաննար, պիճի աղջիկս քեզի տայի, քսան աղջիկ ունիմ: — Մեք ալ առ ման կու-գայանք, քո՛: — Համայ, մէ ճանսուզ մարդմ եկաւ աղջիկներուս փէշն<sup>2</sup> ինկաւ, ասաց. Աղջիկնիդ<sup>3</sup> ինձի տու: Ես ալ չարայ չգտայ, ուն տուի. էնոնց նե՛<sup>4</sup> էրաւ օտէն ու վրէնին խաշ-նեց<sup>5</sup>. էհէն<sup>6</sup> բաշնիքն ինձի ունի տուած, էմէն իրկու՛ն կու-գայ կերթայ: — Բաշնիքն օս տու, մէմ աղջիկնիդ աշիմ, — Ի՛նցո տամ, էն մարդ կու գայ քեզի գայ կէ-նայ: — Օչինչ չի կայնայ ինձի էնեւ, դու մի վախենաս: Դուռն բանան, տեսնու որ պիթու՛նն ալ լաւ ու ուունտ են աղջիկնին: Էն չաղն պառւին կասայ. Ես կերթամ էն մարդուն կու սպանիմ:

Ճամբէն ձեռքն առաւ ու գնաց: Կէս աւուր ճանա-պարհ գնացած էր չէր, մէմալ մեճ աժտահար<sup>7</sup> մարդմ դէմ կենայ իրեն, մէ պռուռնկն<sup>8</sup> երկինքն էր, մէկն ալ գետինն: Եկաւ բովեցաւ<sup>9</sup> որայ, էնոր ասաց. Դու ինչ մարդ ես: — Ես, ասաց, ճանսուզ իմ, ինձի մարդ չի կայնայ եղթել<sup>10</sup>: Աս որ ասաց, մանչուն սիյտն ելաւ<sup>11</sup>, զը-լիճն քաշեց ու էնոր չաչուբանջար<sup>12</sup> էրաւ: Աշեց որ սաղ ա, ելաւ առջեւն կակնեցաւ. մէմալ էնոր չաչուբանջար էրաւ, աբ ելաւ կակնեցաւ, էն ժում ճանսուզն<sup>13</sup> ասաց մանչուն. Ինսանօղի, նա դու ինձիմէ վախենաս, նա հս քեզիմէ վախենամ. եկէ, իրար աղբար ընիք: — Լա՛ւ,

<sup>1</sup> Չարայ, հնարք: — <sup>2</sup> Փէշ, քղանցք: — <sup>3</sup> Աղջիկնիդ: — <sup>4</sup> Նե՛ էրաւ, ներս ժողվեց: — <sup>5</sup> Խաշնել, խաշանք, կղզել: — <sup>6</sup> էհէն, ահաւասիկ. տիհար, ահաւանիկ: — <sup>7</sup> Աժտահար, յաղթանդամ: — <sup>8</sup> Պռուռնկ, շուրթն: — <sup>9</sup> Բովել, հասնիլ (նիւթապէս): — <sup>10</sup> Եղթել. — <sup>11</sup> Սիրտն ելաւ, բարկացաւ: — <sup>12</sup> Չաչուբանջար, կտոր կտոր: Չաւ, չաղգամին թերերն. զորոնք կամ թարմ եւ կամ չորցուցած ձմբան համար բանջար կ'ընեն: Գոռնու, չաղգամին մանրը: — <sup>13</sup> Տկար, անգոր:

ասաց, ըլինք, ընինք. համայ, ասաց, նէ ես իմ սրտինս քեզի ասիմ, նէ դու քու սրտինդ ինծի ասես: — Դժար տեղ կապեցիր, աշինք: Մրկուան ալ եկան տունն վայ նստան:

Էն մանն պիծի աղջկան ասաց. Գնա՛ ճանսուզին սրտինն իմացի: Էն ալ խաբայ աղջկան, կասայ. Իմ սրուս<sup>1</sup> ինս աւելին մէջն ա, կոտրես օրայ ես հիւնդնամ ու մեռնիմ: Աղջիկն զարպաթ կանցնի էն դին աւելն կոտորայ, կաշայ որ ճանսուզն օջինչ չիլնիր: Կերթայ մանչուն կասայ թէ՛ Չկայցի սրուն իմանալ, որման էնիմ: — Գնա, մէ սթագանմ<sup>2</sup> ջույ լեց ու թող<sup>3</sup> մոզ նե խառնա, ասա էնոր. Բանի որ դու ինծի մարդ ես ու ես ալ քեզի կնիկ իմ, քու սրտինդ ինծի պիտի ասես, օչում չիմ ասել ես, թէ չէ էհէն իսա եաղուս<sup>4</sup> խմիմ ու մեռնիմ:

Ճանսուզն տեսաւ որ չիլնի, էնոր խարպաթ ասեց. Թագաւորին սարային վերեւն որ մեծ սայմ կայ, էն օարան վրէն երկու ասլան<sup>5</sup> կայ. էն ասլաննին որ մորթին՝ ես կը հիւնդնամ. էնոնց փորերուն մէջ ալ մէ մէ հատ շուշայ<sup>6</sup> կայ, ատոնք որ կոտրին՝ ես մեռնիմ: — Է՛, լաւ օչում չիմ ասե: Ու մէկալ օյն կերթայ մանչուն կասայ սրուն:

Մանչն կու գայ ճանսուզին կասայ. Մեք լաւ, իրար աղբար ինք, համայ ի՛նցո էնինք, ես որ կնիկ չունիմ: — Գնա, թագաւորին տունն լաւ աղջիկմ կայ. ես պոլ նէն ու նաս թռայ, չկայցի առնուլ բերել. պիծիմ ալ դու աշխատա, պալքի կայցիր, բեր ու քեզի կին երա: Էն ալ անկաճ էրաւ. գնաց չարշուն, մէ կէմմ<sup>7</sup> առաւ ու տարաւ

<sup>1</sup> Գաղտնիք: — <sup>2</sup> Սթագան, ուս. գաւաթ: — <sup>3</sup> Փռի: — <sup>4</sup> Թոյն, գեղ: — <sup>5</sup> Աւիւծ: — <sup>6</sup> Շիշ: — <sup>7</sup> Սանձ:

Ծովուն մէջն ի վար կախ էրաւ, աշեց որ մէ ձիմ՝ դուս եկաւ. կէմն զրաւ բերանն, նստաւ վրէն ու ծովին մէջնինի քշեց: Գնաց, գնաց, մէ ատէմ<sup>1</sup> րաստ եկաւ. մէ հալեւորմ<sup>2</sup> ալ ամին նստած էր: Ընոր որ մօտիկցաւ, բարեւ տուին իրարու, հալեւոյն ասաց. Տղէս, մէմալ որ գաս, փետատմ<sup>3</sup> ու թափէճմ<sup>4</sup> հետդ բե, որ ինծի թաղես, ես մեռնիմ: Ըն տեղէն ետ դարձաւ ու այլ քշեց ձին. դուս ելնելու որ մօտիկ եղաւ, մէ ուռնտ աղջիկմ տեսաւ, ջուլն եկած էր, էնոր ասաց. Բեզի տանելու իմ եկած, համայ հիսի չէ, մէմալ որ գամ: Կերթայ թագաւորին մօտն կակնի, կասայ. Դու ալաննիմ ունիս, ինծի էնոնց տեղն խրատ տու: — Ի՞նչ կասես, որդիս, քեզի զայ կէնին: — Դու ինծի ասա, քու ինչո՞ւղ պէտքն ա: — Լաւ, կասիմ, թէ որ դու էնոնց էղթեցիր. ես աղջիկս քեզի կու տամ. գնա, քառսուն հատ ալ ասքեար թող հետդ գան:

Մանչն ճամբայ ելաւ ձիուն հեծած, ասքեարն ալ հետն: Խելմ որ գնացին, ասքրին հարցեց թէ ո՞ւր տեղին ալաննին<sup>5</sup>: Ընոնք ալ ասեցին. Տիհայ ինա քարերուն մէջն ին: Ընոնց ասեց թէ՛ Դուք հողայ մնացէք, ես կերթամ, սասաթմ ետեւ թէ որ արջու մուխ հանեցի՝ ես էնոնց կտրած ունիմ, թէ չէ էնոնք ինծի խեղդած ունին: Ասման ասեց ու ելաւ գնաց. շատ գէշ տեղունք էին: Մէմալ աշեց գէշ ձէնմ եկաւ, իսման կասէր, Փիր Ահմէտ,

<sup>1</sup> Կզզի: — <sup>2</sup> Ծերունի: — <sup>3</sup> Բրիչ: — <sup>4</sup> Բահ: Քաղհիչ. ածուի քաղ հանելու գործի: Ուրագ, շտակ բերնով թեթեւ մէկ ձեռքով տաշելու գործի: Դուր, ծակելու կամ փորոքելու գործի: Գիտակ, փայտ՝ որով գրին զարնեն: Խուր, ի՛ի՛ի, (վրաց.) մեծ ողոց տախտակ ձեւելու համար: Միտն (վրաց.), կազմածքով փոքր ողոց:

<sup>5</sup> Այս կերպ յազնակի գործածութիւնը յաճախ է, ինչպէս՝ Մարդիկինն, աղէնին, տանտիկիննին, ծառէնին, եւն:

Փիր Ահմէտ: Իմացաւ որ իրեն հետ են<sup>1</sup>: Չիուն աշեց, որ ինչ կէնես, լեզուն երկու թիզ դուս եկած ա բերնէն: Չին խօսեցաւ, ասաց. Երթանք օրայ, ես մէ գուռ<sup>2</sup> քարիմ վրէն կենիմ ու կը խրինջամ, էն ժում էնոնք կու գան վրէտինի, գան չէ թէն<sup>3</sup>, դու ղըլիճդ քաշա, էման մէմ պտոյտ բե զարկ որ երկուսն ալ հետորար ջայդուին: Պիծիկմ ալ գնացին, երան մէ քարիմ վրէն. աշեցին որ ասլաննին կու գան իրենց վրէնինի, մէմ էնկէտանց ղըլիճն քաշեց, էման մէմ չափեց էնոնց որ երկուսն ալ ջարդուփուրդ եղան: Էն տեղ ձիէն վար ինջաւ, ասլաննուն փուրեյն բացաւ, շուշէնին դուս հանեց նե զրաւ ջէպն<sup>4</sup> ու մէ արջու մուխմ հաներով՝ ալի հեծաւ, ետ եկաւ<sup>5</sup>: Եկաւ թագաւորին մօտ կակնեցաւ, ասաց. Իսա շուշէնիս տեսնու, ճանսուզին հոգին խոնց մէջն ա, էնոր ալ պիտի սպանիմ: Թագաւոյն գովեց տղին, ասաց. Աֆէրիմ, տղէս, աղջիկս հիմի քեզի կու տամ ու կարգիմ: Թագաւոյն ասաց ու էման ալ էրաւ. հայսնիքն էրաւ, պոլ հալաւ, պոլ շէ ուն տուաւ սանչուն աղջկան հետ, խուրճին<sup>6</sup> ալ օսկի լթեյ լիք լիք ու էնոնց ճամբեց:

Մանչն էն կէտին թարքին ձգեց ձիուն վրայ, թռաւ. ձիուն կունակն ու կնոջն ալ առաւ ձիուն գաւազն<sup>7</sup> ու ալի ջրին մէջնինի թռուց գնաց: Գնաց, գնաց, գնաց, հասաւ էն հալեւորին մօտ. էնոր որ տեսաւ. փետաւոն ու թափէճն միտն ինկաւ<sup>8</sup>: Հալեւորն աս տղին տեսնուին ու գետինն

<sup>1</sup> Իրեն կ'ըսեն: Քեզի հետ իմ, քեզի կը խօսիմ. էնոնց հետ ա: —

<sup>2</sup> Գուռ քար, ապառաժ քար: — <sup>3</sup> Գալուն պէս: — <sup>4</sup> Զէպ, գրպան: —

<sup>5</sup> Ետ եկաւ, դարձաւ: — <sup>6</sup> Խուրճի, հապուկայ, թարքի, պաշարի աման ճամբորդի, որ երկու կողմանէ ալ նոյն է, մէջտեղէն իրար միացած կցուած են, կը ձգեն ձիւ վրայ, կէս մէկ դին կը քնայ. կէսն ալ մէկալ դին: —

<sup>7</sup> Գաւազ, ձիւնն ետեւի կողմն: — <sup>8</sup> Միտն ինկել, յիշել:

ինկնիլ մեռնիլ մէկ եղաւ. տղէն կահրայ<sup>1</sup> կայցաւ Քողն  
ետ էնել<sup>2</sup> ու հալեւորին թաղել: Աս հալեւոյս տասնու-  
հինգ տարեկան էր. էս տղին տեսնելու կարօտէն ասման  
թէզ ծերացած էր: Ըն տեղէն եկաւ ճանսուզին մօտ.  
Ճանսուզն պիծիկմ հիւնդցած էր. աղջիկնուն նե կէնայ մէ  
օտէմ, ձեռուընին զինծիլներով<sup>3</sup> կապայ ու ճանսուզին քա-  
շել կու տայ մինչուկ իրեն հօյն տունն. հուն որ բովին չէ  
թէ՛ շուշէնին իրար զայնու ու ճանսուզն ձեռաց կերկնայ<sup>4</sup>:  
Ըն ժուամ մէկ աղջիկն ինքն կառնու, մէկալնոնքն ալ իրեն  
եղբրտանց կու տայ կարգայ. ասման բոլոյն ալ իրենց մու-  
րատներուն հասնին:

ԺԳ.

## ԱՍՏՈՒԱԾ ԳԷՇ ԴԱՏԱՍՏԱՆ ԿՏՐԵԼ ԶԻ

Մէ մարդմ կընի, կինկնի ճանապարհ, որ երթայ  
տէրիայ<sup>5</sup>. Խելմ կերթայ, կէս ճանապարհ էրած ունի,  
կաշայ որ ետեւանց ուրիշ մարդմ կու գայ. պիծիկմ  
կակնի հուն, կու գայ իրեն ժմնայ<sup>6</sup>: Բարեւ, — Ասծոյ  
բարին կասին իրարու: Ծոյր կերթաս, մարդ Աստրժու,  
կասայ ետի եկողն: — Իսման իքեան տէրիայ կերթամ,  
նեղութիւն ունիմ: — Ը՛, չէ՛նեք մէտեղ երթանք, գործ  
տեսնունք, մէնց<sup>7</sup> դժար է. արի թէ կընի, երթանք մէ  
տեղմ, օտէմ բռնինք, հետրար բանինք: — Խիստ լա

<sup>1</sup> Կահրայ, կահրէմ, հաղեւ: — <sup>2</sup> Ետ էնել, ետ տալ, փորել: —  
<sup>3</sup> Զինծիլ, շղթայ: — <sup>4</sup> Երկնցաւ, ճապղեցաւ, չորցաւ, պաղեցաւ, գնաց =  
մեռաւ (անարգաբար): — <sup>5</sup> Տէրի, տօնավաճառ: — <sup>6</sup> Ժմնել (ժամանել),  
երթալ դէմնին հասնիլ: — <sup>7</sup> Մէնց, միակ:

կրնի, ուր չէ, ես ալ ատման կուզիմ: Ըսոնք երկուսն ալ լաւ մարդիկ էին:

Կու գան մէ տեղմ ղունաղ<sup>1</sup>. կրնին: Ղասապէն դեռ չին բոված, մէ օտիմ մէջ երկուսն հետորար պառկին, քուն կրնին: Էգուրնայ մութիմութ<sup>2</sup> մէկն՝ էն էտի եկողն, վեր կենայ, կերթայ ձիուն գարի էնելու<sup>3</sup>: Ինքն դուս կենէ չէթէն՝ ուրիշ մէ մարդմ նե մտնու, դանակն դուս քաշայ, էն մէկալին տեղն ի՛ տեղ մորթայ<sup>5</sup> ու դանակն արնոտ արնոտ նե ձգայ մէկալ ընկերոջն խուրճիին մէջ ու փախչի տա փախչի: Մէկալ ընկեյն ձին կառնու կու գայ, հապուկէն ձգայ վրէն, ընկերոջն ալ մէմ ձէն կու տայ<sup>6</sup> ու ալ բոլոյն չի աշե. ինքն ձին քշայ կերթայ, գիտայ թէ ընկեյն ետեւունց ելած ա կու գայ:

Մրեք սահաթ ճանապարհ կերթայ, աչքն իժիր ետեւն ա, կաշայ կաշայ, ընկեյն չի գայ. մէմալ կաշայ որ երկու զավթայ ետեւունց կու գան, իրեն ճուան թէ կալնա, կակնա: Էն ալ կակնի միամիտ, խապար չէ թէ ինչ ա եղած: Զավթէնին կու գան բովին մօտն, կասին. Դու նոր ելած իս, փուչ, ընկերոջդ տիհա սրպանած ունիս: — Ի՞նչ կասէք, ես ատման խապարութիւն չունիմ: — Կեցի, վրադ աշինք: Ասդին անդին կաշին, օջինչ նշան չին գտնուլ. թարքին ձիէն վար կառնուն, կաշին, մէ արնոտ դանակմ գտնուն: Հէչ չին հայցնու, ձեռուին կապին, ետ դարձուն հուքումսթն: Էն տեղ դատ կտրին, էնոր ղըկին բերդն, օխտ տարի կենայ խափս:

<sup>1</sup> Օթեվանիլ: — <sup>2</sup> Մութիմութ, շատ կանուխ: — <sup>3</sup> Գարի էնել, գարի տալ: <sup>4</sup> Զին ջրել, մայն ջրել, ջուր տալ, ջուրը տանիլ: Երկաթն ջրել: — <sup>5</sup> Տեղն ի տեղ, նոյն տեղն: — <sup>6</sup> Մորթել, դենուլ, դանակով ձիաը կտրել: — <sup>6</sup> Ձէն տալ, զարթեցնել:

Դրեք տարի անցած կրնի, մէ օյմ բերդին միջի գող մարդիկն որմն ծակին փախչելու համար, համայ պահապանին կիմանան, չին թողու. էն չաղն էն բարի մարդուն ալ ճագէն կաւելնայ, օխտ տարին տաս կրնի: Մէ օյմ ալ կնիկն կու գայ տես, կասայ. Բա՛ մարդ, Ազամ խարուեցաւ, պալքի դու ալ խարուած իս, ուր չիս ասես: — Բա՛ կնիկ, ես օչինչ չիգտիմ ադ բանէն, մենք երկու ընկերքս հետրար պառկած էինք, էգուրնայ ձիս գիշերանց առաջ էրի եկայ, էս էն գիտիմ, ուրիշ օչինչ չիգտիմ: Մէ թղթիմ վըէն ալ գրէ իսման. Աստուած ոունտ դատաստան կտրայ, համայ ուշ կտրայ:

Խելմ վախտ անցած էր, մէ մարդմ կու գայ հուգուամթն կակնի, կասայ. Դտա մարդումէդ ի՛նչ կուզէք, ատ՝ մարդու չունի սրպանած, սրպանողն ես իմ. ատ մարդդ որ գնաց ձիուն մօտ, ես էի որ նե մտայ ետեւէն էնոր ընկերոջն սրպանեցի ու դանակն ալ հապուկին մէջ դրի ու փախայ. ես էի որ գնացի բերդն գիշերով ծակեցի փախայ, ատ քուն էր. ատոր լուր՝ կեցէք, մեղք չունի: Երկու օր ալ անցաւ, էն բարի մարդն խասլեցաւ, բերդէն եկաւ տունն, օլուշաղին հետ ապրեցաւ պոլ տարի:

## ԺԳ.

### ԶԷՆԿԻՆ ՈՒ ՓՈՒԽԱՐԱՅ ԳՐԿԻՑՆԻՆ

Գեղին մէջ մէ զէնկին ու մէ փուխարայ դրկիցմ կրտնին. փուխարայ դրկիցն նեղ ու նաչար կապրիր, կնոջն

<sup>1</sup> Էրեկ ու կնիկ իրարու նկատմամբ Բա բառը գործ կ'ածեն հաւասարակէս:

<sup>2</sup> Լուր կեցէք, թող տուէք. ետ թողէք, ազատ թողէք. մի գոչէք:

ղրկէր էմէն ժում ղէնկինին տունն՝ որ թագայ հաց<sup>1</sup> էփէին, բերէր ու ուտէին: Մէ օրմալ ալի կերթայ հաց ուզելու, էն ղէնկին մարդուն կնիկն նեղուորի ու կասայ. ի՞նչ, իմ մարդս գիշեր ցորեկ բանի, քուն ընիլ չունի, քու մարդդ իժիր զօր ու գիշեր գլուխն բարձին դնայ պառկի, էն երթայ բանի թող: Կնիկն տեղն ի տեղ ետ դարձաւ, եկաւ իրեն մարդուն հէքեաթ էրաւ: Ըն ալ մքրեցաւ շատ, միտք էրաւ միտք էրաւ թէ՛ ինչ էնայ: Կնկան ասաց. Բա՛, տունն հէչ հաց կայ: — Մէ հացմ մնացած ա: — Բե հոզայ: Հացն կառնու կորայ, հինգ բրդուճ կէնայ, մէկն կնոջն կու տայ, իրեքն ալ տողոց, մէկն ալ իրեն կէնայ ու կեղնայ կերթայ ու կերթայ:

Շատ կերթայ քիչ կերթայ, օյլուս քաղուի<sup>2</sup>, հասնի մէ տեղմ, սարպնէ<sup>3</sup> մէ վէրանայ ջաղացքմ կար, նե մտնու, արդունին<sup>4</sup> մէջ պառկի: Մէջ գիշեր ա, կաշայ որ մէ աղուէամ կու գայ նե մտնու ջաղացքն. պիծիկմ վերջ մէ գեալմ կու գայ. պիծիկմ ալ վերջ մէ արջմ կու գայ: Մարդն մտքէն կասայ. Աս ի՞նչ բան ա, հիմի իսա գաղաննիս ինձի պիտի լափին ուտին: Աղուէան քինթն վեր վեր քաշայ ու կասայ. Հոզայ իսնի Ֆոտ կու գայ, իսնի Ֆոտ կու գայ: Արջն ու գեալն կասին. ի՞նչ կասես, իսա ժամանակա, իսա վէրանայ տեղունքս ինսան ի՞նչ դատի, խելքդ թռուցի՞ր թէ, ի՞նչ կարելի բան ա: Իրեքն ալ վայ նատեն, խորթիւն<sup>5</sup>, արջն կասայ. Աղուէս աղբար, դու աս օր ի՞նչ էրիր: — Գնացի մէ տեղմ, ծառի վըայ երկու հաւ կային, դատեցայ դատեցայ թէ:

<sup>1</sup> Գեղացիքն երբ հաց եփեն ու հանդիպի որ մէկ գրկից մը գայ ներս մտնէ, պէտք է որ մէկ տաք հաց մը տան անոր որ հետն տանի:

<sup>2</sup> Օրլոյս քաղուիլ, մթննալ: — <sup>3</sup> Սարպնէ, տախտակէ շէնք, շորտ անկիւններն իրար ագուցած: — <sup>4</sup> Ընդունարան: — <sup>5</sup> Խոտակցիլ:

տանլամ, չկայցի, տիրանն ալ դուս ելան, ինծի հետ<sup>1</sup> զրին  
 ու ետ դարձայ եկայ, ծառլամ տակ կճուճիմ<sup>2</sup> օսկի ունէի,  
 վրէն թապալտկեցայ<sup>3</sup>: Գեայ աղբար, է, դու ի՞նչ էրիր:  
 — Հէ, ես ի՞նչ էնէի. տավրին ջուկին<sup>4</sup> ըստ եկայ, մէջ  
 պիտի մտնէի, համայ ի՞նչ էնիմ որ շունն հետուին էր,  
 չկայցի: Ի՞նչ ասիմ ինսանօղուն խելքին, գլուխն հէջ  
 չկայ. չին գիտել թէ՛ շանն եղուկն<sup>5</sup> ի՞նչ մեծ դեղ ա:  
 Սթանպոլ թագաւորին աղջիկն բորոտած ա, կերթայի  
 օխտ խալկին<sup>6</sup> ջույ լնէի, դնէի կրակին վրայ, կէփէի կէ-  
 փէի, մինչուկ տակն իջնուր ջույն. օխտն ալ իրար վրայ  
 լնէի, մէ խալկիմ մնար լիքն. էնոր մէջ լնէի շանն եղուկն  
 ու աղջկան էնոր մէջ լեղացնէի, լաւանար պրպսթոր<sup>7</sup>  
 կրնիր ու թագաւոյն ի՞նչ ասես կու տար: Գեայն ու  
 աղուէան դարձան արջուն ասին. է՛, դու ի՞նչ էրիր, անջ  
 աղբար: — Էս գնացի մարին<sup>8</sup> մալին ետեւէն, էն տե-  
 զուանք մէ մողիմ<sup>9</sup> գտայ, ումուղեցի<sup>10</sup> բերի քոբիս<sup>11</sup> մօտ  
 թաղեցի, էմէն օր քիչ քիչ կուտիմ ու օխտ ունկով  
 լիք օսկի խալկինիս վրայ պառկիմ պոյտ ի վեր<sup>12</sup>:

Շաւաղն<sup>13</sup> նետայ թէ չէ՛ գազաննին մէմէկ դուս  
 կեքնէն կերթան: Պիծիկիմ կանցնի, արեգակն նե ջահի<sup>14</sup>:  
 Մարդն՝ Յիսուս Մարիամ կէնայ ու վեր կակնի. ալ

<sup>1</sup> Փայցնել: — <sup>2</sup> կճուճիմ, կերակուր եփելու կաւէ! աման: Բու  
 ատոր մեծը: Բողբայ, կաւէ պնակ, սկաւառակ: Խեշտ, ափը կտորած  
 քաղրայ: Փուշ, կուժ: Խեշտ, փոքր կճուճ: — <sup>3</sup> Թապալտիլ, թապալտիլ,  
 կունկի վրայ մանիման գառնալ: Կնտուլու խաղալ, գլխի վրայէն գառնալ:  
 — <sup>4</sup> Ջակ, խուճ: — <sup>5</sup> Եղուկ, ուղեղ: — <sup>6</sup> խալկին, գազան (ղազան): —  
<sup>7</sup> Պրպսթոր բնիլ, բոլորովին լաւնալ: — <sup>8</sup> Մարի, մայրի, անտառ: —  
<sup>9</sup> Մողի, երկու տարուան հորթ: Երինջ, երեք տարուան, որ առաջի ան-  
 գամ կը ծնի: Բուռտ, երկու տարուան ուլ: Չաբիչ, երեք տարեկան  
 առջի անգամ ծնող պո: Թուխլի, երկու տարուան գառ: — <sup>10</sup> Ուտին վրայ  
 աւնուլ: — <sup>11</sup> Արջու, գայլու բնակարան: — <sup>12</sup> Կանակի վրայ: — <sup>13</sup> Արշա-  
 լոյս: — <sup>14</sup> կամ՝ գայլիլ, լոյս գալ:

վախ չկայ, կասայ, երթամ իմ բանիս: Դուս կենայ, կաշայ որ աղուէս խոտի վրայ թապլտկի. Հայհու, հայհույ կէնայ, աղուէսին հետ գնայ, կձուձմ օսկին դուս հանայ, կառնու կերթայ: Ծամբէն հովիւն դէմ կենայ տաւարն առաջն. Իտա շանդ ի՞նչ տամ, կասայ հովիւին: — Հարուր օսկի: — Էհէն հարուր օսկիդ: Փարէն համրայ ու շանն կառնէ կերթայ: Խեւմ որ կու գայ, շանն զայնու սպանայ, եղուկն գլխէն դուս հանայ, նե դնայ դաւաձոխն ու թախ Սթանպոլ կերթայ:

Քառսուն օր ճամբայ կենայ, պոլ նէն<sup>1</sup> ու նաս թռչի, խիստ դժուարութեամբ հասնի էն վերջ Սթանպոլ քաղաքն. սոխինինի կերթայ ու ճուայ, կասայ. «Հէքիմամ, հէքիմամ: Բժիշկ իմ, բժիշկ:» Աս խապարն թախ թագաւորին անկաճ<sup>2</sup> հասնի թէ՛ զարիբ հէքիմամ եկած ա հեռաստանէն<sup>3</sup>, պալքի մէ դեղմ գիտայ, թագաւորին աղջկան ունտցնայ<sup>4</sup>: Թագաւորն իզին կէնայ, էն հէքիմին բերել կու տան, կու գայ թագաւորին առջեւ կենայ: Հայցնու թագաւոյն. Ի՞նչ հէքմութիւն գիտես դու, մեր աղջկան կայնան լաւցնուլ: — Մեծն ապրած կենայ, կասայ հէքիմն, Աստուծոյ կարող իմ, համայ ինչ որ ասիմ՝ անկաճ էնին: — Լաւ, ինչ որ գիտես երա:

Օխտ զազան ջույ լնուլ կու տայ, քուրաք<sup>4</sup> շինայ, խալկինին վրայ դնայ, գոլայ<sup>5</sup> ու կասայ. Վերայ գոլ<sup>6</sup> էրէք: Զույն էման կէփի, էման կէփի, որ տակն կիջնու. ետ կառնէ, բոլոյն ալ մէ խալկինիմ մէջ լնուլ կու տայ իրար վրայ. դաւաձոխն<sup>7</sup> բանայ, շանն եղուկն էտ խալկինին

<sup>1</sup> Նէն ու նաս, առդին անդին: — <sup>2</sup> Հեռաստան. հեռու տեղ: — <sup>3</sup> Ունտցնել, լաւցնել: — <sup>4</sup> Գուրաք, քարով շինուած կրակարան: — <sup>5</sup> Գ.օ. լնլ (քուրաք, փուռ, թոնիր) վառել: — <sup>6</sup> Գոլ էնել, կրակը վառ պահել շարունակ: — <sup>7</sup> Դաւաձոխ, ուլի մորթէ շինուած պաշարի աման, մախազ:

մէջն կածայ<sup>1</sup> ու խառնայ, կեփայ կեփայ, մինչուկ որ կէս ըլնի ու ետ կառնու<sup>2</sup> որ պիծիկմ պաղի: Աղջկան բերել կու տայ, էտ խալկինին մէջ լեղացնուլ կու տայ իրեք հեղ. մէկալ օյն աղջիկն լաւցած էր, պրպստոր եղած, մօրէն եղածի պէս էր, ալ չունիր բորոտութիւն հէչ: Թագաւոյն խիստ խնտայ, մեծ տավաթ<sup>3</sup> կու տայ իրեն մեծերուն. հեքմին կանչայ իրեն մօտ, կասայ. Տէ, ի՞նչ կուզես դու հիմի, ասա, ինչ որ կուզես տամ: — Թագաւոյն ապրած կենայ, ես բանմ չիմ ուզե, մէկ հրաման էրա, հարուր աքեար ինծի հետ գայ հինգ թօրով ու տաս արապայով, ինծի իմ տեղս տանին: — Շատ լաւ, ըլնի քեզի, կասայ թագաւոյն:

Մարդն խիստ խնտում կէնայ, շնորհակալ կըլնի թագաւորին ու աքեարն հետն առած՝ կու գայ իրեն երկիրն: Դրեն երկիրն որ հասնի, առանց կակնել կերթայ մարին, էն արջուն ետեւէն. քորին որ մօտենայ ու չի՝ թօփեյն բանալ կու տայ. մէմալ արջն բողջտարով՝ քոթիթնին<sup>4</sup> կառնէ փախչի: Մարդն կու գայ նե մանու. քորն, մէմալ ի՞նչ կաշես որ, առջուն պառկած տեղն օխտ ունկով<sup>5</sup> խալկինն լեք օսկով գտնու. թէզմ լնու արապէնուն վրայ ու մէջ գիշերին հասնի իրեն դուռն, նե մանու, բահաթ վայ նստի տունն, կնջմով ու տղոցմով կու վայլէ, փառք կու տայ Աստուն ամենայն ժամ:

Մէկալ օյն գէնկին դրկիցն<sup>6</sup> կաշայ, որ ա՛լ չին գայ հաց ուզելու. մտքին մէջն ի վար կասայ. Ճանրմ, իսա դրկից աղբայս ի՞նչ եղաւ. ի՞նչ իմացաւ, իսա օրման<sup>7</sup> բան ա: Փիթուն գեղն խապար պտտայ թէ՛ փուխարայ

<sup>1</sup> Մէջն ածել, ձգել, լեցընել: — <sup>2</sup> Ետ առնուլ, վրայէն վերցընել: —

<sup>3</sup> Տավաթ, հացկերոյթ: — <sup>4</sup> Գոթիթ, արջու, գայլու ձագ, թոթիւն: —

<sup>5</sup> Ունկ, ամանի մը քովէն գրուած բռնելու տեղ: — <sup>6</sup> Դրայի: — <sup>7</sup> Ի՞նչպէս:

մարդն զէնկինցած ա: Իրար քսփսան. Ի՞նչ եղաւ, օրմանն եղաւ: Կասին. Գնացած ա մէ գիշերմ աւեր ջաղցաց մէջ պառկած ա ու եկած զէնկինցած ա: Էն զէնկին մարդն աս որ կիմանայ, կերթայ կնկան կասայ. Բա՛, մենք ասման չինք ընիլ, պայլոր<sup>1</sup> ես ալ երթամ մէ գիշերմ աւեր ջաղացքն քուն քաշիմ: — Լաւ կընի, կասայ կնիկն, գնա, մեր հայն ասման չիընիր, էն մեզի ուր անցնի, գնա պոլ օսկի բե, մենք էնորմէ զէնկին ընինք:

Մարդն անկաճ կէնայ, ճամբայ կընկնի: Կերթայ, կերթայ, կերթայ, մուծն կընկնի<sup>2</sup>, աւեր ջաղցին մօտն հասնի, կու գայ նե մտնու, մէջն պառկի: Մէջգիշեր ա քնէն զարթի, մէմալ կաշայ որ ի՞նչ կէնես, ճանաւարնին<sup>3</sup> նե ժողվին, մէ արջմ, մէ գեալմ ու մէ աղուէսմ: Ալի իրանց մէջ մուշավարայ կէնէին. աղուէսն քինթն մեծ մեծ վեր վեր քաշայ, կասայ. Հողայ իսնի հոտ կու գայ, իսնի հոտ կու գայ: Արջն կասայ. Ի՞նչ իսնի հոտ ա, իսա ժամանակս իսան ի՞նչ դատի<sup>4</sup> իսանի<sup>5</sup>, հէչ կարելի բա՛ն ա: Աղուէսն մէմ վեր թռչի, կասայ. Հոտայ կեցէք մէմ աշիմ, չընի թէ՛ էրէկու պէս ալի մեր խօսածն իմանայ: Կեընէ կաշայ, որ արդունին մէջ մէ մարդմ կուկուզած<sup>6</sup> ա, կասայ. Է՛հէն մէ իսանողլիմ: — Բերէք հուզայ, բե՛էք հուզայ, կասին արջ ու գեալ աղբայն, իտա մեր զարար տուողն ա, եկէք իտոր բկտինք<sup>7</sup>: Աղուէս աղբայն ճվայ, կասայ. Արանքն իմ ա: Դուս հանին մարդուն, բզիկ բզիկ<sup>8</sup> կէնին, լափին ու կերթան իրենց տեղունքն:

<sup>1</sup> Կ'երեւի թէ: — <sup>2</sup> Մուծն ինկնիլ, մթննալ: — <sup>3</sup> Ճանաւար. գազան: — <sup>4</sup> Ի՞նչ կ'ընէ: — <sup>5</sup> Իսանի, իտանի, ինանի, այս կողմեր: — <sup>6</sup> Կուկուզիլ, ոտուըններուն վրայ ամուր ամփոփուիլ: — <sup>7</sup> Բկտել, փողոտելով սպաննել: — <sup>8</sup> Բզիկ բզիկ ընել, կտոր կտոր ընել:

Պոլ վախտ կանցնի, տնեցիքն կաշին որ իրենց տէյն չեկաւ, կենին ման գալու. էմէն դին կաշին, չին գտնուլ, ետքէն կու գան աւեր ջաղացքն նե կաշին, որ էրկու չոյլ օսկոր մնացած ա: Ծտ դառնան տունն վայ նստին, կու լան ու կու լան, ալ<sup>1</sup> սգրելու ճար չկայ:

Փուխարին խէր<sup>2</sup> չէնողն տնով ու տեղով կու կոյտուի:

ՃԵ.

## Թ Ա Փ Ա Կ Է Օ Ջ Ի Ն Հ Է Բ Ե Ա Թ Ն

Ծրկու մարդ կուզին ճամբորդութիւն էնել, կրնկին ճանապարհ ղուրպաթն երթարու համար. շատ կերթան քիչ կերթան, կու գան մէ դուր տեղմ հանգչին, օչինչ շէնիք չի երեւնայ, օյլուսն ալ քաղուելու վրայ ա: Պիծիկմ ալ գնացին, հեռունէն քորքեր<sup>3</sup> տեսնուեցան, իրար ասեցին. Եկէք երթանք ինա տեղն մալին մէջ պառկինք: Ելան եկան, դեռ թէզ էր, պիծիկմ դուսն վայ նստան ու կտեւ նե մտան պանկեցան:

Կէս սահաթ չէր անցած, աշեցին որ թափակեօզ<sup>4</sup> հովիւն տավայն առաջ էրած ունի, կու գայ որ: Առաջ թռաւ, եկաւ քորքին դուռն բացաւ, ձէն<sup>5</sup> կէներ տարւին. պէհէյ<sup>6</sup>, պէհէյ էնելով: Բոլոյն նե էրաւ ու ինքն ալ նե մտաւ միջուին. հոտ էրաւ<sup>7</sup>, հոտ էրաւ ու ասաց. Հողայ խնի հոտ կու գայ: Մէ մեծ քայմ բերաւ ձգեց

<sup>1</sup> Սգրել: Լացը կտրել: — <sup>2</sup> խէր, ողորմութիւն: — <sup>3</sup> քորք, (զարայ ետփու) անասնոց բնակարան: — <sup>4</sup> Թափակեօզ, միակն (ճակտի վրայ) կիկոփ: — <sup>5</sup> Ձէն էնել, կանչել: — <sup>6</sup> Պէհէյ, տավարն կանչելու համար: — <sup>7</sup> Հոտուրտայ:

դռան ետեւ, որ օջով չկայնայ դուս փախչել: Ու պաշա-  
միշ կէնայ ազմզկել<sup>1</sup>. պոլ ազմզկեց, էն վերջ էն մարդ-  
կանց ձեռք<sup>2</sup> բերաւ: Չեռաց քուրաքն գոլեց ու շամբույն<sup>3</sup>  
նե զարկաւ մէջն, որ լամ կարմրեցաւ: Ծտեւ եկաւ մարդ-  
կանց մօտ տնտղտկելու<sup>4</sup> թէ՛ ոյն ա գէր՝ աշեց որ պղտիկն  
տահա գէր ա: Գնաց շամբոյն առաւ եկաւ, կարմիր կար-  
մրած, էն մարդուն փոյնինի էման մէմ խոթեց որ գլուխ-  
նինի դուս եկաւ ու տարաւ քուրաքն գորոխին<sup>5</sup> վրայ դրաւ.  
մանիման<sup>6</sup> դարձուց, լամ եփեց, քեպպապ էրաւ, եղերն  
ալ վրայէն ճըճային<sup>7</sup>: Ծփեցաւ օրայ ու խախեցաւ, վայ  
նստաւ ուտելու, համով համով կերաւ, փոյն կրթացուց:  
էն մէկալ ընկրոջ ալ կանչեց, ասաց. Էկէ, էկէ միս ու-  
տինք, ուր հոտա շուարած կակնած իս: — Ծս միս չիմ  
ուտե: — Ուր չիս ուտե, արի, արի, էգուան ալ քեզի  
կուտիմ, մի վախենա: Գնաց ձեռքէն բռնեց բերաւ մօտն  
վայ նստեցուց ու իրեն ընկերոջ օտքին կրուակին մեէն ու-  
տեցուց իրեն. ինքն ալ ալի կերաւ, կերաւ ու հայմի պէս  
օռնցկետ ետ ինկաւ պառկեցաւ:

էն ծեր մարդն միտք էրաւ, ասաց. Բա, հիմի ես  
նոր երթամ, իտա վեր պիտի էլնայ, ինձի ալ պիտի ու-  
տայ: Պիծիկմ ալ միտք երաւ, ասաց ինքն իրեն. Համայ,  
կեցի, ես քու հախէդ կու գամ: Ծիշն օճախին մէջ կրակ  
դարձած էր. մէկ ոչխայմ մորթեց ու փոսթն<sup>8</sup> առաւ նե  
փաթութուեցաւ մէջ, միսն փախն<sup>9</sup> մէջ թաղեց ու գնաց,  
գոռոխ կտրած շամբուրն առաւ եկաւ, թափակէօղին՝ որ

<sup>1</sup> Ազմզկել, խարխարել: — <sup>2</sup> Չեռք բերել, բռնել: — <sup>3</sup> Շամբուր,  
մէկ կողմը սուր, մէկալ կողմը ճանկ: Անէ. մէկ կողմը ճանկ, մէկալ կողմը  
սափակ ձեռքի պէս: Քերոց ձեռքի փոքր ակիշ: — <sup>4</sup> Եօջափելով նայիլ: —  
<sup>5</sup> Հրաշէկ գործելի: — <sup>6</sup> Աղին անդին: — <sup>7</sup> Վազել: — <sup>8</sup> Փոսթ, մորթ:  
— <sup>9</sup> Փուտ, տաւրի աղբ: Խուշքի, ձիւ աղբ: Ատկտոր, այժու աղբ:  
Բէզ, տաւրի գարնան աղբ. զոր իբրեւ դեղ գործ կ'ածեն:

մէկ աչքով ունիր, էնվար նե էզարկ ու քորացուց: Լուսացաւ որայ թափակէօզն աշեց որ աչին քորացած ա, նէն ու նաս գնաց թէ՛ մարդուն գտնայ. էն դաիկ նէն ու նաս թռաւ որ դարբեցաւ, ճայն կտրեցաւ, գնաց դրան ետեւի քայն ետ ձգեց ու դրան վըայ նստաւ ու տաւայն մէ մէկ դուս էրաւ: Պէհէյ, պէհէյ, էրաւ, օջիսայն դուս ելան, էմէն մէկին տնտղկեց, մարդուն չգտաւ, էն չաղն դուս ելաւ ազան տուաւ: Ազան որ տուաւ, բոլոր թափակէօզնին՝ ինչդաիկ որ կային, մօտ եղան եկան մէ համլէմ, տեսան որ իրենց ընկերին աչքն քորացած ա, ասեցին. Ի՞նչ եղած ա քեզի: — Հոզայ ինսան կայ, լաւ աշեցէք, ասաց: Հոզայ, հունայ թռան, օջինչ չգտան. էն մարդն տարւին հետ ելած ու փախած էր սարեյն: Թափակէօզնին հոտ էնելով, հոտ էնելով անոր հետքին հետ գնացին: Էն մարդն մէմալ ետեւն աշեց որ թափակէօզնին կու գան. թռաւ, թռաւ, թռաւ մի կաժմ<sup>1</sup> ետ անցաւ էնոնց, զայրաթ էրաւ որ մէ կաժմ ալ անցնի, չկայցաւ, սիյտն պատուեցաւ, տեղն ի տեղ առ Աստուած փոխեցաւ ու թափակէօզներուն ձեռքէն պրծաւ:

### ԺԱ.

## Թ Ե Փ Ա Հ Ո Գ Ո Ւ Ն Ն Է Ք Ե Ա Թ Ն

Մէ թագաւոյմ կրնի, մէ մանչ զաւակով կուեննայ,  
որ հէչ աշխարհք տեսած չունիր, տան մէջ կուտէր:

<sup>1</sup> կաժ. բլուր: Ող, սարերու գլխտանք: Թամբ, սարի գլուխ դուր տեղ: Պառակ, լեռան մէ կողքը: Փուլ, փոփլած տեղուանք: Կապան, կիրճ, բարձրաւանդակ ժայռեր: Քարծայր, կտնծայր, քարի գլուխ, էյնալու գէշ տեղ: Գուր, տափաստան: Օվիտ, (հովիտ) մեծ տափաստան:

լամիր, պառկիր, ոտքն դուռ կոխած չոււնիր. իրեն տեղին պիտայ վեր քաղել չէր, էման գուռ էր: Մէ օյմ ասեցին. Էկէք խոր կարգինք, պալքի մարդ ընի: Հայսնիք՝ կէնին, տղին կարգին. համայ մէկալ օյն կաշին որ, ալի էն գուռն, ալի էն գուռն: Ծօժ, կասին, դու օրեյս՝ տեղին հալայ ձգէիր, վեր քաղէիր, քու հալդ լ՛նչ պիտի ընի ատման: — Հա՛, օրեյս հայս չի կար, հիմի ալ ես ո՛ւր բանիմ որ: Մէկ էգուռանմ կիրակի, որ հաղւերն բոլոր ժամն էին, հայսն մարդուն խաբայ խաբխրայ, դրան մօտն ի վար տանի, դրան որ մտտենայ թէ չէ՝ էման մէմ ուռանցք կու տայ

<sup>1</sup> Անկողինը վերցնել:

<sup>2</sup> Հարսանեաց արարողութիւնք. հարսն կածնեւէն վերջ, կեորալը կու գայ, կածնողներուն վարձքը կու տայ ու հարսին ձեռքէն բռնած տնէն դուրս կը հանէ, խուռն բազմութեան մէջ ագուռ ագուռ մանր ստան կը փռէ, որ հին ստեն աւելի կը գործածուէր: Հարսն ու թագւորն ժամը կառջնորդուին. պոսկի խորհուրդն կատարուելէն վերջ, թագւորադարն առաջ կ'անցնի, ետեւէն թագւորն, ատոր ետեւէն հարսն գօտիէն բռնած եւ հարսին ետեւէն ալ հարսնքոյրն եւ թագւորաքոյրերն. առջեւէն ալ կ'երթան մակրտանք (հարսին կողմանէ 7—8 հոգի մարդիկ) խուռն բազմութեամբ եկեղեցիէն դուրս կ'ելլեն: Ժամին դուռն հարսնքոյրն ու թագւորաքոյրերն քաթայ ու շաքար կը փռեն ու տղայքն խառնիճաղանճ կը ժողվեն: Երբ քիչ մը տանն մօտենան, մակրտանք կը կակնին, զո՛հ կուզեն իրենց կենաց: Խոյ մը կ'առնուեն կու գան անոնց առաջ կը մորթեն. մորթողին մէճիտայ մ'ընծայ կու տան: Երբ թագւորին տունը հասնին, դուրս կակնին. թագւորին մայրն դուրս կ'ելլէ, կու դայ իր տղին ճակատն կը պահէ, յետոյ հարսին ու հարսինքրօջ կը բարովէ. սկուտակ մը լի ցորենով կու տայ հարսին, որ ագուռով համարձակ շորս կողմ կը փռէ արեւմուտք, արեւելք, հիւսիւս եւ հարաւ: Հոս մակարներն փոքր պար մը կը բռնեն, կը կանչեն. Թագւորամայր բարիլուս, բարիլուս, փէշքեաշ կու տամ, փէշքեաշ կու տամ, արի գուս: Ա երջապէս թագւորամայրն դուրս կ'ելլէ, գլխուն վրայ կըր սեղան մ'առած, մէջն սկուտոյ մը քեսահիով ու վարշամակով, կու գայ մտնու պարին մէջ տեղն ու անոնց հետ կը խաղայ քիչ մը ժամանակ: Յետոյ բոլոր ժողովուրդն կերակուր վայելէն. վերջ կու գան պար տեղն, հարսն ու թագւորն կը նստեցնեն ու իրենք պար կը բռնեն սկով ու քեսամաշիով անվերջանալի մինչեւ արշալոյս:

<sup>3</sup> Առաջ, ուրիշ օր: Սեղանն վար քաշել, յարդարել. սեղանն վեր քաղել, վերցնել:

էնոր, որ շիմէն դուս կրինկնի. հոն մէմ երկինքն ի վեր կաշայ, մէմալ ծառներուն, արմնայ ու զարմնայ: Կնոջն կաղաշայ, կասայ. Ինձի ագուում<sup>1</sup> ալուր, մէկ հաւկիթմ եւ մէ հացմ տու: Ըն ալ վերեւանց ծակէն ուն կու. տայ ինչ որ ուզեց. կառնու, կերթայ ու կերթայ, համայ օչ ճանապարհ գիտայ, օչ աս, օչ ան. մէմ երկինքն ի վեր կաշայ, մէմ գետինն ի վար. խելքն թռուցած ունի, չիգտէ նոր կերթայ:

Ելած էր մէ սեղմինի կերթար, մէմալ մէ արջմ ու գեալմ ըաստ եկան իրեն ու մէմալ մէ ուշապմ, իրար հետ էման բանէին, էման բանէին որ կրակի պէս: Ընոնց կասայ. Ձիթի, ինձ ալ հետուիդ աղբար էնէք: — Դու ի՞նչ իք իս, որ քեզի աղբար էնինք, թեփահոգի, բերանդ ինկած ա, մեզի հետ բանիս: Ըն չաղն էն ալ հաւկիթն խալպաթ ծոցէն դուս հանայ ու վըայ կենայ, սոզոայ քայմ վեր կալնու, կասայ. Դուք ալ կայնա՞ք քարի մէջէն իրար<sup>2</sup> տալով ջուր հանել. ես կայնամ: Ըն ժում հաւկիթն իրար կուտայ ու կասայ. Աշեցէք, էհէն ես քարին մէջէն ջուր հանիմ: Զույն որ ելաւ, էնոնք արմնցան շատ ու ասեցին. Ատ ի՞նչ ղօչախ<sup>3</sup> մարդ ա, որ քարէն ջուր հանայ:

Ետեւ ալի խալպաթ<sup>4</sup> ծոցէն ագուում ալուր դուս հանայ ու սուտ վըայ<sup>5</sup> կենայ, գետնուցէն հող վեր կալնելու, ու էնոնց կասայ. Դուք ալ կայնա՞ք հողն ալուրի փոխել. ես կայնամ: — Թէ որ ձեռքիդ մէջ ատ հողն կայնաս ալուր դարձնել, կասին, քեզի օրթախ կէնինք: Թե-

<sup>1</sup> Ագուում, մէկ ձեռքն կամ երկուքն ի միասին որչափ որ կ'առնուն: Բուռ մը (խոր) մէկ ձեռքն որչափ որ կ'առնու: Պտեղ մը, պտղուց մ' (ալուր) քիչ մը, երեք մատով որչափ որ կարելի է: Անթ, անթեւ, երկու ձեռքով որչափ որ կրնայ մարդ գրկել:

<sup>2</sup> Իրար տալ, սխմել: — <sup>3</sup> քաջ: — <sup>4</sup> Գաղտնի: — <sup>5</sup> Վըայ կենալ, ծախել, խոնարհել:

փահոգին ձեռքն բանայ որ ալուր ա դարձած. էնոնք կաշին ու արմնան ու զարմնան, կասին. Զեզի Հիմի աղբար կէնինք: Ըն օյն ասման անցաւ. մէկալ օյն կասին. Նրթանք փատի: Պատրաստուին երթալու: Թեփահոգին կասայ թէ՛ Պտանի ինչքան չուան կայ, իրար կցեցէք, որ ես մարին պիրատի շալկիմ պիտի: — Լաւ կասին էնոնք ալ, ու ճանապարհ կենին կերթան:

Հասնին օրայ մարին, իրեք աղբայն կանցնին ծառներուն ետեւն ու կացին չափին. թեփահոգին իման կակնած ա, խօսել պիլայ չի: Ընոնք կասին. Աղբար, դու էնը բանել չիս, իման շուարած կակնած իս: — Ի՞նչ էնիմ, կացին զայնում, համայ վախենամ թէ՛ մարին պիրատի իրար խառնիմ: — Աման, աման, լուր է, կասին, մարին մեզի ալի պէտք ա, մեք քու շալակդ ալ կէնինք, տեղդ վայ նիստ: Փատէն դարձան եկան ու էնոր հէչ ալ շալկեցուցին ոչ, վախեցան թէ՛ պիրատի մարին շալկայ կու:

Մէ օյմ ասեցին երթանք այտն քայ նետելու: Գնացին. իրեքն նետեցին, սրէն եկաւ թեփահոգուն, ասեցին. Տէ՛, նետա՛, ո՛ւր ես շուարած: — Նետիմ, համայ վախենամ թէ՛ քայս երկնքին դպչի ու փլչի վրէնիս ի վար: — Ամանիկիտի, մի նետե աղբար, թէ չէ պիթուես ալ գնացինք:

Ըն իրեք աղբայն կու գան տունն, խորհուրդ կէնին իրարու մէջ, կասին. Ատ ի՞նչ ուժով մարդ ա, ատ սունդին մեզի զայ կէնայ, էկէք մեր գլխուն մէ ճարմ գտնուկ: Միտք կէնին ու կասին. Էկէք, շամբուրն շողմուկ, պառկի օրայ տանինք միսն զայնուկ ու սրպանինք էնոր: Թեփահոգին կիմանայ, տեղէն վեր կենայ, իրեն տեղն մէ խունջմ<sup>1</sup>

<sup>1</sup> Խուենջ, ծառի կոճղ, քիւթուկ: Ռոյ, ծառոց ոտերէն եղած փայտ: Կեւեւ, ճեղքուն թոյլ փայտ: Ծառոփ, դիւրավառ մանր փայտ: Խոչ. խէզ. Չող. Գերան. Կանս:

բերայ վայ դնայ ու ինքն ալ կերթայ սխիրն փաթուփուի ու պուճախն կակնի: Ընոնք շողջած շամբուլն բերին նե զայնուն խուճնինի ու կերթան, գիտին թէ թեփահոգին մեռաւ: Մէկալ էգուանն թեփահոգին վեր կեղնայ կու գայ իրեն ընկերտաննց բարեւայ, կասայ. Աս գիշեր ինձի լուերն հոգիս հանեցին: Ընոնքն ալ բարեւն կառնուն ու զարմնան թէ՛ որման բան ա, որ չէ մեռած:

Ըն շաղն կասին. Եկէք խալկինն ջուր եռ հանինք ու տանինք լնուկք վրէն, որ խաշե ու սատկի: Թեփահոգին կիմանայ այլ ու թազչի: Ընոնք եռ ելած խալկինի ջուլն կառնուն կու գան, վեթին խնջին վրէն ու փախչին կու գան. գիտեն թէ՛ թեփահոգին մեռաւ գնաց: Մէկալ էգուանն թեփահոգին կեղնայ կու գայ իր ընկերտաննց բարեւայ, կասայ. Աս գիշեր իժով քիյտնած էի:

Ընոնց ճայն կտրի, թեփահոգուն կասին. Ի՞նչ եղաւ, եղաւ, եկէ բաժնուինք: Ըն ալ օջինչ չունիր ու կասայ էնոնց. Լաւ, բաժնուինք, համայ իմ տունս հեռու ա, իմ շէանս վով տանի: — Մենք տանինք, կասին էնոնք. դու մի դայտ էնել: Ըն ժուժ բաժինք կէնին ու թեփահոգումէն վախենալուն, էնոր ալ բաժին հանին: Թեփահոգին դայտակ իրեն տունն կերթայ, էնոնք ալ իրեն շէանն շալկին ու ետեւունց կերթան: Դուռն որ հասնին ու չին, կաշին որ թեփահոգին պաշամիշ երած ունի, զամէն էման սրայ որ. էնոնք վախին, շալկինն հեռուն վայ դնին ու կուծէկուծ փախչին տա փախչին:

Ճամբէն որ էման փախչէին, մէ տէյտէյմ՝ րաստ կու գայ, կասայ. Ժ՛, մանչեյ, խէյն ըլնի, ի՞նչ եղած ա, որ իտման փախչիք դուք: — Մի՛ ասե, Տէյտէյ, էման մէ գէշ մարդմ կար որ, էնորմայ վախեցանք, շալկիս վայ լցանք ու փախանք: — Դուք էնորմայ ուր վախենայիք, էն

ի՞նչ մարդ որ, էն թեփահոզին չէ՞ մի. հայտեք երթանք, ես ձեզի հետ իմ: — Չէ, Տէյտէյ, ի՞նչ կասես ասա, մենք դալ չինք: — Չուանն բերէք իմ մէջքս կապիմ, ես առաջ կանցնիմ, դուք ալ ետեւէս եկէք, միք վախենալ: Տէյտէյն առաջ կանցնի, իրենք ալ ետեւունց կերթան սիյտեյն դող: Է՛ն տեղ որ մօտիկցան, աշեցին որ թեփահոզին ձեռուին ետ ունի ծալած, վերայ ղամէն սրայ. էնոնք տեսնուն թէ չեն, տէյտէյին լուր կենան, իրենք էման փախչին որ, զիտես թէ, ետեւնէն հետ ղնող կայ: Կէս սահաթուան ճանապարհ գնացին, հէջ ետ աշեցին ոչ. մէմալ աշեցին որ, Տէյտէյն կորած գնացած էր: Իրենք թեփահոզումէն խալսեցան ասման. թեփահոզին ալ գնաց իրեն տունն, մարդու պէս ապրեցաւ:

ՅԷ.

Ս Ը Ռ Լ Ի<sup>1</sup> Ք Է Օ Ս Ի Ն<sup>2</sup> Հ Է Ք Ե Ը Թ Ն

Մէ թագաւոյն կրնի, իրեք մանչ կունենայ, իրեք ալ աղջիկ: Մեռնի օրայ, օսէաթ<sup>3</sup> կէնայ իրեն մանչերուն ու կասայ. Իմ աղջիկներուս վով որ կուզայ, տուէք, չէ՞ մի էնէք, մի դարձնուք ետ:

Թագաւոյն մեռնի կերթայ. մէ դեւմ աղուէսի կերպարանօք կու գայ մեծ աղջկան ուզելու: Մեծ աղբայն դէմ կակնի, չի տա, կասայ. Ի՞նչ կարելի բան ա, որ մեր քոյն դեւի տանք, ատ չընալոց ա: Դեւն կու գայ

<sup>1</sup> Սըռլի, հնարք ունեցող: — <sup>2</sup> Քէօսայ, անմօրուք: — <sup>3</sup> Օսէաթ, կտակ:

միջնեկ աղբօյն. էն ալ չի տա: Ըն վերջ կու գայ պիծիկ աղբօյն, էնորմայ խնդրայ: Ըն կասայ. Իմ հօյս օսիաթն աս էր թէ՛ վով որ դայ աղջիկներուս ուզայ, ուն սուէք, չէ մի էնէք: Ու քոյն կառնէ դեւին կու տայ. էն ալ կառնու աղջկան, ումնուզին ձգայ ու փախչի:

Կանցնի երկու օր, ուրիշ դեւմ կու գայ արջու ղըլավաթով ու միջնեկ աղջկան կուգայ իրեն: Մէկալ երկու աղբայն ալ չեն խառնուիլ ու պիծիկ աղբայն դեմ կենալ չի, ուն կու տայ էնոր միջնեկ քրոջն: Կանցնի երկու օր, մէ դեւմ ալ կու գայ գեայու ղըլավաթով, էն պիծի աղջկան կուզայ: Պիծի աղբայն ալի հա՛ կէնայ ու քրոջն ուն կու տայ. բորբէն ալ խալի, ինքն մնայ մէննակ տրտում. տխուր:

Մէ օյմ կենայ կերթայ ոյսի. մարիներէ կանցնի, պոլ տեղեր քալէ, կու գայ մէ գետիմ մօտ կակնի. կաշայ որ մէջէն մէ ոռնտ բանմ աղջկայ կերպարանքով կերթայ դարվար ջրին երեսն: Կզմայլի շատ ու կերթայ, ետեւէն թռչի, կերթայ կառնու, նե դնայ ծոցն ու ետ դառնայ: Կու գայ տունն, օչում ասել չի, եղբրտանց կասայ. Ես կու բաժնուիմ: Ինոնք չին իրեն ականջ էնել, իրեն բաժինն կառնու կերթայ հեռու հեռու երկիրներ: Ծատ կերթայ քիչ կերթայ, շատ կերթայ քիչ կերթայ, հասնի մէ քաղաքմ, իսկի մէկ ինսանմ չի տեսուլ, չօլ<sup>1</sup>, վէրանայ<sup>2</sup>. պիծիմ ալ քալայ, մեծ մեծ տներ կակնած ին ոռնտ ոռնտ ճամբէներով, համայ օչով չիկայ: Մէկ մալ մէ բանձր սուռնմ ի վեր վեր կաշայ այվանն<sup>3</sup> ի վեր, մէ կինմ տեսնու, որ իրեն կասայ. Աղբար, դու իսա ժա-

<sup>1</sup> Չօլ. անպատ: — <sup>2</sup> Վէրանայ, անէն: — <sup>3</sup> Այվան, վերի դասիկոն, (մեծ պալատն):

մանակս իսանի ի՞նչ բան ունես: Վար կիջնու շտապով դուռ բանայ, էնոր նե կառնու. վայ նստին, խորոթին օրայ տղէն ճանչայ որ իրեն մեծ քոյն ա, իրար ճիտն փատթին ու կու լան: Ետեւ ոտուին լուանայ ու հաց վայ դնայ, կասայ. Աղբար, մէմ ինծի ասա, դու ի՞նչը՞<sup>1</sup> իսանի եկար, գէշ երկիր ա: փեսէդ դեւ ա, քեզի տէրոր իրկուան չիմ կայնա պէհել, քաւէլ<sup>2</sup> քեզի խախրի մէջ պէհիմ: — Ձէ, ես էնոր լաւութիւն ունիմ էրած, էն ինծի ուտել չի:

Իրկուան որ կրնի, դեւն կու գայ տունն ինի նե մտնու, կաշայ որ մարդ կայ, վրէն թռչի թէ՛ ուտայ: Կնիկն էնոր բռնայ ու կասայ. Կեցի, կուտես համայ բկիդ չընկնի, հա՛, մէմ լաւ աշա՛ թէ՛ ատ վո՞վ ա: Դեւն պիծիկմ ալ կաշայ, ճանչնայ. Վայ, կասայ, քա՛, ուր ինծի չէիր ասել, աս իմ աներձագս ա, քիչ մնաց. ատ որ ուտէի: Չեռքէն բռնայ, կասայ. Բարի տեսանք, բարի տեսանք, աներձագս, ու պոլ խորոթին հետրար: Մանչն կասայ թէ՛ իսպէս իսպէս բանմ գասած ունիմ, չիմ գիտել թէ՛ ի՞նչ ուժ ունի. Տոցէն հանայ, ցուց կու տայ: Լաւմ կաշայ, կաշայ դեւն վրէն ի վար, գիտիմ հիմի, կասայ. Մեք իրեք աղբար ենք, իրեքս ալ քու քուրերդ առած ունինք. միջնեկ աղբայս իս տեղէս երկու ժամուան ճանապարհ հեռու ա, էնոր մօտ գնա, էն չիգտայ. պիծի աղբոյս տեղն էնորմայ խրատ առ, կերթաս էնոր մօտ, էն քեզի էմէն բան կասայ: — Լաւ, կասայ, տղէն, ատման էնիմ:

Մէկալ օյն տղէն քրոջմէն բաժնուի, կերթայ միջնեկ քրոջն գտնելու: Երկու սահաթ կերթայ, չի երթայ, մէ գեղմ՝ րաստ կու գայ, մտնու մէջն, քալայ. մէ կինմ

<sup>1</sup> Ի՞նչը, ինչպէս: — <sup>2</sup> Բաւէլ, միայն թէ:

տեսնու իրեն, կասայ. Աղբար, դու իսա տեղուանքս ի՞նչ բան ունես, դու ձրման եկար իսանիս, դեւերուն շնչէն ժժմունք<sup>1</sup> խթխթալ<sup>2</sup> չի, դու ի՞նչ վախեցար ոչ եկար: Աս իրեն միջնեկ քոյն էր, իրեն տուն, տեղ կէնայ, վայ նստին: Իրկուէն որ կըլնի, քոյն կասայ. Գիտես աղբար, էկէ քեզն պէ՛հիմ, փեսէդ դեւ ա, հիմի կու գայ քեզն կուտայ: — Չէ, կասայ, աղբարն, ինձի մի՛ պէ՛հե, ուտայ, ուտայ թող: Պահմ վերջ դեւն կու գայ նե մտնու, տեսնու որ ուրիշ ինսան կայ, պիճիմ կաշայ, կաշայ, ճանչնայ որ իրեն աներձագն ա. Բարով, բարով, կասայ: — Ասճու բարին: — Դու իսանի ի՞նչ ման կու գաս: — Ի՛, իշթայ, իաման իաման բանի համար եկած ինկած իմ: Հանայ ծոցէն քիսբաթն<sup>3</sup>, ցուց կու տայ իրեն: Մէկմ լաւ կաշայ ու կասայ. Աս օշով չեգտայ, մինակ իմ պիճի աղբայս գիտայ: Ինոր տեղն խրատ կու տան ու ճամբին:

Տղէն կերթայ պիճի քրոջն ալ զտնու փեսին հետ. շատ սիրով նե կառնուն<sup>4</sup>: Վայ նստին իրար կարօտն կառնուն, ետեւ տղէն կասայ փեսին. Իսման իսման բանի համար եկած իմ, էմէն աշխարհք ման եկայ, մարդ չկայցաւ ասոր զօրութիւնն իմանալ. դու պալքի գիտիս: Փեսէն կառնու ձեռքն, մէմ լաւ վրէն ի վար կաշայ, միտք կէնայ ու կասայ. Ասոր տէյն հող չա, դու ալ չես կայնայ երթալ. չունքի ասոր տիրոջ հողն սրուլի ա, չես կայնայ նէն անցնիլ. պէտք ա մէ լաւ ձիմ հեծնուս, քառսուն չեպուղ էնոր զայնուս, էման զայնուս, էման զայնուս, որ ձին փրփրայ ու թեւեյն դուս գան, օղէն ֆղայ<sup>5</sup>, կանցնի տիրոջ հողին մէջ:

<sup>1</sup> Ժժմունք. կենդանիք. դեւունք: — <sup>2</sup> խթխթալ. տեղէն շարժիլ: — <sup>3</sup> քիսբաթ. պատկեր: — <sup>4</sup> նե առնուլ. բնդունիլ: — <sup>5</sup> ֆղալ, թռչել արագ (թռչնոց):

Տղէն նստի ձիուն վրայ, քառսուն ղամէին<sup>1</sup> ձիուն որ կու տայ, ձին օրն կելնայ, թեւ կառնու, թռչի կերթայ սրուի քէօսին ղունաղին<sup>2</sup> մօտ կակնի: Ձիէն վար կիջնու, կաշայ որ դուռն ասլանմ<sup>3</sup> եւ ղոջմ<sup>4</sup> կապած ին. ասլանին առջեւ խոտ կար, ղոջին առաջն ալ միս. միսն վեր կախու՝ ասլանին առաջ ձգայ, խոտն ալ ղոջին առաջ ու ինքն նե մոնու տունն: Քէօսէն նոր պառկած էր. աս մէմ որ պառկիր ո՛չ, օխտ օր քուն կրնիր: Հող տեսու մէ աղջիկմ, շատ ունետ, իրեն ման եկածն էր. քիւրաթն որ հետն բերած ունիր, իշթայ ատորն էր. քառսուն օրէն քէօսին հետ կարգուիր պիտի, համայ ինքն կուգէր՝ որ իրեն խախողմ ընիր: Տղէն աղջկան հետ խօսի ու կասայ. Էս քեզի իս տեղէս խալխիմ պիտի: — Դու ինծի չես կայնայ խասել, կասայ աղջիկն, հողայ քէօսէմ կայ, իրեն էմէն բանն սրուի ա: Թէ որ կուգես ինծի խասել, անկաճ էրա. վար գումն ձիմ կայ առաջն միս, ղարլանմ<sup>5</sup> եւ ասլանմ կան առաջնին խոտ. դու գնա էնոնց ղարմաննին<sup>6</sup> փոխա, ձին քեզի ինչոր մուրատ կուզես կու տայ:

Տղէն կերթայ նե մոնու՝ գումն, ձիուն առջեւէն միսն կառնու՝ ասլանին ու ղարլանին առաջ ձգայ, խոտն ալ տանի ձիուն առաջն: Ձին մէկէն ի մէկ խօս կելնայ. Այ ինսանողի, կասայ, ի՞նչ մուրատ կուզես ինծիմայ: — Ծս իւքան տարի ման եկայ, իմ ինդրածս գտայ, հիմի չիմ գիտել թէ՛ ի՛նցո ազատիմ: — Ծս երսուն տարի իմ տիրոջս ծառայած իմ, հիմի ի՛նչդ էնոր կոխիմ. համայ դու որ ինծի սէր, լաւութիւն ու բարութիւն

<sup>1</sup> Ղամչի, խորազան: — <sup>2</sup> Ղոնաղ, բնակարան: — <sup>3</sup> Ասլան, առիւծ: — <sup>4</sup> Ղոջ, խոյ: — <sup>5</sup> Ղարլան, վագր: — <sup>6</sup> Ղարման, անասնոց կերակուրն: — Օղուանք, կոփու ապուր: — Լակլակել, շան կերակուրն:

ցուց տուիր, որ ես անօթի, իսքան վախտ աչուիս դուս էկած էին, ես ալ քեզի մէ լաւութիւնմ էնիմ<sup>1</sup>. Գնա տունն, քէօսին թարաքն<sup>2</sup> մէ քայմ կայ, մէ սանտիյմ<sup>3</sup> եւ մէ պիծի շուշէմ ջուր, ատոնք հետդ առ, ձիուդ հեծիր ու փախիր: Չին ալի կասայ տղին. իտա ջորուդ կը տեսնուս, ատ քէօսին խապար կէնայ, ետեւէդ կու հասնի. դու լաւ աշա, տեսնուս որ ետեւէդ եկաւ, դու քայն ետ ձգա, գուռ<sup>4</sup> քար կտրի<sup>5</sup>, էն ջարդայ ու կու գայ: Դու աշա, թէ ալի կու գայ, սանտիյն ետ ձգայ, մարի դառնայ, էն ջարդայ կանցնի. դու շուշին ջույն ետ լից, ծով կու դառնայ. դու կանցնիս կերթաս քու հողդ, էն ալ քեզի չի անցնի: Ծնորհակալ կրնի տղան ձիուն ու շուտ կերթայ թարաքին քայն, սանտիյն ու ջրով շուշէն վեր կաշէ, նստի իրեն ձիուն, աղջկան ալ գաւազն<sup>6</sup> կառնու, օձն ղամջի կէնայ, փախչի տա փախչի:

Կանցնի իրեք օր, քէօսին թօփալ ջորին կիմանայ եղածն, էման խրինջայ, էման խրինջայ, էման ոտուին կուռտեխքին<sup>6</sup> զայնու, որ քէօսէն ձենէն ու դբդբունէն զայթի, վեյ թռչի, կաշայ որ աղջիկն չկայ. կու գայ գումն, ձիուն, ասլանին ու դարլանին նեղուորի կու թէ՛ ուր ինծի խապար չէիք էնել: Ինոնք իօսեցան. Մենք, ասին, իսքան վախտ անօթի ու ծարաւ կենալով՝ աչուրնիս դուս էկած էին. էն տղէն որ մեզի աղէկութիւն էրաւ, մենք ուր իրեն ճանապարհ իրատ տայինք ոչ: Քէօսէն նեղուորի շատ ու թրքանայ<sup>7</sup>, համայ ի՞նչ էնէր. նստի թորալ ջորին ու ետեւուցէն հասնի զորդշունի

<sup>1</sup> Թարաք, տան կամ սենեկի մէջ սարքուած տախտակ, վրան բաց: —

<sup>2</sup> Սանտի: — <sup>3</sup> Գուռ (քար), ապառաժ: — <sup>4</sup> Կտրիլ, դառնալ: —

<sup>5</sup> Կաւազ, ետեւն նստելու տեղը: — <sup>6</sup> Կուռտեխք, գոմին տակն հաստ տախտակներ, որոնց վրայ պառկին կենդանիքն: — <sup>7</sup> Սաստիկ բարկանալ:

պէս: Վեց սահաթ կերթայ չի երթայ, քիչ մնայ որ դեւին ձիուն ժմնայ<sup>1</sup>: Մէմալ ձին խօսի ու կասայ տղին. Ինսանողլի, ետ աշա հալայ, քէօսէն եկաւ: Տղէն հէմէն քայն ետ<sup>2</sup> ձգայ, գուռ քար կտրի չոյս բոլոր. քէօսին ջորին ջարդայ ու կանցնի: Տղէն կաշայ որ չիլի, սանտիլն ետ ձգայ, ետի դինն փիթուն մարի դառնայ. ջորին էն ալ ղայրաթով կտորայ ջարդայ կանցնի: Էն ժում տղէն շուշին ջույն ետ լնայ, մէմալ ետեւն ծով դառնայ. ինչդ որ ջույն ետ լնուլ չի, մէ կաթիլմ ալ իրեն աւաջն կինկնի. մինչուկ որ ինքն պիծի կէօլէն<sup>3</sup> անցաւ չանցաւ, քէօսէն եկաւ անցաւ իրեն, մէ կաթմ<sup>4</sup> ալ մնացած էր դեւին հողն կոխելու. հէմէն թուրն քաշայ՝ զայնու սրպանայ տղին, կտոր կտոր կէնայ, լնու խուրձին, ձիուն վրայ ձգայ, ղամչիմ ալ զայնու օտուն, հայտէ. ինքն աղջկան կառնու կու գայ տունն:

Էն ձին կերթայ կերթայ, աղուէս դեւին դուռն կակնի, տղին փեպին: Տղին քոյն դուս կելնայ, կաշայ որ ձին եկաւ, աղբայն չիկայ ու հապուկային մէջէն արուն պլայ<sup>5</sup>, կու լայ մաղկտի, կասայ. Բանոր երթամ, աղբայս սրպանած ունին: Իրեք դեւեյն մօտ<sup>6</sup> կըլնին կու գան թէ՛ ինչ էնին: Պզտիկն կասայ կնկան. Դու կայնաս իտոր անդամին իրար մօտ դնել էմէնն իրեն տեղ, միսն միին, ջիւն ջիւն: Էն էման որ կէնայ, մեծ դեւն շուշէմ դեղ կառնէ, փետուլով մարնուն քսայ. յօրեյն իրար կպչին, կըլնի ռուստ մեռել. դեղմ ալ որ խմցնու, տղէն վեր կելնայ կակնի, իրենց հետ հաց կուտայ. ու քոյն խիստ խնտայ ու ճօշանայ:

<sup>1</sup> Երթալ հասնիլ: — <sup>2</sup> Ետեւն ձգել: — <sup>3</sup> Լիճ: — <sup>4</sup> Կաթ, բուր: — <sup>5</sup> Պաւ, ճաւ, հասել: — <sup>6</sup> Մօտ ինիլ, ժողվիլ, մօտ էնել, ժողվել:

Դեւեյն խորհուրդ կէնին թէ՛ մինչուկ որ քէօսին սրուն չեմացուի, աս բանն չէ կարելի: Տղին կասին. Դու ալի գնա առջի ճամբով, քէօսէն քուն կրնի, դու աղջկան ասա որ նէ ուտայ նէ խմայ, նէ հետն խօսի, միչուկ որ սրուն իրեն չասայ: Տղէն կերթայ, աղջկան էման կասայ ու ինքն դուս կելնէ: Բէօսէն զարթի, կաշայ որ աղջիկն տխուր ա. Դու ի՞նչ եղար, կասայ էնոր, նա կուտես, նա խմես... Հայպաթ դու ի՞նչ եղար: — Չի՞գտես ըմպայ, ես մէ բանմ կուզիմ քեզմէ, քանի որ մենք երկուքս մէկ պիտի ընինք, իրար ընկեր պիտի ընինք, առանց ասոր չիլնի: — Ը՛, ի՞նչ կուզես, ասա: — Ես կուզիմ որ քու սրուդ, քու հոգիդ, քու ուժդ ինծի ասես: — Բն, չէ՛, չէ՛, ատ ի՞նչ կարելի բան ա: Աղջիկն որ պու զօրեց, տեսաւ որ չիլնի քէօսէն, ասաց. Իմ սրուս, իմ հոգիս տի՛հա օտին թարաքն ա, զուժիմ կայ, էնոր մէջն ա. բաց, կարմիր քայմ կայ, էն ալ բաց, պիծի ճնճղուզմ կայ մէջն, իմ հոգիս էնոր մէջն ա. էհէն ասեցի: Աղջիկն չի աւտալ, գիտայ թէ սուտ ա. մէ օյմ որ քէօսէն քուն կրնի, կերթայ զուժին բանայ, ճնճղուզին ճիտէն<sup>1</sup> պիծիկմ իրար կու տայ, ետեւ կու գայ կաշայ որ քէօսէն կէսմ մեռնելու դուռն հասած ա, կիմանայ որ շիտակ ս:

Կանցնի երկու օր, մէմալ կաշայ որ էն տղէն առջի հեղի պէս ձիու վրայ արծուի լման Ֆղալով<sup>2</sup> հասնի իրեն մօտ կակնի. քէօսէն լոկոր<sup>3</sup> պառկած էր: Աղջիկն տղին կասայ թէ՛ իմէն բան իմացած իմ քէօսին: Կերթայ զուժին<sup>4</sup> բանայ ճնճղուզին ճիտն իրար տալուն պէս՝ սատկի.

<sup>1</sup> Ճիտ. վեզ. պարանոց: — <sup>2</sup> Ֆղալ, սրանալ: — <sup>3</sup> Լոկոր, գեռնոր: — <sup>4</sup> Ղուժի, տուժ:

կերթան քէօսին մօտ, կաշին որ պաղած, չորցած պրծած  
 ա: կերթան գուճն օրայ, քէօսին ձին խօսի ու կասայ.  
 Քէօսին սրպանեցիք, չէ՞, լաւ էրիք. իտա ջորուդ ալ մին-  
 չուկ օր չսպանէք, չինի. ատոր սրուն ալ էն ղութուն  
 մօտ ուրիշ ղութիմ կայ, ղութուն մէջ սեւ քայմ կայ,  
 քարին մէջ սեւ ագռաւմ կայ, էնոր հոգին ատոր մէջն  
 ա. ատոր ալ ճիտն իրար տուէք, ջորին սատկի. ու հիմի  
 ղարլանին ու ասլանին զինձիլնին կտրեցէք, լուր կեցէք  
 երթան, ա՛լ օչինչ չին էնել. դուք ալ աս երկրէս հե-  
 ուացէք, դու ինծի հեծիր, աղջիկն ալ քու ձիուդ հեծ-  
 նայ, ելնինք ու փախչինք: Տղէն էման կէնայ. կու գայ էն  
 աղջկան հետ իրեն իրեք դեւ փեսենուն մօտ, հուն տուն  
 տեղ կըլնի ու էն ձին ալ էմէն մոռատ կու տայ իրենց:

## ԺԸ.

### Ո Խ Շ Ա Պ Ա Ղ Ջ Կ Ա Ն Ն Է Բ Ե Ա Թ Ն

Մէ գեղեմ մէջ մէ մայմ կըլնի, իրեք մանչ կու-  
 նենայ, համայ հէչ աղջիկ չունիր: Մանչեյն մեծնան,  
 կեյնին կերթան ղուրպաթն փարայ վաստկելու. տարուէ  
 տարի կու գային, կերթային: Համայ ի՞նչ էնիմ որ, մօյն  
 սիյտն հէչ տեղն չէր, լաց ու օղբ ունիր իծիր ու կասեր.  
 Տէր Աստուած, ո՞ր ինծի դու մանչ պոլ տուած ունեք  
 ու աղջիկ հէչ տուած չունես. ինծի մէ պղջիկմ տու:  
 Ասման կասայ ու փառք չի տայ Ասծու Թէ՛ Տէր, գու  
 գիտես, քու կամբովդ ըլնի Թող:

Աստուած կիմանայ աս կնսջ ինդրուածքն, մէ աղ-  
 ջիկմ կու տայ, համայ ուշափ ճինս: Տղէն որ մէ տարե-

կան կրճի, մօյն ծիծն դուս քաշայ, կուտայ: Մայն կասայ. Կե՛, օրդիս, կե՛, մէ ծիծս ալ քեզի համար աս: Իրիք տարեկան որ կրճի, մէկալ ծիծն ալ դուս քաշայ, կուտայ: Տաս տարեկան որ կրճի, մէ օյմ՝ մանչեյն դուս ելած էին, կրնկի մօյն վրէն ու փիթուն կուտայ, մէկ օսկօյնին մնան կու: Մանչեյն մէմալ կու գան կաշին որ, մօյն կերած ունի աղջիկն, ա՛լ նե չին մոնուլ, փախչին ու փախչին, կերթան ղուրպաթն ալ գալ չին:

Կանցնի մէ տարիմ, մեծ աղբայն կասայ. Մէմ երթամ աշիմ թէ՛ մեր քոյն ի՛նչ եղաւ: Կու գայ նե մոնու տունն, քոյն սիրով դէմ կենայ, ճիտն<sup>1</sup> փատթուի, տեղ կէնայ, վայ նստին: Բոյն կասայ. Ես երթամ ջուլն<sup>2</sup>, դու հացդ կե: Աղբայն միտք կէնայ միտք կէնայ, կասայ. Ի՛նչ էնիմ, նո՞ր երթամ, աս ինձ ալ կուտայ: Ո՛վ Տէր, կասայ, աս ի՛նչ ծանր լուծ<sup>3</sup> տուած ունես

<sup>1</sup> Ճիտ, վիզ, պարանոց, — <sup>2</sup> Զուր բերելու երթալ: Փատի գնաց: — <sup>3</sup> Լուծ, երեք արշին երկար փայտ, որուն երկու ծայրերն զոյգ մը ծակեր կան: Հարօր, արօր. ա. Համձող, հինգ արշին երկայն ձող, որ արօրին գլխաւոր մասն կը կազմէ. բ. Մաճ, արօրին վարի ծայրէն անցած փայտ, որմէ երկրագործն կը բռնէ վարելու համար. գ. Առատան, ամուր փայտ սրածայր, արօրին վարի մասն, որ հոգն կը պատուէ. դ. Խոփ, հաստ սրածայր երկաթ, որ առատամին ծայրն անցուած է. ե. Թուր, այն ամուր փայտն, որ առատամն ու համձողն իրար հետ կը բռնէ. զ. Թուրազարքիչ մը փոքր, որ թուրին քով նոյն ծառայութիւնը կը մատուցանէ. է. Ապրաւ, թուչնոյ ձեւ փայտ, որ թուրին վերի ծայրն հաստատուած է ամրութեան համար. ը. Կանտրիւ, փայտէ օղակ, որ փոքր փոկով մը լծին անցած մէջտեղէն՝ կը կապուի արօրին հետ. թ. Մալի, բարակ փայտ մը, որ անցուած է արօրին ծայրէն կանտրիւն բռնելու համար. ժ. Սամիք, կեռ ամուր զոյգ փայտեր կամ երկաթներ, որոնք կ'անցնին լծին ծակերէն. եզան պարանոցն կապելու համար. ժա. Սամուտք, թեռ կամ կանեփ, որով սամիներուն վարի ճոթերն իրար կը կապեն. ժբ. Դնչանոց, ուռիէ գործուածք, որով եզներուն զնչերն կը կապեն կալն մէջ որան չուտելու համար. ժգ. Փոկ, կաշիէ ոլորուն հաստ չուան, որ լուծն կամին հետ կը կապէ կալին մէջ. ժդ. Մսկոշ, ձեռքի թեթեւ աման, կալի կամ տան մէջ աղբ կամ գառ(շիւղ) վերցընելու համար:

ինծի, դու ինծի խաալա էմէն չարէ: Մէ բանմ միտքն կինկնի. վեր կենայ, մէ շալվայմ մոխրով լիք լնայ ու տանի առէքէն<sup>1</sup> կախ կէնայ ու դուս թռչի դուռնինի: Աղջկն կու գայ ջրէն, ամիլիքն<sup>2</sup> վայ դնայ, կաշայ, աղբայն չիկայ. վեր կաշայ որ, առէքէն կախուած ա. ինչդ որ մէմ վեյ թռչի խածայ մոխիյն բացուի, լցուի աշուին, քորանայ, վայ կինկնի:

Պահմ ետեւ աղբայն կու գայ, կաշայ որ, քոյն քորացած ինկած ա, համայ ալի վախենայ: Ասոնք իրեք շուն ունէին, էնոնց որ կանչէին ո՛չ, ուր տեղ ընային, իրեք աւուր ճանապարհ ալ թող հեռու ընային, կիմանային, հասնէին, կու գային: Տղէն կանչայ էնոնց ու կասայ ամուր ձէնով .

“Օ՛չ, հասան,  
Գեալ ու պասան<sup>3</sup>,  
Զու տէյդ կերան,  
Մէջն խորիսան<sup>4</sup> :”

Ինչդ որ աս կասայ ու չի՝ կայծակի լման հասնին շնէյն, կու գան մօտն կակնին: Իզին կէնայ էնոնց, վրայ թափին, էն ուշապ աղջկան բզկի բզկի, փետ փետ կէնին ու լափին: Ասով էն գեղն էն ուշապ աղջկանմէ խալտեցաւ ու իրենք հանգիստ վայլեցին:

<sup>1</sup> Առէք, տան մը ձեղուն: Բ. նշանակ. բերնի քիմք: — <sup>2</sup> Ամիլիք. ջրոյ ամաններ: Ջրկրէչ. գործի. որով ամիլիքն կը վերցնեն ուսի վրայ: — <sup>3</sup> Պասան կամ կուտուն, փոքր շան անուն: — <sup>4</sup> Խորիս կամ խորիսան. եղէ, ալիւրէ եւ մեղրէ շինուած, զոր խմորեղէններու մէջ կը գնեն:

ԺԹ.

## Տ Ա Մ Ղ Ա Լ Ի Ի Ն Հ Է Ք Ե Ա Թ Ն

Մէ քաղքիմ մէջ կար մէ օրբեւարի կնիկմ, մէ մանչմ ունիր անունն Չագոյ. աս մանչս էմէն օր ոյսի կերթար, մէ բանմ բերէր ու էնով կապրէին: Ատ քաղքիք մէջ ալ մէ թագաւոյմ նատիր, իրեք աղջիկ ունիր, մանչ հէչ չունիր:

Մէ ցմ աս սղէն ալի կերթայ ոյսի: Ծամբէն էման ծարւի, էման ծարւի, ասելով չիլնի. կու գայ մէ հորիմ մօտ, համայ խորունկ ա, խմել չիկայնայ, մէջն ի վար նե մանու, կիջնու ջրին քով. տեսնու որ, մէ մէծ դեւմ նստած ա, մէկ ծնկին վրայ ունտ աղջիկմ կար, մէկալ ծնկին վրայ ալ մէ գորտմ. առջեւն ալ ինչոր ասես կար, արծաթ մի կասես, օսկի մի կասես, այմաս, ակինթ, գոհար ու էմէն բան, մարդու գլտով ալ լիքլիքն էր: Դեւն կասայ մանչուն. ինսանօղլի, իսոնց ոյն ունտ ա, լալ ջուղապս տու, դէ չէ քու գլուխդ ալ իտոնց պէս կերթայ: Տղէն միտք կէնայ միտք կէնայ ու կասայ. Ռունտն ի՞նչ իկայ, ինչոր մէ մարդում սրտին դուր կու գայ՝ ունտն էն ա: — Ի՛, լալ ջուղապ տուիր, տէ ուզա ինծիմէն, ինչ մուրատ որ կուզես՝ կու տամ: — Բու սաղութիւնդ կուզիմ, ուրիշ օչինչ: — Երբոր էման ա, էհէն քեզի իրեք հատ մաղ, կարմիր, ճերմակ, սեւ. ատով քու ուզածդ ճարես, մուրատիդ հասնես: Տղէն շորհակալ կրնի դեւին ու դուս կելնայ:

Դուս որ կեցնու՝ մէ մարդմ լաստ կու գայ իրեն, կասայ. իժով պապակած իմ, մէմալ ես իջնում հոյն, ջուլ խմիմ: Մի՛ իջնու, կասայ իրեն սղէն, թէ չէ չես

կայնայ դուս գալ: Ըն մարդն անկաճ էրաւ ոչ, նե մտաւ. էն տեղ դեւին թայս ջուղապ դարձնայ, կը մեւնի: Ինքն էն կէտուն կարմիր մազն դուս հանայ, կանչայ. Կարմիր ձի՛, մէմալ կաշայ որ, այեարլի ձիմ՝ աչուին կրակ ու բոց կտրած, կու գայ առջեւն կակնի. նստի վըէն ու հայտէ: Էման կերթար, էման կերթար որ, երկնուց. երեսէն հաւքի<sup>1</sup> ըման Ֆղար<sup>2</sup>. կու գայ, կու գայ, թագաւորին ղունղին մօտ կակնի. ոռնետ պաղչէմ ունիր բանձը որմով պատած: Ըն տղէն ձիով մէ երկու հեղ կերթայ կու գայ, կերթայ կու գայ, էման մէմ վեյ թռչի որ, որմէն նաս կանցնի, պաղչէն տակն ու վըայ կէնայ, ինչ որ մոլ<sup>3</sup> ու ծաղիկ կային՝ ջարդայ փչացնայ. տէր որ թագաւորին ծառէնին հասնին՝ ինքն ալի ամուր նէն թռչի որմէն, փախի կերթայ. մէ մարում<sup>4</sup> մօտ վար կիջնու, ձիուն ղամչիմ գայնու, կասայ. Հայտէ, դու գնա քու տեղդ. ինքն դաւաճոխն բէջքն<sup>5</sup> երկու կաքաւով կու գայ տունն վայ նստի:

Կանցնի երկու շարաթ, թագաւորին պաղն ալի առաջ կու գայ: Տղէն ոյսի կելնայ, չօլմ<sup>6</sup> որ կու գայ՝ կակնի, ճերմակ մազն դուս հանայ ու կու ճուայ. Ճերմակ ձի՛, Մէմալ կաշայ որ ճերմակ ձիմ սարքով կու գայ մօտն կակնի. հեծնու, կերթայ թագաւորին պաղն տակնուվըայ կէնայ առջի հեզու պէս. ինքն ալի դուս թռչի, փախի կու գայ աուուն: Մէկալ օյն ալ սեւ ձիով կու գայ ալի էման տակնուվըայ կէնայ ու փախի: Թագաւորին իրեք աղջիկնին ալ վերեւանց կաշէին էն պահուն. համայ պիծի

<sup>1</sup> Հաւք, անգղի նման թռչուն: — <sup>2</sup> Ֆղալ, սրանալ թռչնոց: —

<sup>3</sup> Մոլ փոքր մատաղ ծառեր: — <sup>4</sup> Մայրի, անտառ: — <sup>5</sup> Բէջք, ուսին ու թեւին մէջն: — <sup>6</sup> Չօլ, անպատ:

աղջիկն լաւ մտիկ կու տայ, տեսնու որ, ձիանն ջոկ ջոկ<sup>1</sup> էին ու վրէն նստող մարդն մէկմ էր:

Ասոր վրայ քիչմ վախտ կանցնի, աղջիկնին թագաւորին իրենց հոյն իրեք հատ խնձոր կու ղրկին, մէկն պոլ հասած, մէկն ուռնտ ղայտով<sup>2</sup> հասած, մէկն ալ պիծիկմ հասած էր: Թագաւոյն խնձոյնին կառնու, կիմանայ որ աղջիկնին կարգուիլ կուզին. մօտ կէնայ բոլոր մեծամեծնին, իշխաննին, փաշէնին: Մեծ աղջիկն ու միջնէկն էնոնցմէ մէմէ հատ կու հաւնին, իրենց նշալու կէնին. թագաւոյն մեծ հայսնիք կէնայ ու երկուսին ալ կարգայ: Պիծի աղջիկն հէշ մէկին ալ չի հաւնի, իման մնայ. թագաւոյն պոլ զօր կէնայ<sup>3</sup>, չինի: Հոյն կասայ. Դու այլ ժողովուրդ ունես, փիթուսին ալ կանչա, ես էնոնցմէ ճարիմ<sup>4</sup> կու մէկմ: Թագաւոյն մէկալ օյն իզին կէնայ, ինչքան ժողովուրդ ունիր քաղաքն, մօտ կէնայ, իրեն քով բերել կու տայ, մէմէկ մէմէկ անցնել կուտայ: Բորոյն անցան, էն վերջ մէ խեղճ թօբալ մարդմ եկաւ. աղջիկն ձեռքն էնոր վրայ դրաւ, ասաց. Իմ ուզածս աս ա, դուք ի՛նչ կուզէք՝ էրէք: Թագաւոյն ու փեսենին խնտան, համայ ի՛նչ էնէին, իրեն կամեցածն էն էր. մեծ ուրախութիւն ու քէՖ էրին ու էնոր ալ կարգեցին:

Օրին մէկն թշնամին եկաւ քաղաքն պատեց, շատ մարդիկ զարկին ու շատ թալան էրին ու գնացին, թագաւոյն օչին չիկայց էնել: Անցաւ երկու օր, ալի եկան. թագաւոյն ապեարն հանեց, փեսենին գլուխ դրած<sup>5</sup> դէմ ղրկեց. գնացին, համայ կզկալով<sup>6</sup>, պիծի փեսէն ալ հետուին, թօբալ<sup>6</sup> ձիմ հեծած՝ ետեւնուցէն կերթար:

<sup>1</sup> Ջոկ ջոկ, ջոկել, զանազան: — <sup>2</sup> Եղանակ: — <sup>3</sup> Ստիպել: — <sup>4</sup> Գտնել: — <sup>5</sup> Կզկալ, սաստիկ դողալ: — <sup>6</sup> Կաշ:

Մէկալ փեսենին ծիծաղէին էնոր վրէն ու կասէին. Հա, դու մէկդ պակաս էիր: Իրար որ մօտենան՝ մեծ կռիւմ կընի. էն պիծի փեսէն կերթայ թայնէմ<sup>1</sup> կանցնի, իրեն ձին ետ թողու, կարմիր մազն դուս հանայ, կասայ. Կարմիր ձի: Մէմալ կաշայ որ, էն իրեն առջի ձին եկաւ կակնեցաւ. նստի վրէն, սուրն կառնէ ու քշայ թշնամուն մէջնինի. էման ջայդայ, էման ջայդայ, էման ջայդայ որ, Աստուած<sup>2</sup> անփոյձ պէհայ, փիթունին սրպանայ, ցիրուցան կէնայ, հետ<sup>3</sup> դնայ ու քաղաքն խաւայ. կու գայ մէ մարում մօտ վար կիջնու, էն հրեղէն ձին իրեն տեղն կու զըկայ ու ինքն ալ մէ թօբալ ձիւմ նստի, կու գայ տունն: Մարդ չիմանայ թէ՛ էն հրեղէն ձիաւորն վով էր: Կանցնի մէ շարաթմ, ալի թշնամին կու գայ. դէմ կենին, պիծի փեսէն ալ էն զայտով ձերմակ ձի նստած էնոնց փիթունին զայնու, հետ դնայ կու: Տունն որ կու գայ, կինն էնոր կասայ. Բո՛ւ, դու մէ հնարքմ ունես, համայ ինծի ասել չիս: — Իմ հնարքս էն ա, որ մարդ չիգտայ. թագաւորին պաղէն զայ էնողն ես իմ, թշնամուն երկու հեղ հետ դնողն ես իմ, դեռ պոլ բան ալ էնիմ պիտի, ետեւ<sup>5</sup> կասիմ քեզի, հիմի չիմ ասե:

Մէ օյմալ թագաւորն կու հիւնդնայ: Հէքիմն կասայ թէ՛ Ասլանի<sup>6</sup> կաթն դեղ ա թագաւորին, խմայ օրայ՝ լաւնայ: Թագաւորին փեսենին ապքեարն առած՝ առաջ կանցնին ասլան ոյսալու, համայ ում<sup>7</sup> ափն ինկած էր: Մեծ մարուն որ մօտիկնան, ասլաննուն ձէնէն՝ սարեյն ու

<sup>1</sup> Մեկուսացած տեղ: — <sup>2</sup> Աստուած անփորձ պահէ, մեր գլուխ շքերէ: — <sup>3</sup> Հետ դնել. փակցնել: — <sup>4</sup> Բո, մայրիկ կամ տէր, միայն կողականը գործ կ'ածուի: — <sup>5</sup> Ետեւ. վերջէն: — <sup>6</sup> Ասլան, առիւծ: — <sup>7</sup> Ում ափն ընկած ա = բերանդ ընկած ա էնել. չես կրնար:

ձորեյն փլէին, ու իրենց<sup>1</sup> լեղեստանն<sup>2</sup> պատուեցան ու իման շուարած մնացին: Պիծի փեսէն ալի խալպաթ կանցնի թայնէն<sup>3</sup>, սեւ մազն դուս հանայ, ճուայ. Սեւ ձի՛: — Մէմալ կաշայ որ, ձին եկած կակնած ա, նստի վրէն ու հայտէ. դուս կելնայ, մէկմ երկու հեղ էնոնց բոլոյն պտուայ<sup>4</sup> կու, էնոնց կասայ. Դուք ատման նստերով՝ օջինչ չէք կայնալ էնել. ինչոր կասիմ՝ անկաճ կէնէք, ես կերթամ բերիմ, ասլանին փոսթն<sup>5</sup> ալ վրէն փատթած: — Հա՛, անկաճ կէնինք, ասեցին երդումով, դու գնա բե:

Ըն տղէն ձին դարձնու մարինինի. գնաց, գնաց, գնաց, մտաւ խուխուլիկ<sup>6</sup> տեղունք. մէ քորմ<sup>7</sup> րաստ եկաւ, տեսաւ որ ասլանն իրեն քոթիթներով<sup>8</sup> թազնած<sup>9</sup> ա: Հէչ չի վախենայ. Հէ, ասլան, ինծի աշա, կասայ, թող ինծի, որ ես քու կաթդ կթիմ ու քոթիթիդ ալ մորթիմ ու փոսթն առնեմ, ինծի պէտք են: Ըն կէտին ասլանն խօս կելնէ ու կասայ. Դսանօղլի, դժար բան ասիր, համայ ինչ էնիմ, քու ասածդ ընի թող. կաթս կթա, առ, քոթիթիս ալ մորթա՛, փոսթն ա՛ռ, համայ հոգայ ինծի մօտ չա՛, տա՛ր ինդուս մարինինի մորթա՛ ու ա՛ռ գնա, որ չի տեսնում: Մարդն շնորհակալ կընի ասլանին, կաթն կթայ, քոթիթին ալ կառնու կերթայ մէ թայնայ տեղմ մորթայ, քերթայ<sup>10</sup>, փոսթն հանայ, կաթի ամանին բոլոյն փատթայ.

<sup>1</sup> Լեղին պատուեցաւ — չոր չորցաւ, սաստիկ վախեցաւ:

<sup>2</sup> Յոգնակի կազմելու համար, ինչպէս կը տեսնուի, նին մասնիկն շատ կը գործածուի, երբեմն ալ աստան մասնիկն, ինչպէս՝. Զորեստանն եկան, գինեստանն լցին, իրենց հոգեստանն կորուսին՝ կաշեստանն հաստ էին: Շուշեստանն կարեցան պիրատի:

<sup>3</sup> Թայնայ, մէկդի: — <sup>4</sup> Պտուալ, դառնալ (անիւ): — <sup>5</sup> Փոստ, մորթ (այժու կամ ոչխարի): — <sup>6</sup> Խուխուլիկ, թաւ: — <sup>7</sup> Քոր, որջ. (արջու եւ գայլու բնակարան): — <sup>8</sup> Բոթիթ, կորիւն: — <sup>9</sup> Թազնիլ, ետեւի ստուղներուն վրայ նստիլ: — <sup>10</sup> Քերթել, մորթն հանել (գանակով):

կաթին երեսն քաշայ, ընու մէ վխտիկմ<sup>1</sup>, խփայ, նե ձգայ դաւաճոխն, ու տակի ջրոտն իման փոսթն փաթութած մէ խանիմ մէջ՝ կառնու կու գայ: Մարիէն դուս կեխայ, կու գայ մարդկանց մօտ, կասայ. Էհէն ասլանին կաթն բերի. չէք աւտայ, էհէն փոսթն ալ հետն ա. թէ իմ ուզածս կէնէք, ձեզի կու տամ, տանիք թագաւորին: — Ի՞նչ իկայ ուզածդ, ասեցին էհոնք: — Ծս կուզիմ որ, իմ տամդէս<sup>2</sup> ձեր մէջէն երկու հոգւոյ վըայ զայնում, կընի: — Լաւ, զարկ. համայ ի՞նչ գիտէին էհոնք թէ՛ ում զայնու պիտի: Էն ալ կեխայ առաջ թագաւորին մեծ փեւսին ցուց կուտայ, կասայ. բաց էրէք խոր կոնակն: Բաց որ էրին՝ տամդէն զարկաւ ամուր: Ետեւ միջնեկ փեւսին ցուց կու տայ, կասայ. Մէմալ խոր զայնում ու ալ հերիք ա: Ծատ կամչնան, համայ ի՞նչ էնէին, ճար չիկար, խօսք տուած ունէին: Էսոր կոնակն ալ բանան. տամդէն զայնու, կասայ. Տէ էհէն կաթն, առէք գնացէք:

Ինքն ալի կերթայ մարին մտնու, ձիէն վար կիջնու, կասայ. Դու ալի գնա քու տեղդ, ուրտեղէն որ եկար: Թորալ ձին նստի, կու գայ խալպաթ<sup>3</sup> տունն վայ նստի: Կիմանայ որ, թագաւորին դեղ չէ եկած<sup>4</sup> ասլանին կաթն. կերթայ թագաւորին մօտ կակնի, կասայ էնոր. Ծս ալ ասլանի կաթ բերած ունիմ, պալքի իմն դեղ ա, վերէ<sup>5</sup>, մէմ իմա՛. վխտիկն հանայ, ուն<sup>6</sup> կու տայ. էն ալ կառնու խմայ: Մէկալ օյն կաշին, թագաւորն լաւցած ա. պիծի փեւսին խապար կէնին, կու գայ: Թագաւորն կասայ. Ուզա՛ ինծիմէ, ինչ որ կուզես՝ կու տամ, թագաւորութեանս

<sup>1</sup> Վխտիկ, փայտեայ խփով փոքր աման: — <sup>2</sup> Տամդայ, կնիք: — <sup>3</sup> Խալպաթ, ծածուկ: — <sup>4</sup> Չէ եղած: — <sup>5</sup> Վերէ, վեր ել: — <sup>6</sup> Ուն տալ, գէտինինտալ. օտտուր, Օ ս տուէք. — ինծի, մեզ տուէք: Ենն անցաւ, անդին անցաւ. նաս անցաւ, ասդին անցաւ:

կէսն ալ ուզիս՝ կու տամ: — Ծս քեզիմէ օչինչ չիմ ուզե. սարայիդ մէջ երկու մարդ կան, իմ տամիդէս էնոնց վրէն ա, էնոնց դու ինծի տաս, իմ ուզածս աւ ա: Թագաւոյն կարմնայ՝, աշել կուտայ. տեսնու որ երկուսն ալ իրեն փեսենին ին. սիյտն ցաւեցաւ շատ, համայ ի՞նչ էնէր, խօսք տուած ունիր: Ընոնց պիծի փեսին ձեռքն տուաւ ու իշխան էրաւ էնոր փիթուկին վրայ իրեն տան մէջ: Ծտեւ Թագաւորին տեղն նստաւ ու մեծ իմաստութեամբ կառավարեց ժողովուրդն:

Ի.

## ԽԱԶ ՇԱԼԿՈՂՏՂԻՆ ՆԷՔԵԱԹՆ

Մէ գեղիմ մէջ կիրակի օյմ տէյտէյն քարոզ կու տայ, էման կասայ, էման կասայ, որ ժողովուրդն թոււոյ կենին. էման ճուայ, էման ճուայ, որ ժամին պատեյն ալ զողան, գիտես թէ՛ փլէին: Կասայ. «Որ կամի զըկնի իմ գալ, ուրասցի զանձն, առիցէ զխաչ իւր եւ եկիցէ զըկնի իմ»: Վոյտ որ կուզէք իմ ետեւէս գալ, ձեր անձն ուրացէք, ձեր խաչն առէք ու իմ ետեւէս եկէք, կը զուրցէ Զրիստոս Տէյ մէյ Մաթիոս սուրբ աւետարանին մէջ, 35 գլուխ, 140 համար: Ու ուրիշ պօլ բաներ ալ կասայ. համայ փիթուկն ալ զլուխնին քեաչայ՝ կապած ունէին, քարոզն ժամն մնաց:

Մինակ մէ տղէմ տասնուօխտ տարեկան, ժամէն կու գայ տունն, ո՛չ կուտայ, ո՛չ կու խմայ, ո՛չ ալ կու խօսայ: Հաղերն՝ կասին. Տղաս, դու ի՞նչ եղար, ի՞նչ իմացար: Օչ-

<sup>1</sup> Արմնալ, զարմանալ: — <sup>2</sup> Չէին իմանալ: — <sup>3</sup> Հաղեր, տան մարդիկն, սնեցիքն:

ինչ Ջուղայ չի տայ, սայթ կասայ. Դուք տէյտէրին քարոզն իմացաք ոչ թէ, անկճնիդ բուրդ ունէիք կոխած թէ: Ու կերթայ խաջմ շինել կու տայ իրեն չափ, ումու զին<sup>1</sup> զնայ ու ճամբայ կերայ: Կերթայ, կերթայ, կերթայ, հասնի մէ գեղմ, մութն<sup>2</sup> կինկնի. մէ տունմ մտնու, մուսաֆիր կընի, տէյտէրի տուն էր. վայ նստեցնուն, օտէն գոլին<sup>3</sup>, ոտու ին լուանան ու հացն վայ դնին: Կերակուրէն ետեւ պոլ կու խօսին, տէյտէյն կասայ. Ո՛րդիս, դու իտման մէնց<sup>4</sup> նոր ելած իս: — Երթամ պիտի ստեղծողես գտնում ու ինծի համար խելք ու միտք ուզիմ: — Ըմպայ ինծի համար ալ հայց թէ՛ ես իպքան օլուշաղե՛ մէջ իմ, իմ ճայս ինչ կընի: — Լան, Տէյտէյ, լան, ասիմ:

Էգուրնայ մութիմութ տղին ճամբին, պոլ ալ պաշայ<sup>5</sup> կու զնին: Տղէն շատկերթայ, քիչ կերթայ, շատ կերթայ, քիչ կերթայ հասնի մէ զուենաղմ<sup>7</sup>, մտնու տուն. Բարեւ, կասայ: — Ասծու բարին, կասին: Հուն տեսնու մէ ջաղե՛<sup>8</sup> պառաւ կնիկմ, կասայ. Մարիկ, չէնիւր աս իրկուն ինծի նե՛<sup>9</sup> առնուս: — Չէ, օրդի, չէ, ես քեզի օրման<sup>10</sup> նե առնում. օխտ հատ հարամի<sup>11</sup> զաւակ ունեմ, զան օրայ տունն, քեզի կուտին, քաւել<sup>12</sup> քեզի դրան ետեւ աւել կնիմ, կամ թէ քեզի ալրի սնտուկիս ակն<sup>13</sup> զնիմ ու պէհիմ: — Դու գիտես, օրման որ կամիս, էման էրա: Աման խօսէին, մէ մալ հարամիքն երեւցան, եկան նե թափեցան. նստան թունրին բողոյն ու քնթեյն վեր վեր քաշելով կասէին. Հողայ իսնի հոտ կու գայ, իսնի հոտ կու գայ: — Չէ, կասայ

1 Ումուզ, ուս: — 2 Մութն ընկնիլ, մթննալ: — 3 Գոլել, վաւել: Գուլ ա թունտիյն, օտէն՝ սենեակն տաք է, Ըօէ ա, սաստիկ տաք է (արեգակն): — 4 Մինակ: — 5 Օլուշաղ, բնասնիք: — 6 Պաշար գնել, պաշար տալ: — 7 Ղուենաղ, բնակարան: — 8 Ջաղե, վհուկ, ֆալճի: — 9 Նե առնուլ, ընդունիլ: — 10 Օ՛րման, ֆնչդէս: — 11 Հարամի, վայրենի, աւաղակ: — 12 Քաւել, բայց եթէ: — 13 Ակն, աչք, սնտուկի մէջ բաժանու թներ:

պառաւն, ոչինչ չկայ. դուք իսքան վախտ սարին քաշ<sup>1</sup> կու գաք, ինծի բանմ բերած ունիք. բանմ ալ կայ նէ, իմ ա, պատկեցէք վայն: Էգուրնայ կերին հարամիքն, կերթան իրենց տեղուներն. տղին ալ ճամբութ<sup>2</sup> դնայ պառաւն ու պաշարօջինչ չի տալ, կասայ. Ստեղծողիդ տեսնուս օրայ՝ ինծի համար ալ հայց թէ՛ իմ ճայս ինչ կրնի: — Գլխուս վրայ, կասայ ու կանցնի կերթայ:

Դսելմ կերթայ, կածէ<sup>3</sup> կած, ովխաներէ՛ կանցնի. մէ գետմ բաստ կու գայ, կարմունջէն անցնիր պիտի. մէ մեծ ձու կմ գլուխն դուս բունայ ջրին մէջէն, չի թողու անցնելու, կասայ. Ինսանօղլի, նոր կերթաս: — Ստեղծողիտ տեսնելու կերթամ: — Ը՛, ինծի համար ալ հայց թէ՛ ես որ իսա ջրիս մէջ գիշեր ու զօր՝ կենամ, իմ ճայս ինչ կրնի: — Լաւ կրնի, ասաց ու անցաւ գնաց:

Տղէն խաչն կռնակն՝ դէմ առաւ սարին. ձորէ՛ ձոր, սարէ՛ սար, քարէ՛ քար անօթք էնելով գնաց: Հեռու, հեռու աշեց որ ողներու՝ վրայ ինչրայ՝ որովայ՝ կային նստած թամբի՞ վրայ. վախեցաւ ոչ հէչ, գնաց էնոնց դէմ շտակ: Էնոնք որ ասոր տեսան. փսփսացին իրար. մէջ. Էհէն մեր ոյսն<sup>10</sup> եկաւ, կասայ մէկն: Մէկայն կասայ. Աս մեյն ա: Մեծն կասայ. Չէ, մենք ասքան վախտ ատման բան չունէաք տեսած, միք դիպել, գայ տեսնուկք. թէ՛ ինչ իկայ: Եկաւ, եկաւ, մօտեցաւ տղէն էնոնց. բարեւ ձեզ, ասաց: — Ասծոյ բարի՛ն, ասեցին էնոնք ալ, դու իտման նոր ելած իս: — Ստեղծողիս տեսնալու կերթամ ես: — Երթաս օրայ մեզի

<sup>1</sup> Բաշ գալ, պարսպ ման գալ: — <sup>2</sup> Ճամբել: — <sup>3</sup> կած. բուր: — <sup>4</sup> Օվխտ. հովիտ, սարերու վրայ ընդարձակ դուր տեղ: — <sup>5</sup> Գիշեր ցորեկ: — <sup>6</sup> Ող. սարերու գագաթունք: — <sup>7</sup> Տեսակ մը: — <sup>8</sup> Որովայ, մարդիկ: — <sup>9</sup> Թամբ. սարի գագաթը քիչ մը դուր տեղ: Պառակ. զառիվայր: Փուլ. փոխած գէշ տեղուանք: — <sup>10</sup> Ոյս. որս:

Համար ալ Հայց թէ՛ մենք իմանն ման գալով իսա սարկոյս, մեր ճայն ի՞նչ ընի պիտի: — Գլխուս վըայ, ասաց տղէն ունէն անցաւ գնաց:

Ետեւ գնաց. իրկուն որ եղաւ, մէ քարիմ տակն ուզեց շուգն<sup>1</sup> անցնի ու պառկի: Վեր աշեց որ, վերի գէն մէ կուսմ քարին գլուխն ճգնած ա, ասաց. Երթամ տեսնում թէ՛ էն ինչ կուս ա: (Աս կուսին՝ որ գիշեր ու զօր քարի վըայ ճգնած էր, Ասծուն<sup>2</sup>՝ օյն երկնքէն մէ խնծոյմ կու գար, կուտէր ու աղթք կէնէր. աս մանչուն եկած իրկունն երկու խնծոր զըկած ունիր Աստուած): Տղէն ելաւ մօտն, բարեւ տուին իրարու, վայ նստան. պոլ խորթեցին<sup>3</sup>: Պառկերու որ եղան, կուսն մէ խնծոյն Հանեց կիսեց<sup>4</sup>, մէ փառակն իրեն էրաւ ու մէկալ փառակն ալ տղին տուաւ, ասաց. Աստուած խնծի օյն մէ խնծոյմ զըկայ, աս իրկունն մէտեղ ուտինք: Ու մէկ խնծոյն պէհեց թէ՛ ուրիշ վախտ ուտայ: Էգուրնայ որ կեշին, տղին կասայ. Մէմ խնծի Համար ալ Հայց Ստեղծողին թէ՛ ես որ իսքան վախտ իսա քարիս վըայ ճգնած իմ, իմ ճայս ի՞նչ ընի պիտի: — Հաւ կընի, ասաց տղէն ու տտեց<sup>6</sup>:

Հեռու հեռու գնաց այլ, մէ վերով<sup>7</sup> սարիմ գագաթն երեւցաւ, գլուխն երկինքն էր կցած գիտես թէ. էն սարին գէմ առաւ, պոլ գնաց, գլուխն հասնէր ու չէր՝ մէկ մալ մէ ծէր հալեւորմ<sup>8</sup> դուս եկաւ, մեյ Տէյն, Աստուածն էր: Եկաւ եկաւ հասաւ իրեն մօտ. Բարեւ, տղէս, ասաց ծէյն, նոր կերթաս: — Ստեղծողն տես կերթամ: — Է՛, ի՞նչ բան կուզես: — Ես որ իմ գեղէս ելայ, եկայ գիշեյն մէ տեյ-

<sup>1</sup> Շուգն անցնիլ, շգանիլ. — հովանաւորուիլ: — <sup>2</sup> Ասծուն օյն, ամէն օր: — <sup>3</sup> խօսակցիլ: — <sup>4</sup> կիսել, կէս ընել: — <sup>5</sup> Տտեւ, քայլել: — <sup>6</sup> Վերով, բարձր: — <sup>7</sup> Հալեւոր, ալեւոր, ծերունի:

տերիմ տունն զուենաղ եղայ, ինձ ասաց թէ՛ Ես որ իսքան օրու շաղի՝ մէջ իմ (քսանուհինգ հոգի էին), իմ ճայս ի՞նչ պիտի ընի: — Ընոր ասա թէ՛ Օրման որ դու մինչուկ հիմի իտքան օրու շաղի մէջ լաւ ապրած էս ու ալի էման ապրես ու մուսաֆիր՝ լաւ ընդունես, բոլոր տնովդ տեղովդ արքայութիւն կերթաս:

— Մէկալ օյ եկայ մէ տեղմ, մէ պառաւմ կար, օխտ հատ հարամի՝ ունիր, իրեն մանչեյն էին, ինձ ասաց թէ՛ ասման իմ ճայս ի՞նչ ընի պիտի: — Ընոր ասա թէ՛ դու քանի որ ատ հարամիքդ մտող պէհիս ու մուսաֆիր լաւ չես ընդունիլ, քեզի իմ ձեռքս դժոխքի կրունկ՝ պիտի էնիմ:

— Կու գայի, ճամբէն մէ կարմունձէմ պիտի անց կէնայի. մէ մեծ ձուկմ գլուխն դուս բունեց ջրին մէջէն ինձի չէր. թողուլ, ասաց: Երթաս օրայ Ստեղծողիդ տեսնելու, ինձի համար ալ հայց թէ՛ ես որ իսա ջուրիս մէջ իմ, իմ ճայս ի՞նչ կընի: — Ընոր որ մօտիկնաս, ոչինչ ասես ոչ, իտա բրովդ մէմ դողողին՝ չափա՛ ու անցի գնա:

— Սարեյն օխտ հարամի դէմ՝ ելան, ինձի դիպան ոչ ու ասին. Ստեղծողիդ որ տեսնուս, մեզ համար ալ հայց թէ՛ մեր ճայն ի՞նչ պիտի ընի: — Ընոնց ասա թէ՛ Քանի որ դուք իտա սարեյդ ման կու գաք, գողութիւն կէնէք ու ատ ձեր գործէն չէք վազ՝ գալ, բոլորդ ալ դժոխք կերթաք:

— Եկայ տեղմ, քարի վերայ մէ կուսմ. ճգնած էր, ինձ ասաց թէ՛ Ես որ իսքան տարի իսա քարիս վերայ ճգնած

1 Օրուշաղ, ընտանիք: — 2 Մուսաֆիր, հիւր: — 3 Հարամի, վայրենի աւազակ: — 4 կրունկ, գրան վարի կողմն սեմեց վրայ նստած: — 5 Գողող, գլուխ, անտանց համար: Գաբ, բերան. Գունչ, երես, բերան: Ճանկ, ձեռք, անտանց համար. մարդու համար ալ կ'ըսուին անարդարար: — 6 Գէմ ելնել, հանդիպիլ: — 7 Հրատարիլ:

իմ, անօթի ծարաւ գիշեր ցորեկ աղօթք կէնիմ, իմ հալս ի՞նչ պիտի ընի: — Ընոր ասա թէ՛ դու որ էն մէկ խնծոյն պէհեցիր, (ես երկուս զրկած ունէի), ու ընկերոջդ չտուիր ոչ, իտա քարէդ վար ընկնիս, փարչայ դիքեայ ընիս:

Տղէն, իր էմէն ասածն ընալուն, շնորհակալ եղաւ Աստուան ու կամեցաւ ետ դառնալ: Է՛, տղէս, ասաց Աստուած, այ ուրիշ բան չունեն ասելու թէ: — Հա՛, ըմպայ ինծի համար ոչինչ ուղեցի ոչ. ես որ խման տխմար, յիմար իմ, կարդունք չեգտիմ, իմ ճայս ի՞նչ կընի: — Գնա՛, ասաց մեյ Տէյն, ընի քեզի էմէն բան: Ատ ասաց ու ինքն աներեւութ եղաւ. տղէն առաւ ալի իրեն իաչն ու եկած ճամբով հտ դարձաւ տունն գալու:

Եկաւ, եկաւ, եկաւ, մէ աւուր մէջ բովեցաւ էն կուսին մօտ, բարեւ ասաց: Կունն բարեւն ալ չկայցաւ առնուլ, մէկէն վար ինկաւ քարէն, զբբբբ զբբբբ, հազար փարչայ եղաւ, կորաւ: Վախեցաւ տղէն շատ. վար ինջաւ, ինկած տեղն ալ նէն աշեց ոչ ու գնաց տխուր իր ճամբէն:

Յորեկ եղաւ չեղաւ եկաւ հասաւ հարամից մօտ: Ընոնք մէկէն բուլուք՝ եղան ու ասին. Է՛հէն մեր մարդն եկաւ, աշինք մեզի համար ի՞նչ ունի ասելու: Բարեւ տուաւ տղէն էնոնց ու ասաց. Տէր որ՞ դուք իտա սարերէդ չիջուք, ձեր փեշակէն՝ վազ գաք ոչ ու գեղն երթաք տուն տեղ չընիք, բողոյդ ալ դժոխք թափիք, կասէր մեր Ստեղծողն: Ընոնք էն կէտին՝ տղին հետ իջան գեղն, տուն տեղ եզան ու բարի մարդիկ դուս եկան:

Կարմնջապին որ ինջան, էն մեծ ձուկն ալի գլուխն դուս բռնեց ջրէն ու ասաց. Է՛, Ստեղծողն ի՞նչ կասէր

<sup>1</sup> Բուլուք ընիլ, քովէ քով գալ ժողով: — <sup>2</sup> Տէր որ. միշտ որ: — <sup>3</sup> Փեշակ, արուեստ: — <sup>4</sup> Էն կէտին, իսկոյն:

ինձ համար: Տղէն հէչ խօսեցաւ ոչ, բրով մէ՛մ հազուց<sup>1</sup> դոր ոչին ու նէն անցաւ զնաց:

Իրկունն եկան հասան էն ջազի պառւին տունն. հարամիքն խելօքցած, էման որ պառաւն ալ արմնցաւ թէ՛ խոնք ինչ եղան մէկէն ի մէկ: Տղէն ասաց. Զո՛, Ստեղծողն քեզի համար խման կասէր. Ընոր ասա թէ՛ քեզի իմ ձեռօքս դժոխքի կրունկ պիտի էնիմ: Պառաւն ձեռուին վեր բռնէ երկինքն ի վեր ու կասայ. Տէր, քեզի փառք, ինձի քու ձեռօքդ էրա ու օրման որ կուզիս էման էրա: Պառաւն որ ասման փառք տուաւ Ասծուն, դժոխքն չե զնաց, ըմպայ<sup>2</sup> արքայութիւն:

Մէկալ օյն տղէն ալ ինկաւ ճանապարհ. եկաւ բովեցաւ<sup>2</sup> էն մեծ գեղն, տէյտէրին տունն ղունաղ եղաւ: Ընոր ասաց. Դու որ իտքան տարի իտքան օլուշաղով բարի ապրած իս, ալ իտման ապրիս, անովդ տեղովդ արքայութիւն կերթաս, կասէր Ստեղծողն: Տէյտէյն փառք տուաւ Ասծոյ ու ա՛լ աւելի բարի ապրեցաւ իրեն տնով:

Էգուրնայ մութիմութ<sup>4</sup> ելաւ տղէն, շնորհակալ եղաւ տէյտէյին ու ճանապարհ ինկաւ. մէ օրէն բովեցաւ իրեն գեղն: Նե մտաւ տունն վայ նստաւ. հաղնէյն խնդումով<sup>5</sup> էին շատ: Ձէնն ելաւ, բոլոյն եկան թափեցան գլուխն, գեղին մարդիկն, կնկտիքն ու տղաքն մօտ<sup>6</sup> եղան, եկան էմէն դիաց, վրէն զաղ<sup>7</sup> կու տային ու կասէին. Տեսնունք ինչ գիտայ մեր տմրշն<sup>8</sup>: Աւետրան, Գործոց, Աստուածաշունչ եւ ուրիշ պոլ զրքեր բերին, էն ալ բոլոյն ջուրի<sup>9</sup> պէս կարդաց ու տեսան որ գիր ալ գրէր առանց

<sup>1</sup> Հազուց, չափեց, զարկաւ: — <sup>2</sup> Հաղայ: — <sup>3</sup> Հասաւ: — <sup>4</sup> Շատ կանուխ: — <sup>5</sup> Ուրախ: — <sup>6</sup> Մօտ եղան, ժողովեցան: — <sup>7</sup> Չաղ կու տային, ծիծաղէին: — <sup>8</sup> Տմրշ, տխմար: — <sup>9</sup> Զուրի պէս կարդալ, վարժ կամ արագ կարդալ:

սորվել, արմնացան շատ ու մատուին՝ խածկով՝ գնացին  
իրենց տնեյն:

Ատ մանչն տուն տեղ եղաւ. Աստուած օրհնեց էնոր,  
բարի ապրեցաւ ու տնով գնաց արքայութիւն:

Տէր Աստուած յեզի էմէնքիս ալ արժանի էնայ.  
Ամէն:

---

1 Մատուին խածեցին, խիտ ամչան:

Վ Ե Ր Զ

## Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

	Երև-
Ա. Քուն ընդհերուն հեքեաթը . . . . .	5
Բ. Ղազնի աղին հեքեաթը . . . . .	7
Գ. Թագաւորին իրեք մանչերուն հեքեաթը . . . . .	15
Դ. Օձին Աւակն . . . . .	19
Ե. Վելապին հեքեաթն . . . . .	22
Զ. Օքոսւղ ազրոյն ու ազրկան հեքեաթն . . . . .	27
Է. Ծերունիկին հեքեաթն . . . . .	30
Ը. Օձին մէկու առակն . . . . .	33
Թ. Քուրա ազրկայ հեքեաթն . . . . .	35
Ժ. Ազուէտին հեքեաթն . . . . .	38
ԺԱ. Մէ այգլու հեքեաթս . . . . .	41
ԺԲ. Ճանասւղին հեքեաթն . . . . .	44
ԺԳ. Աստուած գէշ գատաստան կորել շի . . . . .	49
ԺԴ. Չէնկին ու փուխարոյ գրկիցնին . . . . .	51
ԺԵ. Թափակէօղին հեքեաթն . . . . .	57
ԺԶ. Թեփահոգուն հեքեաթն . . . . .	59
ԺԷ. Սըւրի քէօսին հեքեաթն . . . . .	64
ԺԸ. Ուշապ ազրկան հեքեաթն . . . . .	72
ԺԹ. Տամղալին հեքեաթն . . . . .	75
Ի. Խաչ շալիզ աղին հեքեաթն . . . . .	81











3 2044 018 831 362

This book should be returned to the Library on or before the last date stamped below.

A fine is incurred by retaining it beyond the specified time.

Please return promptly.

OCT 14 1975 H  
WIDENER  
FEB 23 2003  
CANCELLED

WIDENER  
SEP 12 1996  
BOOK DUE

WIDENER  
WIDENER  
SEP 10 2000  
BOOK DUE  
CANCELLED

